

84

7-68

ԱԼՖՅՆՍ ԳՕԳԻ


„Լ ՈՉՆԳՈՏ“

L, OBSTACLE

Կատակերգութիւն չորս արարւածով

Թարգմանից

Ս. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ



Թ Ի Ք Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ“ Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ

Քոստանդնուպոլիս քաղաքում

1891

1891

“2000-Арм СР”

1891

52860-1/2



58112-67 ч

Дозв. Ценз. Тифлисъ, 8 октября 1891 года
Тип. Ароръ Т. Я. Назарьянъ Барятинская улица

1891

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.



Small, faint handwritten marks or numbers at the bottom left of the page.

Գ Ե Ր Ա Կ Ա Տ Ա Ր Ն Ե Ր

ՀՕՐՆԻԻՍ (60 տարեկան).

ԴԻԴԻԷ ՂԱԼԷՆ (26 տարեկան).

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ (37 տարեկան).

ՍՕՏԿԵՕՐ (Գիղիէի անտառապահ).

ԿՕՓՓԻՆՕ (Տիրամիտի ծառայ).

ՄԱՐԶԻԶՈՒՀԻ ՂԱԼԷՆ (50 տարեկան).

ՄԱԴԸԼԷՆ ՐԷՄՕՆԴԻ (20 տարեկան).

ԷՍՏԷԼ (40 տարեկան).

ՆՕԷԼԻ (22 տարեկան).

ՄԱՅՐԱՊԵՏ.

ՄԱԳԷԼՕՆ (աղախին).

ԿՈՅՍ ՏՈՒՐԻԷՐ.

„ԽՈՉՆԳՈՏ“

ԳՐԹԻՎՈՒԹՅՈՒՆ Ը.

Անցքը պատահում է Նիցցայում, բարեկենդաններին, կիրակի ճաշից յետոյ: Բեմը ներկայացնում է Բէլվիլ հիւրանոցի մի դահլիճ, առաջին շարկում, որում բնակւում է Մարքիզուհի զ'Ալէն. հիւրանոցը գտնւում է անգլիացիներին ճեմելիք կոչւած պողոտայի վրայ: Բեմի ետեւը քարեայ պատշգամբ և ծաղկագարդ վերանդա, ուր կարելի է դնուլ երկու ուղղութեամբ դահլիճի լայնքով: Առաջին գործութեան միջոցում բաւական ժամանակ պատահանները ծածկւած են մեծ-մեծ արեկայներով (stores), որոնք փակում են գեղեցիկ և փառաւոր հորիզոնը: Խորքում, աջ կողմը մի դուռը, որ տանում է դէպի Մարքիզուհու սենեակը. բեմի առաջին մասում, ձախ կողմից, գտնւում է մուտքի դուռը: Վարագուրի բացելու միջոցին հիւրանոցի ծառայ Կոֆֆինօն, բեմի առջևի մասում սեղանի վրայ, նախաճաշ է (lunch) պատրաստում: Բեմը մթնկեկ և գով, չնայելով որ գուրքը փայլում է պայծառ արեւը:

ՏԵՍԻՎ Ա.

ՄԱՐԿԻՅՈՒՆ ԵՆ ԿՕՓՔԻՆՕ

Խոյ. (գաւառական գլխնոցով նստած՝ նայում է ապշաբար Կոֆֆինօին). Մո՛ւրբ Ասուածածին, այս ի՞նչեր են պատահում, ս. Կոֆֆինօ... և միթէ այս ամենը ճշմարիտ է:

Կոֆ. (չարունակում է պատրաստել սեղանը, մեծապանծ և չիմար ձևով). Այն, այնպէս ճշմարիտ է, ինչպէս կայսրութեան և հիւպատոսութեան պատմութիւնը:

Մաղ. (զարհուրած). Աայսրու... պատմութ... այդ
Լ՛նչ բան է, ասէք խնդրեմ:

Կօֆ. Այդ մի հիանալի բան է կարգալու, օրիորդ
Մաղէլօն, որը գտնուած է հիււրանոցի գրադարանում:
Երևակայեցէք, քսան և չորս հատոր, ամեն մէկը այս
մեծութեամբ... Եթէ սրտով ուզում էք, քանի որ այս-
տեղ՝ Նիցցայումն էք գտնուած...

Մաղ. Օ՛հ, չափազանց բարի էք, շատ շնորհակալ
եմ ձեզանից ս. Կօֆֆինո:

Կօֆ. Չարժէ, հոգիս, չարժէ... Արքան շնորհալի էք
այդ փոքրիկ գլխնոցով... Լ՛նչ չեմ անի ձեզ համար, հօ-
գիս չեմ խնայի: (մօտենում է). մօտաէլիացիքդ այդ տե-
սակ գլխնոց էք ծածկում:

Մաղ. (հեռացնելով տուանց ուղեւարու). Իսկ և իսկ.
դէ՛հ, Լ՛նչ էք կանգնել, նախաձայր պատրաստեցէք էլի:

Կօֆ. Ի՞նչ կայ շտապելու. ձիահանդէսը (cavalcade)
կը հասնի այստեղ ժամի չորսին միայն... Տօ կրգաք տես-
նելու ձեր տիրուհիներն հետ:

Մաղ. (ժգտելով). Այ, չեմ դայ, Մարքիզուհին ինձ
չէ հրաւիրել. իսկ մեր լուսամուտները, գէտէք որ հիւրա-
նոցի միւս ծայրին են...

Կօֆ. Ի՞նչ վնաս. եթէ այդպէս է, ուրեմն ես եմ
ձեզ հրաւիրում... բայց ոչ այստեղ... հապա պարտիզի մի
քունջուծ, որտեղից մենք կարողենք ամենը, ամեն բան
տեսնել:

Մաղ. (ծանաձուելով). Ես շատ էլ այդպէս հարցա-
սէք չեմ:

Կօֆ. Մեթէ, բայց շատակեր էք անպատճառ: Ճա-
տակեր էլ չէք. (խաղող է առաջարկում). խնդրեմ, դէ՛հ,
անուշ արէք այս մշկախնոցը:

Մաղ. (նայելով դէպի բեմի խորքը). Օ՛հ, ո՛չ, կա-
րող են վրայ հասնել...

Կօֆ. Միամիտ եղէք, վախելու բան չըկայ, որովհետեւ Մարքիզուհին տակաւին քնած է։

Մադ. Ի՛նչ, ի՛նչ, ի՛նչ, ի՛նչ սքանչելի մշկախազող է...

Կօֆ. Բերանը լաւ բացէք, Տէր-Աստուած, որ այդ մարգարաաշար կիճիները (quenotte) լաւ անենեմ, է՛։

Մադ. (հասկելով ողկոյզը). Այնտեղը, որ դուք ասում էք, մի այլ անուն էլ ունի. ի՛նչպէս է այդ։

Կօֆ. (ուսելով նոյնպէս մի և նոյն ողկոյզից). Շատ անուշ է, այնպէս չէ՞։

Մադ. Կասարեալ մեզը է մեզը։

Կօֆ. (բերանը կռած). Այդ օր տեղը։

Մադ. Այ, այն ապարանքը, որում Մարքիզուհին, իր ամուսնու հետ լիակաւած. այնպէս երկար ժամանակ բնակուեց։

Կօֆ. Ահա՛, յետոյ ասում էք թէ հարցասէր չէք։

Մադ. Օ՛հ, ես ինձ համար չեմ ուզում, հոսրա տիրուհուս և նրա դարմուհու (cousine) համար է հարցրածս, որոնց շատ կըզւարճացնէ այդ պատմութիւնը։

Կօֆ. Այնտեղը, այն կոչումն էր Վերի... Ահնի վրայ Վերի ապարանք։

Մադ. (վաճկելով անունը). Ահնի վրայ Վերի ապարանք։

Կօֆ. Այնտեղ, ջրի ափի մօտ, մի ձեմեղիք կար նշագրիներով հովանաւորած, ուր նրանք գրօսնում էին ժամերով, ամբողջ օրերով, միշտ միայնակ. որովհետեւ Մարքիզուհին ոչ ոքի օգնութիւն չէր ուզում իր հիւանդին պահելու և դարմանելու համար։

Մադ. Մի՛թէ նա չար էր. հարցս նրա համար է, որ երբ մարդս այդ դրութեան մէջ է...

Կօֆ. Չար չէր, եթէ կուզէք. բայց մի անասկ ծածկումիտ էր, այնպէս որ ամբողջ օրը երկու խօսք չէր ատի... բացի այս, մարդ ի՛նչ կարող է առաջուց իմանալ,

[Թէ իրենց սենեակում...]

Մազ. Շատ ճշմարիտ էք տառւմ, որ մարդ չէ կարող իմանալ [Թէ սենեակում ինչ կրպատասէր... (ծիծաղում է):

Կօֆ. (ծիծաղում է ճոշնալէս). Տեսն՞ում էք, այդ Մօծալէլիքի գլխնոցները... հը այդ ո՞ւր էք գնում:

Մազ. (կանգնելով). Պէտք է շուտով գնամ տուն, տիկի՞նքերը արդէն վերադառնում են:

Կօֆ. Մէք վախի բողբոլիւն... չէ՞ որ ձեր տիրուհիները գնացել են երեկոյեան ժամին աղօթք անելու... այն քահանան պէտք է քարոզի... Բ՛նչպէս է կոչուում նա, անունը մոռացայ... այ, այն իշանաւոր կապուցիքը, որ ամեն բարեկենդանին գալիս է քարոզելու Նիցցայում:

Մազէ. Այդ միւսնոյն է, ես գնում եմ. (վազում է գէպի դուռը):

Կօֆ. (գրկելով նրան մէջքից). Հապա պատմու՞թեանս վերջը չէք ուզում լսել: (դուռը ուժգնապէս բացում է):

ՏԵՍԻՒ, Բ.

Իրանք եւ Հօրնիւ. [մտորոքը եւ մագերը պիտանն, ամբողջ հագուստը գորշագոյն]:

Հօրն. (նայելով գէպի ներս բացած դռան ճակատին). Կարծես երկրորդ համարը լինի այս. չէ՞մ սխալուում արդեօք:

Կօֆ. Հէնց այդ է. ումն էք ուզում, պարոն:

Մազ. (արդէն անցնում է միջանցքը և ծայրում է). Յանսււթիւն, պարոն Կօֆֆի՛նօ:

Կօֆ. Սպասեցէք մի փոքր էլ. բան ունեմ տանելու ձեզ... (վազում է նրա չեաւից):

Հօրն. (բռնում է [Թւից և կիսաշրջան պտտեցնում]). Թօռլ աւէք, պարոն... նախ այս աչքետոմսը հասցրէք մարքիզուհի դ'Ալէնին... Եթէ չեմ սխալուում, նրա մօտ էք ծառայում դուք, կարծեմ:

Կօֆ. Աչ, պարոն, ես այն յարկումն եմ ծառայում միայն... այս է, ահա, մարքիզուհու բնակարանում նախաճաշ եմ պատրաստում (ցոյց տալով սեղանը). բայց և այնպէս, եթէ կամենում էք, աւէք ձեր այցետոմսը...

Հօրն. (տալով այցետոմսը). Ահա՛ աւէք:

Կօֆ. (դէպի վեր մի քայլ է անում, կանգնում է և այցետոմսը լաւ դիտելուց յետոյ). Մէ, ես ձեզ վաղուց եմ ճանաչում. փոքրիկ Գիզիէի գաստիարակ՝ պարոն Հօրնիւան էք... Մինչև մարքիզի վախճանելը դուք տարէնը մի կամ երկու անգամ գալիս էիք ասարանքը ձեր աշակերտի հետ միասին: Մեթէ չէք յիշում ինձ, պարոն. (կանգնում է անշարժ):

Հօրն. Հաւատացէք, որ չեմ յիշում:

Կօֆ. Յիշում էք, հայրս նաւակալար էր այնպեղ՝ Վիրի-Սէնի վրայ. անունը Կօֆֆինո:

Հօրն. Այո՛, ինչպէս չէ. (մի կողմը). գարմանալի բան, այնպիսի անուն է տալիս, որ բոլորովին չեմ յիշում: (Ներսան, բարձր ձայնով). Շատ ժամանակ է ուրեմն ինչ դուք Բէլլիւ հիւրանոցումն էք:

Կօֆ. Այո՛ շատ ժամանակ է: Անշուշտ, ձեզ էլ լաւ յայտնի պէտք է լինի, որ նաւակալարութեամբ մարդս բան չէ դառնում... ինչ և է, երևի շատ եմ փոխել, որ այլ ևս չէք յիշում ինձ: Արդէն երկու օր է ինչ Մարքիզուհին իջևանեց այստեղ: Ամեն կերպ աշխատեցի, որ ճանաչի ինձ, բայց...

Հօրն. Գէ՛հ լաւ, եթէ օր էլ չէ ճանաչում, ի՞նչի ես իզուր աշխատում դուն էլ: Նա շատ դժբախտ էր այն ժամանակ Վիրիում. այն յիշատակները չեն կարող մարքիզուհուն շատ դարձացնել:

ՏԵՍԻՒ, Գ:

Կրանք եւ Մարքիզուհին (խորքում, ըստալով իր սենեակի դուռը).

Մարքիզ. Ո՞վ կայ այդտեղ... մի ժամից աւել է, որ

քչիչոց եմ լսում... (Նկատելով Հօրնիւսին, մօտենում է դէպի նա և ձեռքը մեկնում): Ա՛ա, պարոն Հօրնիւս, վերջապէս... Ձեզ տեսնելու համար անպատճառ մարդս Նիցցա պէտք է գայ: (Սեղմում է նրա ձեռքը մտերմաբար):

Կօֆ. (կիսաձայն Մարքիոյուհուն). Տե՛սաք, տիրուհի... ամենը պատրաստ է:

Մարքիոյ. Ի՞նչն է պատրաստ, ի՞նչ ես ասում:

Կօֆ. Նախաձայր... որ պատուիրեցիք ինձ պատրաստել...

Մարքիոյ. Այո՛, տեսայ, լաւ է... դէ՛հ, գնա. (Կօֆ. անշարժ մնում է). դէ՛հ, գնա՛, ասում եմ քեզ:

Կօֆ. (նեղացած, սր չրճանացեցին իրեն դարձեալ). Եստ անպիտան բան է, որ մարդ այս աստիճան անձանաչելի է դառնում: (Գուրս է գնում):

ՏԵՍԻՒ, Գ.

Հօրնիւս և Մարքիոյուհի.

Մարքիոյ. Բոայ ձեզ վերջապէս, այ՛ դուք չարածձի Հօրն. (Ժպտելով). Այո իրաւունք ունէք ասելու եսամօղ, չարածձի անւանել: Բայց դուք էլ պակաս մեղաւոր չէք, Գիզիէն և դուք շատ էք երես տւել ինձ: Քարանձաւումս էլ խիտ հանգիստ եմ... ընկերներս—իմ դրքերը, նաւակս և այն զգացմունքը, որ պարտաւորու թիւնս վերջացել է...

Մարքիոյ. (ուրախ) Այո՛, և լաւ էք կատարել սիրելի Հօրնիւս: Այնպիսի շնորհալի, ազնիւ, հոգով մտքով կազմ դաւակ ունենալովս, բարեկամ, միմիայն ձեզ եմ պարտական. քսան վեց տարեկան է արդէն... քսան վեց տարի է անցել և ո՛չ մի շիտթ կամ մի այլ բան չէ կրկացել... նայւածքի մէջ ո՛չ մի վարանմունք

նկատելի չէ... (ձայնը ցածր սցնելով). Արանով ուզում եմ
ասել, որ էլ չեմ վախում:

Հօրն. Վախել, բայց ի՞նչից էք վախում դուք:

Մարքիզ. Ո՛հ, գիտեմ, շատ լաւ գիտեմ, որ երբէք
համակարծիք չենք եղել մենք այդ հարցի վերաբեր-
մամբ. սակայն մահի չափ սարսափեցնում էր ինձ հօր
հիւանդութեան ժառանգական լինելը:

Հօրն. Սակայն, դուք...

Մարքիզ. Այն ահիս պատճառով ամեն բան զոհել
եմ. մինչև անգամ թողեցի որդուս որ շարունակ տասը
տարի ձեզ մօտ ապրի, մեծանայ, աշխատեցի ամեն կերպ
հեռացնել նրանից բոլոր տհաճութիւները. վտանգաւոր
տպաւորութիւնները. այնպէս որ մինչև այժմ էլ չըզխտէ
թէ իր հայրը ինչ հիւանդութիւն ունէր և չի էլ իմա-
նայ երբէք...

Հօրն. Սթէ ինձ հարցնէք, չափազանց են այդ նա-
խազգուշութիւնները, բայց շատ հաւանական է, որ դուք
կրտուենք ունէք այդպէս վարւելու... մայրերը միշտ ի-
րաւացի են:

Մարքիզ. Թողնենք այդ սև ու մութ անցեալը և
գրազենք միայն նշանադրութեան պատրաստութիւնով,
ինչպէս որ գրել էի ձեզ վերջին նամակումս: Կիւրիէն շուտով
պէտք է պահել: Մենք Նիցցա եկանք ուրախ ժամա-
նակ անցկացնելու մեր ջահիլ հարսնացուի և նրա ազ-
գականների հետ. դուք էլ գիտէք, որ գւարձութիւնները
հազւագիւտ են Մօնպէլիէում:

Հօրն. (ժպտելով). Շատ ճշմարիտ էք ասում:

Մարքիզ. Ասալով ծովի վրայ կատարւելիք բարի-
կենդանիների գւարձութիւնները խիստ հրապուրիչ են մեր
ջահիլների համար. ես էլ ուզեցի մի փոքր օգտուել ձեր
ներկայութիւնից, սիրելի Հօրնիւս, ցոյց տալով ձեզ մեր
փոքրիկ հարսնացուն և մի շատ կարևոր հարցի մասին

խորհրդակցել. այսինքն տակաւին բան չեմ յայտնել նրա
ընտանիքին, վնաս եմ արել արդեօք:

Հօրն. Ամենեկին, ընդհակառակն... Թնչ սէտք է
յայտնէիք, քանի որ բան չըկայ... Թւախանք յայտնի է
հօ...:

Մարքիզ. Ի հարկէ, յայտնի է:

Հօրն. Նախ սէտք էր յայտնէիք ձեր օրդուն այն,
ինչ որ նրանից թաքցնում էք:

Մարքիզ. Ճշմարիտ էք ստում...:

Հօրն. Չընայելով՝ օր գաւառացիք միշտ չեն հաւա-
տում Պարիզից եկածներին. առանց այս էլ շատ հեշտ է
ամուսնութիւնը խանգարել:

Մարքիզ. Ո՛հ, Աստուած չանէ. Թնչ կը լինի խեղճ
որդու դրութիւնն այն ժամանակ...:

Հօրն. Աւրեմն խիտ օրասնաւել է նա. դժուար է
արդ կերքը...:

Մարքիզ. Է՛լ մի ասէք, բարեկամ:

Հօրն. Աւրեմն այդպէս... այն բաները տակաւին չեն
վերջացել... Spirat adhuc amor.

Մարքիզ. Ի՞նչ բաներ, Թնչեր էք ստում:

Հօրն. (ժպտելով՝ մի փոքր ամաչած). Ներողութիւն
տիկին, անմիտ բան էր ստածս... Օրիորդը Վօնպելիէկիցն
է, այնպէս չէ:

Մարքիզ. Այն, լեչպէս գիտէք՝ Բիդիէն, երբ դուրս
եկաւ ծառայութիւնից, մտադրել էր երկրագործութեամբ
պարապել: Հարաւը, իր դաստիարակի հայրենիքը, շատ
էր հրապուրում նրան... Ես էլ ամուսնիս մահից վետոյ
Վիլին վաճառեցի, և շատ ուրախ էի եթէ մի բան կա-
րող էր մեզ տեղահան անել, գաղթեցնել, հեռացնել
մեզանից տխուր լիշատակները... Այս պատճառով է
դնեցի Վօլօմբիէրի կալւածքը, որին կից մի այլ կալւած-
քում Բիդիէն ծանօթացաւ օրիորդ Բէմօնդու հետ:

Հօրն. Բէմօճդի... Մօծագէլիէնում եղած ժամանակս
ես ձանձաղում էի այդ անուհով ասեճակալներս:

Մարքիզ. Այո՛, ճշմարիտ է, նրա զարմին (cousin),
խնամակալը—որովհետև Մաղբլէնի ծնողները վաղուց է
մեռել են—բարձրագոյն ասեանի խորհրդակիանն է: Մի
շատ բարեկիբթ, օակաւին երիտասարդ...

Հօրն. Չահլ է ասում էք... հապա ինչի չէ պակ-
ւում այն որբի հետ. ուրեմն դաւաճանում է խնամակալ-
ների տւանդութեանը:

Մարքիզ. Ամուսնացած էք... և շատ ժամանակ չէ
լինչ նրա կինը մեռաւ: հէնց այն էր պատճառը, որ մեր
հարսանիքը այսպէս երկար ժամանակ չետաձգուեց: Այն
տեղ կայ և նրա քոյր կատէլը. երևակայեցէք մի քառա-
սուն տարեկան գունդ—կոտր, շաղկիկ, նստած աղջիկ:
տիկնի նման զարդարուն, աղօթասէր, շատակեր: Շարու-
նակ հիացման մէջ է չիմ խորհրդակիան եղբայրս՝ անդա-
դար կրկնելով և որին շատ է քսմուում, ինչպէս կատուն
իր տիրոջը: Տակաւին սպասում է խեղճը, թէ մի ինչ որ
նէմօրէն պէտք է դրա վրայ պակելի:

Հօրն. Հապա հարսնացուն ինչպէս է:

Մարքիզ. Հիանալի է, երաժշտութիւն սիրող, գաւա-
ռացու չէ նմանում բոլորովին և ոչ էլ շատ պարկե-
ցու,—Աստուած ազատէ այդ սարսափելի Պարիզ-նիւ-
օթիկներից—դաստիարակել է Կասպյա քոյրերի մօտ:

Հօրն. Այո՛, գիտեմ. արիստօկրատներին կուսանոցում:

Մարքիզ. Իսկ և իսկ մի կատարեալ ջահել աղջիկ.
մինչև այժմս գաղտնիք է պահել, որ այսօր կամ վաղը,
շուտով տիկին պէտք է լինի:

Հօրն. Ուզում էք ասել, որ նա սիրում է, էլի:

Մարքիզ. Աւելի քան թէ Ինդիէն, հաւատացէք: Մի
կատարեալ պտուական աղջիկ է, ասում եմ ձեզ... Այն
էլ կարող եմ հաստատել, որ նրան շատ շատ ուզեցողներ

կան, նամանաւանդ որ շնորհալի է վերին աստիճանի և լաւ օժիտ ունի, բայց ամենից աւելի որդու՝ Գիդիէին է գերադասել:

Հօրն. Այդ արդէն ցոյց է տալիս, որ լաւ ճաշակ ունի օրիորդը:

Մարքիդ. Ի՜նչ երկարեմ խօսքս, ինքներդ էլ շուտով կը տեսնէք նրան. որովհետև այն արիւնները եկեղեցուց ուղղակի մեզ մօտ պէտք է գան:

Հօրն. Գիդիէն էլ է ժամ գնացել միթէ:

Մարքիդ. (ժպտելով). Ա՜չ... տակաւին այդպիսի բաներ չէ անում. այժմ նա զբաղւած է իր վաղեմի ընկեր սպաների հետ մի ձիահանդէս կազմելովը... շուտով նրանք կարշաւեն մեր սրատուհանների առաջ այս մտորցով: Այ յաջող հանգամանք, որում կարող է ցոյց տալ բարեկենդանի հազօտօտ իր աւազաւ: Հարանայուն, երեւակայում եմ նրան, սրբան ուրախ կըլինի...

ՏԵՍԻ, Ե.

Նրանք, Էստել, Մաղըլն և խորհրդակախը.

Էստել. (բացում է դուռը կիսաշափ, ներս չէ մտնում. հազնւած է գաւառացու ճաշակով, խօսում է տեղական առօգանութեամբ աշխատելով նմանացներ Պարիզեան արտասանութեան). Մենք ենք, մենք... Արդէն ժամանակ է, գդակներս մի կողմը դնենք և վաթ իջնենք:

Մարքիդ. Ասէ՛ք, խնդրեմ, լաւ քարոզ էք, արդեօք: Էստել. Աքանչելի... միայն թէ այդ կապուցի՛նը, այդ այդ... գլուխ տարաւ էլի. մի կողմիցն էլ շօքն էք նեղացնում:

Մարքիդ. Աւրեմն մի քիչ օշորակ խմեցէք, կըհովանաք մտքն ինչ:

Էստել. (մտնելով ներս նկատում է սեղանը սրտա-

բաստ)։ Տէր Աստուած, այս ինչ լաւ լաւ բաներ են, անսնորդ չի կարող ինքն իրեն դապել, այնչափ հրապուրել է սեղանը։ Թոյլ կը տանք, արդեօք, տիկին։ (բաժակը լցնում է նարնջաջրով)։

Մարթիլ. Համեցէք ներս, Մազրէին, սա պարոն Հօրնիւսն է։

Մաղ. (ներս գալով)։ Ահ, պարոն Հօրնիւսն եկել է արդէն. (ձեռք տալով նրան). պարոն Իկոբէին շատ բան է պատմել ինձ ձեր մասին։

Հօրն. (գլուխ տալով). Սրիորդ, ես...

Խորհրդ. (արդէն մօտեցած, սառք և հպարտ կերպով)։ Անկասկած, դուք սրանց վաղեմի դատարարակն էք, պարոն։

Մարթիլ. Սա մեր բարեկամն է, մեր հաւատարիմ բարեկամը. (ծանօթացնելով). խնդրեմ ծանօթ լինէք, պարոն Հօրնիւս, պարոն Կոտախլան (երկուսն էլ գլուխ են ապլիս իրար)։

Խտէլ. (մերձենալով մի բաժակ օշարակ ձեռքին). Ո՛հ, պարոն դատարարակ, համարձակու՞մ եմ շնորհաւորել, ձեր աշակերտը մեծ պատիւ է բերում ձեզ, ինչպէս որ իմ եղբայր խորհրդական ասում էր...

Խորհրդ. (ընդհատելով նրան կոպտաբար). Մե՞նձ էք այտուղ, սիրելիս, ես պէտք է վեր բարձրանամ։

Խտէլ. (չիտթւած). Ես էլ եմ գնում, ես էլ գրակս շատ է նեղացնում. (Մազրէինին). հապա դուն, քոյրիկս, չե՞ս գայ։

Մաղ. (վերցնելով դրակը). Ահա գրակս, գարմի, տարէք հետներդ շատ եմ վախում, որ չըլինի թէ ձիահանդէսը անցնէ այտուղից բացակայութեան միջոցին։ (մտախօսուելով). Ո՛հ, Տէր Աստուած, քիչ մնաց մոռանալի... Ապասեցէք, մի փոքր, գարմի, երեւակայեցէք, տիկին, մի անվախել բան արի այժմ... ձանաչում էք

այն գեղեցիկ ջահել աղջկան, որ մեր դիմացի ճաշտրանում իր հօր հետ միասին ճաշում է:

Խառել. Ի հարկէ, ճանաչում եմ, Մօնպէլիացի Մէրէսն է այն...

Մարքիզ. Այո, ճանաչում եմ այն ջահել աղջկան ինչ է պատահել, որ...

Մադ. Խնդրեց թող տաք իրեն այնտեղ (ցոյց է տալիս պատշգամբը) նստել ձիահանդէսը տեսնելու:

Մարքիզ. Ուրախութեամբ... թող իր հօրն էլ հետք բերի:

Մադ. Ա՛չ հայրը հարկաւոր չէ, նա այնպիսի մի վայրենին է, որ ոչ ոքի հետ չէ տեսնում:

Մարքիզ. Շատ լաւ, աղջիկս, ձեր բարեկամուհունք բերէք:

Մադ. (խորհրդակցանին). Հասկնցաք հօ, դարմի... Այն Մէրէսն է, որ մեր բնակած յարկի 24-րդ համարումն է բնակւում: Օրիորդ Նօէլին կիջնի այստեղ դարմուհի կստէլի հետ, (ծաղրելով) քանի որ ձեր արժանապատուութեանը չէ կարելի...

Խորհրդակցան, խոստովանում եմ, այդ տեսակ դիմակահանդէսները ինձ բոլորովին չեն գլարձացնում. նոյն իսկ դարմանում եմ, որ Կիդիէի պէս լուրջ երիտասարդը...

Խառել. Ես համաձայն եմ խորհրդակցան եղբորս կարծիքին:

Մադ. Խեղճերի համար է անում, նա չէր կարող մերժել այդ:

Մարքիզ. Պէտք է ասել և այն, որ այդ բանում ամբողջ գունդն է մասնակցում:

Հօրն. Քսան վեց տարեկան ջահիլը այդպիսի դարձութիւններ շատ կանի, պարոն Ասատիլլան:

Խորհրդ. (գլուխ տալով). Ամեն մարդ իր կարծիքն ունի:

Մադ. Օհ, ինչ անսաշն էք, փոքր ինչ զգոյշ եղէք,
է. քիչ մնաց գդակիս փետուրները կտորտէիք:

Խորհր. Մի վախէք, զարմուհիկս, ձեր ասածները
ինձ գամար բոլորն էլ անգնահատելի են...

Հօրն. (ինքն իրեն մոռանում է). Ահ, ըհ, ըհ, ինչ անուշախօսն է շունը...

ՏԵՍԻԼ Զ.

Մարքիզուհի, Մադրլէն, Հօրնիս.

Մադրլ. (Մարքիզուհուն). Հիանալի աղջիկ է օրիորդ
Նօէլլի Մէրէսը, այ, շուտով ինքներդ էլ կբանտէք:

Մարքիզ. Բայց ինձ թւում է նա մի փոքր շատախօս է... Ճաշի ժամանակ նրա լեզուն ջրադացի շաշանակի պէս անդադար շարժւում է:

Մադրլ. Արովհետեւ երկու մարդու լիովանակ է խօսում նա. հայրը մի խօսք անգամ չէ ասում երբէք. նա էլ ինձ պէս շուտով պէտք է հարս լինի: Զէք կարող երեւակայել թէ սրբան ուրախ է, էլ ոտի վրայ չէ կանգնում ուրախութիւնից:

Հօրն. (բարեսրտաբար ժպտելով). Իսկ դ՞ուք, օրիորդ, իբր թէ ուրախ չէք, հմ...

Մադրլ. Այո՛, բայց ես նրա պէս բաներ չեմ անում:

Մարքիզ. Այո, սակայն դուք էլ, մեր բարեկամ Հօրնիլոսի պէս, հարաւումն էք ծնւել, արեւատ երկրում:

Մադրլ. Հէնց այդ արատճառով հարաւի ջերմութիւնը մէջս եմ կրում, տիկին:

Մարքիզ. (ժպտելով). Ասում են, որ այդպիսի հարաւը շատ սարսափելի է, աղաւնեակս:

Մադրլ. շատ հաւանական է. (շուտ-շուտ գնում է դէպի բեմի խորքը). Թոյլ կըստք. տիկին, արեւալները չես քաշել, արդէն աղմուկ, երաժշտութեան ձայներ են լսւում:

Մարքիզ. Օոօ, դեռ շատ հեռու է այդ ամենը. սիրելիս... պէտք է գիտենաք, որ նրանք պէտք է այցելեն, մինչև այստեղ գայը, նահանգապետին, զօրավարին...

Մադըլ. Ճշմարիտ էք առում, մենք էլի ժամանակ ունինք...

Մարքիզ. Դէհ, մի եկէք մօտս նստեցէք մի տեսնեմ... Ձեզ երբէք չըկարողացայ... սակայն մի քիչ էլ իմ աղջիկն էք, այն ինչ ամենքն էլ ձեռքիցս ուզում են խլել քեզ (նստեցնում է իր մօտ, փաղաքշելով):

Հօրն. Օրիորդ Մադըլէն, Կապոյտ-քոյրերի մայրապետը դարձեալ սրբուհի-Մարիամն է:

Մադըլ. (ոտի ելնելով, շատ զարմացած). Այն, պ. Հօրնիւս, դարձեալ նա է մայրապետը:

Մարքիզ. (սուտ նեղանալով). Ահա չէ՞ր ասում... չեմ կարողանում մի ըստէ մօտս նստած պահել սրան:

Մադ. Ա՛խ, ներեցէք խնդրեմ, տիկին. բայց ես զարմանում եմ թէ պարոն Հօրնիւսը իրտեղից է ճանաչում մեր մենաստանը...

Հօրն. Բոլորը գիտեմ, սխաժ Մեծերի Բագից, սուրբ Սէսիլի ասպարը, բոլոր անկիւնները, մինչև հին վանքը, որտեղի իմ ժամանակ մի ածու էլ կար վարդենիներով զարգարւած:

Մադ. Ածուն էլի այնտեղն է... Բայց զարմանալի է դարձեալ թէ դուք իրտեղից գիտէք:

Հօրն. Ողջունեցէք, ուրեմն, ուսումնարանների հին տեսչին, որ ձեր առջևն է կանգնած:

Մարքիզ. Եւ որ իր ապագան դոհաբերեց ամբողջովին միմիայն Դիգիէի կրթութեանը. այ ինչպիսի բարեկամ է սա մեզ համար:

Հօրն. Այդ բանի համար ես բաւական լաւ վարձատրւած եմ, տիկին:

Մարքիզ. Աչ բաւականին, սիրելի Հօրնիւս, ոչ այն-
քան:

Մադ. Բայց գարմանալի է, որ ձեզ երբէք չեմ տե-
սել:

Հօրն. Արովհետեւ շատ ծեր եմ, աղջիկս, այնքան
ծեր, որքան հին վանքի դարևոր կամարները:

Մադ. Արովհետեւ ինձ շատ փոքր ժամանակս տա-
րին այնտեղ և միայն անցեալ տարի դուրս եկայ վան-
քից: Ա՛հ սիրելի մենաստան... այլ ևս չեմ տեսնում քո
ճաղկազարդ տօներդ, քոյրերի սպիտակ վզնոց-կրծկալնե-
րը, ուր ասուէն և մխիթարութիւն էին դանում մեր
մանկական վիշտերը, այն է խկապէս իմ ընտանիքը:
Նոյն խօսի այսօր, եթէ ծանրապէս վշտագնեմ, հաւատա-
ցած եմ, որ խկոյն և եթ այնտեղ կապաստանեմ:

Մարքիզ. Ա՛հ, ինչ չարն էք (բռնելով նրա ձեռքը).
Բայց չէ որ շուտով ընտանիք պէտք է կազմէք:

Մադ. Օ՛օօ, այդ լաւ գիտեմ, տիկին:

Մարքիզ. Տիկին... բայց եղել են օրեր, երբ դուք
ինձ ձեր մայրն էք կոչել:

Մադ. Ներեցէք, խնդրեմ. այդ մի խօսք է, որը ձե-
զանից առաջ, ոչ օքին ասելու սովորութիւն չեմ ունեցել.
սակայն կաշխատեմ սովո... (համբուրում է նրան):

Հօրն. (ցած ձայնով, յուզւած ժպտելով). Ա՛րքան
խելօք է:

(Գուռը բախխում են).

Մարքիզ. Ներս համեցէք:

ՏԵՍԻԼ Է.

Նրանք, ՆՈՒԼԻ.

Մադ. (ընդառաջելով նրան). Բարև ձեզ. (Մարքի-
զուհու հետ ծանօթացնելով). Օրիորդ Նօէլի Մէրէս:

Նօւէլի. Ներեցէք, խնդրում եմ, արիկին:

Մարքիզ. Վնաս չունի, աղջիկս, ընդհակառակն, ես անչափ ուրախ եմ, որ կարողանում եմ ձեզ և սիրելի աղջկանս զւարձութիւն սրտաճառել:

Մաղ. (Նայում է դէպի մուտքի դուռը). Հապա զարմուհի կստէ՞ր... չէ՞ ուզում վար իջնել:

Նօւէլի. Բոլորովին... Նա և իր եղբայրը խորհրդակցում են փոքրիկ աղախին՝ Մագէլօնի և հիւրանոցի մի ծառայի հետ. (ծաղրելով). Պարոն Վաստիլլանը, կարծես, դատաստանական ատեան լինի կազմած:

Հօրն. (անհանգիստ). Ի՞նչպէս թէ հիւրանոցի ծառայի հետ, ասում էք:

Մաղ. (ժպտելով). Օ՛օօ, ես ճանաչում եմ կստէլին, ամեն օր անսրտաճառ կախ պէտք է անի ծառայողների հետ:

Նօւէլի. Տեսայ, որ շատ են երկարացնում, ես միայնակ իջայ:

Մարքիզ. (գնալով իր սենեակը). Շատ լուարիք... Լսեցէք, սիրելի Հօրնիւս, եկէք այս կողմը: Մինչ օրիորդ Վաստիլլանը կըգայ, թողնենք մեր փոքրիկ նորաստակներին (խօսքը փոխելով). Կամ նորանշաններին մենակ. թող իրարու գաղտնիքները պատմեն վայելելով միևնոյն ժամանակ այս շաքարեղէնը կամաց-կամաց:

Հօրն. Առանց մեզ աւելի ազատ կըլինեն:

Մարքիզ. (Մաղըլէնին). Չըմոռանաք, աղջիկս, մեզ իմացնել, երբ նկատէք դիմակաւորների մօտենալը: (Դուրս է գնում Հօրնիւսի հետ ետևի դռնից):

ՏԵՍԻ, Ը.

Մտղըլէն Նօւէլի.

Նօւէլի. (միշտ գնում-գալիս է, երբէք մի տեղ չէ կանգնում. խօսում է շատ արագ-արագ): Տիկին Դ'Ալէնի ձևերը շատ են հաւանում. մի տեսակ ազնուութիւն և

մտերմութիւն եմ նկատում նրանում: Ազդիղ որ խի և խի Գիդիէի մայրն է... Գիդիէ է անուներ, այնպէս չէ՞: Իմս կոչոււմ է Բօրէք, նոյնպէս գեղեցիկ անուն, Բօրէք... Յաւում եմ, որ չըկարողացաւ ինձ հետ գալ... կրտսենէիք թէ յորքան սիրելի է նա: Հապա նրա ծնողները, Աստուած ազատէ, Նիցցայի բարեկէնդանը նրանց սարսափեցնում է, շատ կոշտ մարդիկ են: Կատարելապէս սլարոն Կաստիլլանի նման են. երեսները մուսլի, գուրկ ուրախութեան ամենափոքր նշոյլից անգամ, շարունակ գետնին նայողներ. մարդ չըգիտէ նրանց աչքերի ինչ գոյնի լինելը: Տուներ ամայի, անբնակ, որանդ զգում ես խոնաւութիւն և ցուրտ. բռռ...

Մադ. (ափսէ տուածարկելով). Մի քիչ միտք վազելեցէք:

Նօէլի. Ասածներնս վրայ հօ չէք նեղանում:

Մադ. Ամենեւին, ի՞նչի պէտք է նեղանամ...

Նօէլի Սարսափում եմ այդպիսի ընտանիքների մասին մտածելով. նրանց մօտ մտնում ես առանց մէկին ճանաչելու, կարծես մի կորած երկրումն ես. որանդ ամուսինդ ստիպւած է քեզ առաջնորդելու. «զգոյշ կաց... ոտդ աչնտեղ դիր, այս տեղ ման չըգաս... մօրքուրիս մասին բան չասես, հասլա հօրեղբօրս առաջ երբէք»

Մադ. (ուրախ կերպով). Ձերոնց մասին էլ դուք կասէք այդպէս:

Նօէլի. Ե՛տ, ես ո՞վ ունիմ որ. մօրս վաղուց եմ կորցրել, համարեա թէ չեմ տեսել նրան. հօրս էլ լաւ գիտէք, կատարեալ ուրուական է: Բօլոր յոյս Բօրէքն է, նա է միակ տէր-տիրեկանս.

Մադ. Ես էլ որբ եմ, ծնողներս...

Նօէլի. Իրան... դարմանալի բան, սրանով էլ մեր բաղտերը նման են իրար. (նրա ձեռները բռնելով). անպատճառ մենք սրտակից բարեկամուհիներ գտնանք:

Այնժամանակ կրհամոզէք, որ լաւ աղջիկ եմ. ուղիղ է. չափազանց շողակրատ եմ. բայց մեղը իմս չէ: Տանը անչափ հարց-պատասխաններ տալը սովորութիւն դարձրեց ինձ շատախօսելու. հօրս լաւ գիտէք, մի խօսք չէ ասում: Երեւակայեցէք, ինչ կը լինէր դրութիւնս, եթէ դաշնակ չունէնայի. ձանձրոյթից կըմեռնէի... Երաժշտութիւն սիրում էք... ես գժւած եմ նրանով: Երբ մենք մեր տուն-տեղը կունենանք, այն ժամանակ շատ կընւագենք. ուզում էք...

Մադ. Իհարկէ, ուզում եմ:

Նոէլի. Միայն ցաւում եմ, որ մենք միեւնոյն օրը և միեւնոյն եկեղեցում չենք կարող պատկել, դուք, գիտեմ, տակաւին սգաւոր էք: Ա՛խ, Աստուած, երբ պէտք է հարսանիքներս լինի. շատ է ուշանում, այնպէս չէ:

Մադ. Ամենևին ոչ, այնքան էլ ուշ չէ. աւելի լաւ է, մարդս սիրում է ձանաչել, հասկանալ...

Նոէլի. Ձանաչել, հասկանալ... Բան ասիք դուք էլ. հապա, ամբողջ կեանքը ինչ պէտք է անել. այդ, ժամանակ կօրցնել է նշանակում, իմ կարծիքով: Օրինակ ես, նոյն իսկ առաջին օրը, հէնց առաջին բուէին, եթէ նա ուզէր ինձ տանել աշխարհիս միւս ծայրը...

Մադ. Օ՛հ, այդ շատ հեռու է:

Նոէլի. Այո՛, դուք աւելի համբերող էք, թէ և շատ չեմ հաւատում, որովհետև այդ գեղեցիկ և անդորր աչքերում... Իդէպ, լաւ չիշեցի. ստացել էք արդէն նշանադրութեան մատանին:

Մադ. Երեկ երեկոյեան ստացայ, այսօր առաջին անգամն եմ դրել մատիս (ձեռնոցը հանում է):

Նոէլի Մէկ տեսնեմ... Օ՛ ինչ գեղեցիկն է. ամբողջովին շողակնեա է... Իմը, կէս մարդարտեա էր:

Մադ. Հապա տեսնեմ:

Նոէլի. (տխրադգաց). Է՛լ մի հարցնէք... գալու ժա-

մանակ վազօնում կորցրի. այնպէս դարդօտ եմ, որ էլ չեմ կարող ասել: Մինչև այժմ չեմ համարձակուում այս մասին գրել Րօբէրին: Ա՛խ, ինչպէս էի հպարտանում փոքրիկ մատանիովս...

Մադ. Ես էլ ուղիղ ձեր ասածի նման, մի ինչ որ հպարտութիւն է դալիս վրաս մատանու վրայ նայած ժամանակս: Այն, դա մեր տիկնութեան առաջին գոհարն է, մեզ կապող շղթայի առաջին օղակը... պէտք է մի ուրիշն ունենալ... մատանին կորցնելը ծանր խնդիր է:

Նօէլի.(ուրախ կերպով). Մօօ, ես այնքան էլ սնապաշտ չեմ, կարող եմ ստար քսանը կորցնել. ամենևին չեմ վախում: Այսուհետև էլ լի՛նչ կարող է սլատահել. պայմաններս որոշած են. երդումը, ստորագրութիւնը սուած է արդէն... (ցած ձայնով խեղ պէս): Ա՛խ, եթէ իմանայիք, ինչպէս եմ սիրում, ինչպէս եմ սիրում, որ, որ, որ...

(Գուրբը լսում է աղաղակ, փողերի և դահլիճները ձայն. բազմութեան իրարանցումն):

Մադ. (վերկենալով). Վերջապէս, փառք Աստծու, արդէն եկան (բարձրանում է):

Նօէլի. Արդէն. ձիահանդէսը հասան ուրեմն. կեցցէ:

Մադ. (բարձրացնելով արևկալը, կռանում է դէպի դուրսը). Տէր Աստուծ, ինչ գեղեցիկ է. (վազում է դէպի սենեակի դուռը և կանչում). Նիէք. շնա արէք, մայրիկ, պարօն Հօրնիւս, մայրիկ, մայրիկ:

ՏԵՍԻԼ. Թ.

Նրանք, Մարքիզուհի և Նորնիւս (ներս մտնելով բնի խորքի աջ կողմից):

Մարքիզ. Այս անգամ լաւ կանչեց «մայրիկ. մայրիկ»: Նորն. Կարծես, ձեր խիստան աղջիկը լինէր:

Մադ. Չարմուհի էստէլը որ չի չճնանմ, ի՞նչ են շինում վերը—շատ եմ գարմանում...

Նօէլի. (սլատշգամբի վրայ) Մի դուրս արի այտեղ, տես տես այս մե՛ծ մե՛ծ սև կրկնոցները. առաջին կառքում, կարծես Գիդիէն լինի նստած:

Մադ. (կռանալով). Այո՛, բոլորովին նրա նման է:

Մարքիզ. Անկասկած, իսկ և իսկ նա է:

Մադ. (Հօրնիւսին). Գի՛տէ՛ նա, արդեօք, ձեր եկածը, սարսն Հօրնիւս:

Մարքիզ. Ամենեւի՛ն...

Մադ. (Հօրնիւսին). Ո՛հ, սրբան կուրախանայ. այտեղ նստեցէք...

Հօրն. Ո՛չ, ո՛չ, նեղութիւն մի քաշէք, նրա աչքերը նախ ձեզ վրայ կրնկնեն... ինչքան էլ առաջ լինեմ նրստած, այնուամենայնի նա ինձ չի նկատի:

(Գուրսը ձայներ են լսում ամբօխի միջից)—

„Կանգնեցէ՛ք, եղբայր, կանգնեցէ՛ք“:

Նօէլի. Տեսէ՛ք, տեսէ՛ք այն կառքը, որ հիււանոցի առաջ կանգնեց:

(Գրսից շատ ձայներ)

„Սնւս, սնւս, լուռ թի՛ւն“:

(Գուրսը տղամարդիք խմբովին երգում են խուլ ձայնով).

«Թո՛ղ թմբուկն և ջութակ»

„Հնչեցնեն մեզմարար,“

„Սպանիական այգերգը,“

Թո՛ղ երգւի գլրթարար“:

Մարքիզ. (ժպտելով Մադըլէնին). Կարծում եմ, այս գեղեցիկ երաժշտութիւնը ձեզ համար է, սիրելի աղջիկս, դէհ, մի քիչ մօտեցէ՛ք, է՛...

Մադ. Ոչ, ոչ, շնորհակալ եմ, ես ամաչում եմ... այտեղ աւելի լուս եմ... (յետ է քաշում). Գուք եկէ՛ք այտեղ՝ Նօէլի...

Նօւյի. (յետ քաշելով). Ա՛խ, ոչ, ի՞նչ էք ասում.
Բօբէրը կընեղանայ վրաս: Ինձ համար հօ չէ այն այգ-
երգը...

(Մէկը մենաձայն է երգում).
Ծաղկեայ վնճեր գեղեցիուհուս,
Հաստատ սէրիս տամ ի նշան.
Այն, սէրս է, որ վնճել է
Վարդ, մանուշակ, ձերմակ շուշան:

Խումբը.

Թո՛ղ թմբուկն և ջութակ,
Հնչեցնեն քաղցրաբար.
Սպանիական այգերգը
Երգւի սիրողաբար:

Հօրն. (նստած տեղից շատ դգածւած). Աւա՛ղ սէր,
ո՛հ ջահելութիւն:

Մենաձայն

Երեւիք ինձ, ով թագուհի,
Ստացիր սէրս իմ անհուն.
Թո՛ղ ճակատդ շողշողէ
Ձերդ մայիսեան երկինք փայլուն:

Խումբը.

Թո՛ղ թմբուկն ու ջութակ
Հնչեն խառն ձայներով,
Սպանիական այգերգը
Երգեն միշտ պարելով:

ՏԵՍԻԼ Ժ.

Նրանք, Գիղիէն, Էստանդիսանաինա. (սպանիացի ուսանողական
երգեցիկ խումբ):

Գիղիէ. (Գլմակով, ձեռքին գգակիկ, մանդո-
լինը ուսից կախած, ցատկում է պատշգամբի վանդակի
վրայով բեմի վրայ): Երաժշտութիւնը վերջացաւ, երգող-

ները նւէրներ կըհաւաքեն, այս էստուղիանտինայի սովորութիւնն է: Այս կողմը, ընկերներ: (Գիմակաւորները ցատկում են նրա յետևը սրատղամբի վրայով և շարունակ վերանդայի խորքում մանդօլիններ ձեռքում, սպանիական ուսանողի մեծ մանտօներ, ձերմակ ձեռնոց, բլակնոցներին ժանեկիկ, երեսին թաւշեայ սև դիմակիկ: Գիղիէն փարունակ է մօրը և համբուրում):

Մարքիզ. Կամաց է, կամաց- եքա տղայ:

Գիղիէ. (Մազըլինին). Աբա, Մազըլինինկա ի՞նչքան կըշնորհէք երաժշտութեան համար:

Մազ. Տգեղ դիմակին ոչինչ (ցուցնելով Նօէլու վրայ): Գիմեցէք քովս նստողին:

Գիղիէ. (Նօէլուն). Ա՛խ, ներեցէք, ձեզ չընկատեցի. (գլուխ տալով) սատիւ ունիմ, օրիորդ... (ձեռքը համբուրում է):

Նօէլի. Պարօն գիտարաւոր, ձեր այգերգը հիանալի է, ասուածային է:

Գիղիէ. (դառնալով նորից Մազըլինին). Անպիտան դիմակին՝ ոչինչ, շատ լաւ. (դիմակը հանելով). Հապա Գիղիէին...

Մազ. Գիղիէին մի լաւ անկարծի (surprise). շուռ եկէք և նայեցէ՞ք լաւ (Հօրնիւսի դիմացն է կանգնեցնում):

Գիղիէ (աղաղակելով). Վարժապետս, բարի վարժապետս. (փարունակ է նրա վզովը):

Հօրն. (սղմելով ամուր). Գիղիէ, փոքրիկս, անգի՛ն Գիղիէս:

Գիղիէ. (իբ մօրը). Ասա խնդրեմ, ի՞նչպէս կարողացար դուրս հանել սրան իր այրից, այս քարափներին բնակիչ մեր ծեր խլէղին:

Հօրն. Հրա՛ջք է, հրա՛ջք, օրիորդն է հրաշագործը (ցուցնելով Մազըլինի վրայ). Ես եկայ այստեղ բացառապէս օրիորդին տեսնելու:

Դիդէ. (հպարտօրէն). Դէհ, ասա, տեսնեմ, ի՞նչպէս է աշակերտիդ ճաշակը. հաւանում ես: Գիտեցիր, ընտրածս էր գեղեցիկութեան համեմատ էլ բարեսիրտ է:

Մար. (ցած ձայնով ամաչած). Դիդէ, Դիդէ:

Դիդէ. ձշմարիտ է, Մաղըլէնիկս, անչափ բախտաւոր եմ:

Նօէլի. (յուզւած). Միմիայն ինձ է հասկանալի այդ:

Դիդէ. Պատրաստ եմ հոգով-սրտով ասել, բղաւել, բոլորը թո՛ղ գիտենան, որ ձեզ սիրում եւ բախտաւոր եմ, նա մանաւանդ այս բոլորս. որովհետեւ բոլորդ էլ այստեղ էք, ինձ կեանք տւող մայրս, պ. վարժապետս եւ իմ փոքրիկ անգին նշանածս... Այո՛, այո՛, իմ կինս էք այսուհետեւ, իրաւունք չունէք խօսքից չետ կանգնելու. որովհետեւ նշանադրութեան մատանիս ստացել էք. (բռնելով օրիորդի ձեռքը). նայիր Հօրնիւս, նայեցէք, օրիորդ:

Նօէլի. Արդէն տեսել եմ, շատ գեղեցիկն է:

Մար. Ա՛խ, գիտենայիր թէ՛ սրչափ եմ սիրում այս մատանին:

Դիդէ. (յափշտակւած) Հնապա ես. ես չեմ սիրում. (յուզւած համբուրում է եւ մատանին եւ ձեռքը):

(Մի ձայն դրսից)

Դէհ, ժամանակ է, գնանք, գնանք.

Դիմակ. (չետակից Դիդէին). Դէհ գնանք, Դիդէ:

Դիդէ. Այ բան. քիչ մնաց ձիահանդէս մոռոնայի, դէհ գնանք: (դիմակաւորները անհետանում են. նա էլ ամենքին համբուրելուց յետոյ). Այս բոլորս չետ կրգամ, սիրելիքս: (Յատկում է պատշգամբի վրայով եւ անհետանում, բոլորը կռանում են նրան նայելու, երգ եւ աղաղակ լսում են հեռւից):

ՏԵՍԻԼ ԺԱ.

Նրանք, խորհրդական.

Խորհրդ. (կանչելով կամաց). Մաղըլէն, Մաղըլէն:

Նօէլի. (որ աւելի մօտ է կանգնած, կանչում է կամաց). Մաղբլէն, պ. Վաստիլլանը կանչում է ձեզ:

Մաղ. (շուռ գալով). Վերջապէս... դէհ, եկէք էլ՛:
Խորհրդ. (կիսաձայն). Ձէ, դուք եկէք, դուք:

Մաղ. (մօտենալով). Ի՞նչ կայ:

Խորհրդ. (ցած ձայնով). Գէհ, շուտ գնացէք Կատէլի մօտ... մի սարսափելի բան... չեմ կարող ասել այստեղ...

Մաղ. Բայց և այնպէս...

Խորհրդ. Գնացէք, շուտ արէք. (կտում է դէպի դուռը). Խնդրում եմ շուտ... նոյն իսկ սկսանջում եմ:

Մաղ. (դուս գնալով). Ո՛հ, Տէր Աստուած. Ի՞նչ է պատահել:

ՏԵՍԻՒ, ԺԲ.

Նրանք ասանց Մաղբլէնի.

Մարքիզ. (Թողնելով պատշգամբը). Մաղբլէնը հեռանում է, այդ ուր է գնում:

Խորհրդ. (մի քայլ առաջ գնալով). Իր զարմուհու մօտ. տիկին:

Հօրն. (մերձենալով). Մի՞թէ, օրիորդ Կատէլը հիւանդ է:

Խորհրդ. Մի փոքր լաւ չէ իսկապէս:

Մարքիզ. Գնամ, ուրեմն, տեսնեմ ի՞նչ ունի:

Խորհրդ. Իզուր է, տիկին, Մաղբլէնի ներկայութիւնն էլ բաւականէ:

Նօէլի. (պատշգամբում միայնակ, առաջ է գալիս, կամաց երգելով).

Սպանիական այգերգը

Թող երգւի սիրողաբար:

(կանգնում է անշարժ լուսթիւնից և ցրակց, չետոյ դիմելով համեստաբար խորհրդականին)

Մաղբլէնը վար իջնելու չէ՞ այլ ևս:

Խորհրդ. (ծանր կերպով). Ո՛չ. օրիորդ:

Նօէլի. (չփոթւած). Ուրեմն տիկին... Ներեցէք խընդրեմ... շատ շնորհակալ եմ...

Մարքիզ. Չարժէ, աղջկիս:

Նօէլի. (հրաժեշտ է տալիս ուրախ կերպով Հօրնիւսին, յետոյ Խորհրդականին վախելով. ցած ձայնով): Օ՛Ք, այս պարոն Կաստիլյանը. մարդու արիւն է պաղում... (դուրս է գնում):

ՏԵՍԻՒ, ՓԳ.

Մարքիզուհի, Հօրնիւս, Խորհրդականը:

Մարքիզ. (լուռթիւնից յետոյ վճռաբար Խորհրդականին). Վերջտալէս, ձեր քրոջ հիւանդութիւնը շատ է վտանգաւոր:

Խորհր. Այնչափ վտանգաւոր է, որ այն պատճառով ստիպւած ենք նոյն իսկ այսօր հեռանալ Նիցցայից...

Մարքիզ. Ի՞նչ էք ասում...

Հօրն. Իհարկէ կըհիւանդանար, նա որ այնպէս կուտուեց օշարակը...

Մարքիզ. Ուրեմն գնանք միասին, ինչպէս որ միասին էլ եկանք:

Խորհր. Այդպէս անկարելի է:

Մարքիզ. Ի՞նչի, ի՞նչ է պատահել:

Խորհր. Յարգելի պատճառներ շատ կան...

Մարքիզ. Մի ասէք, տեսնեմ, ի՞նչ է պատահել:

Խորհրդ. Պատրաստ եմ ասելու, տիկին:

Մարքիզ. (նկատելով որ Խորհրդականը հայեացքը դրել է Հօրնիւսի վրայ). Օ՛օօ, դուք կարող էք ազատ խոսել, պարոնը մեր մօտիկ բարեկամն է:

Խորհր. Համեցէք... Նս մի բան լսեցի, որ եթէ ճիշտ է, կարող է դերեւել այս մեր երկու ընտանիքները սրտերին ամենասիրելի ցանկութիւնները...

Մարքիզ. (կամօաց, հազիւ պահելով իրեն). Ա՛հ, բանն իմացել են արդէն:

Հօրն. (մի կողմը). Անխձամ Վօֆինօն է ասել, անպատճառ.

Խորհր. Իբրև ազգական և խնամակալ՝ պարտաւոր եմ հարց ու փորձ անել լաւ. և այսօր խի ընդհատում եմ մեր մէջ եղած յարաբերութիւնը:

Հօրն. (արդէն մօտեցած). Պարոն, կարծեմ հասկանում եմ բանի եղելութիւնը. հարց ու փորձը հէնց այս բողբոջ էլ կարող ենք անել: Մայրն այստեղ է, նոյնպէս և ես, որ դատարարին եմ. բոլորս պատրաստ ենք պատասխանելու. հաւատացէք մեր ասածները աւելի նշանակութիւն կունենան, կարելի է, քան թէ ծառաների շաղակրատութիւնները: Կարծեմ ուզում էք խօսել Մարքիզ դ'Ալէնի հիւանդութեան մասին:

Խորհր. Իսկապէս, պարոն. միթէ այդ ճշմարիտ է:

Հօրն. Այո, ճիշտ է, դժբախտաբար:

Խորհր. Աւրեմն խելագարելը նրա, յետոյ տարիներով դժատան մէջ փակ պահւելը...

Հօրն. Այդ ամենն էլ ժշմարիտ է:

Խորհր. Ի՞նչի ուրեմն, մեզ ոչինչ չասիք, չըզգուշացրիք առաջուց:

Հօրն. Արովհետև այդ հիւանդութիւնը ժառանգական չէր ամենեւին—այլ պատահական: Հիւանդութեան յայտնւելու միջոցին երեխան արդէն երկու տարեկան էր:

Մարքիզ. Կատարելապէս ճշմարիտ է ասածը, հաւատացնեմ ձեզ. (նայում է Հօրնիւսին, որ կարծես հարցնելիս լինի), խնդրեմ, շարունակեցէք, բարեկամ:

Հօրն. Այդ պատահեց նրա ծովային վերջին պատերազմում՝ Վէնէզալի արշաւանքի ժամանակ. արևի զարկից ստանում է ուղեղի բորբոքումն և յետոյ փոխում է հոգեկան հիւանդութեան...

Մարքիդ. Այն էլ ասէք, որ մինչև այն ժամանակ, մեր ընտանիքում ոչ մէկը...

Հօրն. Այ մի ազգական կամ սոհմակից հիւանդացած չէ այն սարսափելի հիւանդութիւնով. Գիդիէն արդէն ծնւած էր, ասում եմ ձեզ, և Տիլիէն Մարքիդուհին յանձնեց ինձ սահելու մեծացնելու նրան, հեռացնելով միևնոյն ժամանակ հիւանդութեան սոսկալի տեսարաններից... երբ հայրը վախճանեց, մայրը լեռ վերցրեց իր օրդուն...

Մարքիդ. Չաւակո չէ ունեցել ամենափոքր նշան անգամ այն հիւանդութեան... ահա թէ ինչի բան չասի ձեզ.

Խորհրդ. Ես բոլորովին հաւատում եմ ձեր ասածներին, Տիլիէն.

Հօրն. (ինքն իրեն). Ծնա ուրախ եմ:

Խորհրդ. Հիւանդութեան ժառանգականութիւնը այնպէս ծանրաիշխ հարց է, որ... այս բոլորովին մի նոր գիտութիւն է անժխտելի փաստերի վրայ հիմնւած, ունի իր օրէնքները, մեծ անխոհեմութիւն կը լինի այդ բաներն անգիտանալ:

Հօրն. (Չայրագին). սքանչելի գիտութիւն, նամանաւանդ մարդու սիրտ հանգստացնող. այդ մի ձե է աւելի դառնացնելու, աւելի թշւառացնելու մարդկային կեանքը, որ առանց այն էլ ոչ շատ ուրախ չէ և ոչ տանելի...: Այս բողբոջ խօսքը հարց ու փորձի մասին էր. բայց եթէ ուզենան բոլոր ընտանիքների վերաբերեալ կատարել այդ, հաւատացէք, որ ոչ ոք անարատ չէր դուրս գալ այդ բանի տակից. օրովհետև մեզանից ոչ ոք ազատ չէ մարմնական և բարոյական սրահասութիւններից: Լաւ եմ հասկանում թէ մեզ ինչ բանումն էք մեղադրում, բայց գիտե՞մ արդեօք թէ դուք ի՞նչ էք բերում մեր սուն, չգիտէք նոյնպէս և դուք: Հաւատացէք,

որ լաւ չէ չափազանցել ժառանգականութեան օրէնքներին հետ շատ խաղալով. որոնք բազմաթիւ անմեղներին վնասում են և շատերին էլ ծառայում իբր միջոց դարչելի ազահութիւնը վարագուրելու:

Խորհրդ. Մեր հայեացքներին, կարծիքներին տարեգրութիւնը ծագում է հէնց նրանից, մանաւանդ ներկայ հանգամանքում, որ ինձ վրայ դրած կան պարտաւորութիւններ, որոնց չկատարել չեմ կարող: Օրիորդ Ռէմօնդին, բացի ինձանից, չունի ոչ ազգական և ոչ պաշտպան, պարտաւոր եմ ինքս տեսնել և հարցը պարզել...

Հօրն. (վրդոված). Ասէք, խնդրեմ, բացի մեզանից, ումից կարող էք աւելի լաւ իմանալ այդ:

Մարքիզ. (Հօրնիւսին). Թողէք, բարեկամ, թողէք, հասկանալի են պարոն պաստիլանի զգուշութիւնները. անելու հարց ու փորձը ինձ ամենեւին չեն սարսափեցնում: Հոգսս Վիլիէն է միմիայն... Ի՞նչ պատճառ բերել...

Խորհրդ. Պատճառ. էլ ինչ պատճառ էք ուզում, ասէք որ իմ քոյրը հիւանդ է: Ամենալաւ միջոցն այդ է, որով կարող ենք երկար տևեցնել անձատումն սէտքին համեմատ:

Մարքիզ. (խնդրելով). Միայն թէ շատ երկար չտևէք այդ անձատումը:

Հօրն. (կիսաձայն, ծաղրելով) Այո, կարող է երկար տևել, չէ՞ որ հարց ու փորձ սէտք է անել՝ լաւ իմանալ:

Խորհրդ. (սառնութեամբ). Ոչ մի շահ չունիմ դրանում, պարոն...

Մարքիզ. (խորհրդականին). Ե՛րբ էք մտադիր գնալու...

Խորհրդ. Հէնց այս բոպէիս, տիկին. ժամ է արդէն կապոցները պատրաստել...

Մարքիզ. Ի՞նչի էք այդպէս շտապում:

Խորհրդ. Անստանելի և կեղծ դրութեանը շուտով

վերջ տալու համար... Ընթացքենք հարց ու փորձը ան-
նպատակ ելաւ... այն ժամանակ երեւակայեցէք թէ որքան
վնասուում է խեղճ աղջիկը...

Հօրն. (հեգնելով) Վնաս, տեսնում է՞ք տիկին... օրի-
որդ Մադրէէնը այնպիսի մի չաղ կտոր է որ...

Մարքիզ. (արագ կերպով, Հօրնիւսի յանդգնութեան
ազդեցութիւնը կտորելու իբր թէ). Թոյլ տէ՛ք, գոնէ,
կրկին տեսնեմ և համբուրեմ նրան...

Խորհրդ. Այդ մէք պահանջի, տիկին, քոյրս շատ նե-
ղութիւն պէտք է քաշի մինչև կարողանայ համոզել նը-
րան, այս կը նշանակի նրան աւելի յուզել, վրդովել...

Մարքիզ. Ի՞նչպէս կը կամենաք, խնդրում եմ միայն
—մի մայր է խնդրում ձեզ—, որ եթէ Աստուած չանէ,
բաժանումն տեղի ունենայ, թո՛ղ որդիս մեղապարտ չը
համարւի: Նա չգիտէ... և չեմ էլ կամենում որ երբէք
խմանայ:

Խորհրդ. Իմ և մեր ընտանիքին պատկանող ան-
դամների մասին հաստատ խօսք եմ տալիս... միամիտ ե-
ղէք, տիկին... Պատիւ ունիմ (գլուխ է տալիս յարգան-
քով, Հօրնիւսին սառնութեամբ, դուրս է գնում):

Մարքիզ. Շատ շնորհակալ եմ...

Հօրն. (ինքն իրեն) Այ, սո սուտ ձգնաւոր:

վարագոյր

ԱՐ Ա Ր Ի Ա Յ Բ.

Մտնպէլիէի մօտ՝ Կօլօմբիէք կարածքում դԱլէնի տանը: Առաջին չարկում ուօտոնդանման գիւղական դահլիճի, խորքում մի բարձր, դէպի այգին տանող լայն սանդուղքի դէմ բացւող դուռը: Պայծառ գոյներով պատառ. Լուղօլիկ ՓԶ-դի ժամանակէս կարասիք, ձախ կողմը մի դուռը. լուսամտուներ աջ և ձախ կողմերում, դաշնամուր և մի գրագարան:

ՏԵՍԻՒ Ա.

Դիդիէ, Հօթիւս.

Դիդիէ. (Բանալով մի պատուհան և շոխկացնում է դբսի կախառիչները persienne). Ահա մեր քնակարանը, իսկ և իսկ մեր տունը... ջահիլների օջախը, ինչպէս մայրիկս է ասում: Իմում է դէպի միւս պատուհանը):

Հօթիւ. Ի՞նչիդ է պէտք բոլորը բանալ:

Դիդ. (Բանալով պատուհանը և կախարիչները). Պէտք է, պէտք, ուզում եմ քեզ ցոյց տալ, դու պէտք է տեսնես... և հէնց սրա համար քիչ Նիցցայից այտուղ բերի, երբ կը յիշես մեզ, քօ երեխաներիդ, այն ժամանակ պէտք է գիտենաս և մեր բախտաւորութեան շախը, դրութիւնը: (Լուսամուտի առաջ կանգնած ականջ է դրնում). Ըհ՛ը, մի կառք ներս եկաւ, մայրիկս նոր բաներ կը պատմի:

Հօթիւ. Ի՞նչնալ հիւանդ է կատէլ գարմուհին:

Դիդ. Այ՛... Այ՛ն գերդաստանի հետ չեմ կարողանում բան ազօղեցնել. հէնց ուզում եմ ամուսնական դաշըն կապել և ահա, անպատճառ, մէկն ու մէկը հիւանդանում է: Առաջ խորհրդականի կիներ էր, հիմա էլ կատէլ գարմուհին... Մի բան միայն ինձ աւելի ձանձրա-

ցնում է, այն է որ Մազըլէնը մի բուսէ անգամ չէ հե-
ռանում նրանից... Այն օրից ի վեր, երբ նրանք այնտե-
ղից գնացին, երեք օր է ինչ նրան չեմ տեսել: Ինչ և է,
մխիթարում եմ նրանով, որ սեփական օջախիս սարք
ու կարգով եմ գրադում: Տես նրա համար Պարիզից բե-
րել տւած գեղեցիկ դաշնամուրը, բոլորովին նոր է... գը-
րասեղանս էլ ուղիղ գիւմացր: ...Ո՛հ, ինչպէս լաւ կը լի-
նի, պարապելուս միջոցին նա էլ կը նւթէ...

Հօրս. Երևակայում եմ թէ ինչպէս պէտք է պա-
րապետ:

Գիղ. Չե՞ղաւ, էլն՝ ծաղրեցիր: Յամենայն դէպս, գըր-
քեր էլ շատ ունենք. (Երկու գրադարան ցոյց տալով):
Իմս այստեղ կը լինի դրւած, իսկ նրանք այնտեղ: Այ,
նրա գրքերը բոլորն էլ բնորովի և լաւ կողմած են, որ
չեն թօշլ տուն կարգաւ, այժմ ինձ եմ վերապահում այդ
հեղինակութիւններն նրան ծանօթացնելու, տես որքան
շատ են. համկանայի է այս, որովհետև ոչ մէկը չէ կար-
դացել: Ար տեսնեա թէ ինչպիսի հաճելի ժամանակկանց-
կացներք, որքան ուրախայի է ինձ համար՝ զարդացնել
ջաշիւ արարած ին՝ ծանօթացնելով նրան վե՛հ ու վառա-
ւոր դործեր... Ինձ համար նա և կինս է և երեխաս: Թո՛հ-
նում եմ մինչև անգամ այն մարդոցը, որ նրան ամեն
բան սովորեցնելը ինձ են թողել: Ես նրա համար կը լի-
նեմ մի փոքր այն, ինչ որ դու ես եղել ինձ համար, մի
հողատար և բարի վարժապետ:

Հօրս. (Ծաղրում է՝ իր զգացւած եղածը օքողելու)
Ինչպէս տեսնում եմ դու նրան շատիներէն էլ կը սովո-
րեցնեա վերջ ի վերջոյ:

Գիղ. Իբր թէ դուն չէիր որ ինձ շատիներէնը սովո-
րեցնել տէիր, յիշում ես Պրովանսում վարդ-դամիններով
հովանաւորւած այն խորշը, որտեղ մի փեթակի մօտ նըս-
տած՝ վերգիլիոսի Մշակականքն էինք կարդում... այն

միջոցին բանաստեղծի ոսկեխաչ մեղուները բզզալով
 թռչկոտում էին մեր շուրջը, կարծես թէ գրքից լինէին
 դուրս թռչելիս... Այն աստիճան դեղեցիկ, ճշմարիտ էր,
 որ ես «հասկանում եմ» բացակամեցիով վզովդ փարուցի...
 չոր. Բայց դու պէտք չես ունենայ «Մշակահանքի»,
 որպէս զի աշակերտուհիդ վզովդ փարւի...

Գիղ. Ի՞նչ ծաղրում ես... դու ծիծաղում ես միշտ երբ
 մարդս սիրոյ մասին է խօսում. սակայն վեհ է սէրը, վեհ,
 սիրելի ձերուկայ... դու չես հասկանում...

Չոր. Այո, կարող է լինել... չգիտեմ միայն...

Գիղ. Ի՞նչ, դու չգիտես... սակայն դու պարզեցիր
 ինձ բանաստեղծութիւնը, կիրքը. դուն էիր ինձ այն ամենը
 հասկացնողը... Յիշում ես Արվէրի սօնատան, որ
 երգում էիր. «Ես շատ ժամանակ է, ինչ որ այն օրան-
 չելի սօնատան էլ չեմ բեր...

Չոր. Այո, այո, յիշում եմ...

Գիղ. Երգում էիր քեզ չտառուկ եռանդով, բոցավառ
 հոգով, այն դիշերը ես տանն ե հինգ տարեկան էի և
 յանկարծ քօսն տարեկան դառայ. Սէրը չգիտե՞նալ և
 ուրիշին լու հասկացնել նրա էութիւնը... ուղիղ որ շատ
 տարօրինակ բան է այդ... ճշմարիտ, շատ լուզիչ, անպո-
 ցիկ էր այն տաճառորը, (արտասանելով):

Կեանքս թե՛ իր գաղտնիք, հոգիս իր խորհուրդ...

Չոր. (շարունակում է ոգևորւած).

Յուրանական սէրը, միայն օր մի վայելել է.

Վիշտը չունի սիրտմանք, ինչպէս ես այդ գգացի,

Նոյն իսկ նրա ստեղծողը՝ ինքն էլ լաւ չէ հասկացել:

(Լռում է նկատելով Մարքիզուհու մտնելը):

Գիղ. (չընկատելով մօրը). Իհնչ, շարունակիր է.

Չոր. Ո՛չ, ո՛չ. մի այլ անգամ:

Գիղ. (չուս գալով նկատում է մօրը). Ա՛հ, ահա
 մայրիկս էլ եկաւ:

Տ Ե Ս Ի Լ Բ.

Նրանք, Մարքիզուհին.

Իհդ. (մօռը). Այնտեղից ես գալիս:

Մարքիզ. (անհամարձակ) Այո, (նայում է սխրարար
Հօրնիւսին):

Իհդ. Ռէհ, ասա, տեսնենք, ինչպէս է սիրելի Լա-
սէլը:

Մարքիզ. (սառնութեամբ). Փոքր ինչ լաւ է:

Իհդ. Փառք Աստուծոյ... կարծում էի կը մեռնի.
սա էր պակաս, որ մեր գործը մի փոքր աւելի ուշանայ:
(Ծիծաղելով), Արածս էլ սարսափելի ետականութիւն է
ուղիք:

Հօր. (ժպտելով), բայց շատ բնական է այդ:

Իհդ. (Մարքիզուհուն). Այ, ինչպէս տեսնում ես, այս
բուլէիս ցոյց էի տալիս նրան մեր սպասուած օջախը
(նկատելով մօտ վերաւոր եղածը շողոքորթում է): Ի՞նչ
ես նախանձում, մեր բախտաւորութիւնից դուն էլ մտք
կուենեաս... մտիր այստեղ երբ կամենաս: Պէտք է ասել,
որ քեզ լաւ եմ ձանաչում, շատ էլ որ արդելեմ քեզ,
դարձեալ ոչ դուրս կայ և ոչ էլ պատուհան, որ չը կա-
րողանաս գալ տղիդ մօտ: (Հօրնիւսին). Իհա՛ն, ինչ արեց
սա ինձ Թունիզի պատերազմում մասնակցելու միջոցիս...
Մենք արշաւում էին դէպի հարաւ... մի կորած՝ անծա-
նօթ աշխարհ, կիզիչ արե... տենդ ու ջերմ... Մի առա-
ւօտ վրանիցս գալու ժամանակ հրամանատարս ինձ ա-
սում է. «սիրելի լիւթօրընան, մի տիկին ուզում է ձեզ
տեսնել»: Յեա եմ նայում և տեսնում եմ իմ մօրս դիմա-
ցրս կանգնած. եկել էր ուղղակի, բոլորովին միայնակ ա-
ռանց վախելու...

Մարքիզ. Այ, ի՞նչից պէտք է վախէի, քանի որ այն-
տեղ էիր դուն:

Գիղ. (Համբուրբերով). Ա՛խ, Թանկագին մայրիկս:

ՏԵՍԻԼ Գ.

Նրանք մի ծառայ.

Ժառայ. Պատառուիչն (tapissier) այնտեղ է արդէն, ուզում է ձեզունը շինել:

Գիղ. Տիկնոջ սենեակումն է. շատ լաւ, այս ըոպէիս կը գամ. (քանի մի քաչ է անում դէպի ձախ):

Մարքիզ. (Տիրագին). Տիկնոջ սենեակը... խեղճ տըզայ:

Ժառ. (Դիդիէին). Անտառապահն էլ շատ է ցանկանում ձեզ տեսնել:

Գիղ. (դառնալով). Սօսկեօրը, ասան, Թո՛ղ գայ: (Ճառան դուրս է գնում):

ՏԵՍԻԼ Գ.

Դիդիէ, Մարքիզուհին, Հօրնիս, յետոյ անտառապահը.

Հօր. (Դիդիէին). Երևի, քո նշանաւոր Սօսկեօրն է այն:

Մարքիզ. Այն անտառանենդին (braconnier) սա պահապան է կարգել:

Գիղ. Հէնց նա է.

Հօր. Ի՞նչպէս է կատարում նա իր նոր պաշտօնը:

Գիղ. Հիանալի կերպով:

Մարքիզ. Այո՛, բայց արի տես Թէ Ժողովուրդը ո՞ր սատիճան դժգոհ է:

Գիղ. Շատ հարկաւոր է, նրանք լաւ գիտեն տարօրինակ եղածս:

Մարքիզ. Կարելի է ասել մի քիչ էլ աւելի:

Գիղ. Մի վախի, մայրիկս, ամուսնանալուցս յետոյ տես Թէ ի՞նչպէս կը խելօքանամ:

Սօսի. (զրսից սանդուղքի վրա). Պարոն 'Իղիկ, ես արդէն այստեղ եմ:

Դիդ. Ի՛հհ, ներս արի էլի, ծերուկ. ինչ կայ:

Սօսի. (յայտնւելով). Բարև ձեզ, պարոններ, տիկին և ընկերութիւն: Ես նախ քան շները կը տանէի, ուզեցի հաստատապէս իմանալ թէ բոլորովին վճռել էք, պարոն Մարքիզ:

Դիդ. Ի՞նչ ասել կուզէ, ի հարկ է վճռել եմ:

Հօր. Ի՞նչ. շներիդ հեռացնու՞մ ես քեզանից:

Դիդ. Այո՛. Մադըլէնը շատ է վախում նրանցից. նրա համար եմ անու՞մ այս զոհաբերութիւնը և արածիս էլ շատ ուրախ եմ:

Մարքիզ. Մի փոքր էլի սպասիր:

Դիդ. (նեղացած). Սորա՞տե՛լ. ի՞նչ բանի համար,

Մարքիզ. (քաշւելով). Քանի որ այստեղ չէ նա:

Դիդ. Նա շուտով այստեղ կը լինի:

Հօր. Քեզ համար իսկական մի զրկումն է այդ. այն էլ դուն և շներ չունենաս:

Դիդ. Մօօ, շատ երկար չի քաշի. որովհետև որակ ժամանակ հետո կը տանեմ, յետոյ մենք կը գնանք նրանց տեսնելու պահապանի մօտ, Մադըլէնն էլ կամայ կամայ կը սովորի:

Սօս. Աւելի հաւանական է, որ նրանք չեն դիմանայ առանց ձեզ, պարոն 'Իղիկ, մտնաւանդ Միրակէտը... Ռ՛ջալի զգայուն է խեղճ կենդանին: Չը գիտեմ, ինչպէս պահել նրան: Բայց որովհետև հրամայում էք...

Դիդ. Տէր Ատու՞մ. արն, ինչպէս քեզ հրամայում են. չէ որ այժմ դուն օրինակատարն ես. Ծանր է քեզ պահապանի պաշտօնը միթէ:

Սօս. Ծանր չէ ամենևին... միայն թէ գրութիւնս է փոխւում մի փոքր:

Հօր. Հասկանալի է շատ, որովհետև իր արհեստին

բոլորովին հակառակ է այս նոր պնդածը:

Ռիդ. Իսկ դուք պէտք է լինեալ այժմս... սեղանը
ամեն օր պատրաստ, լաւ ճաշ եւ ուտում, քնում եւ հան-
գիւնալ խղճով...

Սոս. (նայում է հաճուքով իր բոլորովին նոր հա-
գուտին). Այնպէս է, որ ներկայ կեանքս աւելի լաւն է...
բայց և այնպէս ինձ ծիծաղելի է թուում երբ ատիպաւած կը
լինիմ ձեռքս մի շանցաւորի վրայ դնել...

Ռիդ. Հասն, ջըլեմ, չիմանամ, որ մեղմ վարուես նը-
րանց հետ, նայիր:

Հօրն. Շատ էլ խիստ վարուել պէտք չէ:

Մարքիզ. Այնպէս արէք, որ ոչ մի դժբախտութիւն
չըլատահի:

Սոս. Ա՛խ, տիրուհի... ուղիղ է այս, որ անտառա-
նենդ են, բայց ոչ շարամիտ. դուք էր թէ չարամիտ լի-
նէին... շատ ուրախ կըլինէի. որովհետեւ բարկացած մի-
ջողին մարդս շատ չէ մտածում հետեւանքի մասին, ու-
րեմն թող ամեն մէկը իր գլխի ճարը ինքը տեսնէ: Չէ,
այ ասեմ ձեզ, պարոն մարքիզ, թէ ինչն է ինձ նեղաց-
նում, այն որ ես չաւ գիտեմ այն խեղճ ոչորմելիների ա-
մեն սատանայութիւնները: Իրաւացի չէ. ոչ, ոչ. ես զգում
եմ արածիս անիրաւ եղածը:

Ռիդ. Ինչի, էէ:

Սոս. Հէնց այն պատճառով, որ պահապանները...
ժանդարմները շատ խորամանկ և սատանայ չըպէտք է
լինին. բաւական է արդէն, որ նրանք օրէնքով կարգ-
ւած մարդիկ են: Այդ միւսնոցը կը լինէք, եթէ շնորր
աւելի զարգացած հոտառութիւն ունենային քան թէ
խեղճ նապատակները... Արեմն, ստէք որ էլ Աստուած
չըկայ, էլ չի...

Ռիդ. Վնաս չունի. դուք կտրիճ եղիր միայն: Մի
լաւ մտածիր, որդիք ունիս, կին ունես. տեսի՛ր ես հօ,

Նոր կարած ծառի հէնց վերաւոր տեղից նոր-նոր և ուժեղ ճիւղեր են բողբոջում, այնպէս էլ դու պէտք է լաւ լաւ օրդիք ունենաս:

Սօս. Կաշխատեմ, պարոն մարքիզ, բայց դարձեալ կասեմ, Աստուած վկայ է, որ այս արհեստը աւելի հեշտ էի կարծում... մնաք բարով, սարոններ, տիկին և ընկերութիւն: (դուրս է գնում):

Դիլդ. Պէ՛հ, գնա, կարիճ եղիք. (նայում է Սօսկեօրին, որ սանդուղքներից իջնում է. Հօրնիւսին). Լաւ հասակ ունի, այնպէս չէ՛:

Հօրն. Իրաւ, որ ժամդարմի համազգեստ հագնող գողի համար...

Դիլդ. (ուրախ). Այնպէս չէ՛. ճշմարիտ, մարդս կարող է հեշտութեամբ խարել: Այժմ տեսնենք, թէ սատառիչը ինչ է ուզում. այս բռակէիս կը գամ, մայրիկս. (դուրս է գնում ձախ դռնից):

ՏԵՍԻՒ Ե.

Մարքիզուհի. Հօրնիւս

Հօրն. (երկար լռութիւնից յետոյ). Պէ՛հ, ստէք, տեսնեմ, ի՞նչ կայ:

Մարքիզ. Վերջացաւ արդէն:

Հօրն. Ձեզ նայածիս պէս, խկոյն հասկացայ... Ուրեմն լինելու բան չէ՛:

Մարքիզ. Ամենեին... անկարելի է...

Հօրն. Միշտ միևնոյն պատճառով... հօր հիւանդութեան ժառանգականութիւնը, հա՛...

Մարքիզ. Այո. նրա ասելով՝ հայրը ուղեորելուց առաջ արդէն հիւանդ է եղել: Իսկ Սէնէգալում ջերմիչը...

Հօրն. Այդ միակ դէպքը աւելի հաստատ է, այո՛, ես սպասում էի որ այդպէս կը վերջանայ: Ի՞նչ պատասխանեցիք:

Մարքիզ. Ի՞նչ կարող էի պատասխանել, բարեկամ, մինչդեռ միևնոյն կարծիքին էի և ես այն գաղափարի մասին, որ շատ ժամանակից ի վեր սարսափեցնում էր ինձ Դիդիէի վերաբերմամբ: Նոյն իսկ այսօր էլ ոչ մի կերպ չէի ուզի, որ զուակս կասկածէր այն բանի մասին:

Հօրն. Այդ միևնոյն է, նա լաւ է կատարել իր հարց ու փորձը այդ պարոն խորհրդականս... Երեք օր: Մարքիզ. Նրան դուք անկեղծ մարդ չէ՞ք համարում: Հօրն. Օ՛, ոչ:

Մարքիզ. Ազնիւ մարդիկ են նրանք, սակայն: Հօրն. Էստէլի մասին չէ ասածս. նա մի անմեղ և շատակեր շող կատու է... միւսը, իր խորհրդական. եղբայրը...

Մարքիզ. Այդպէ՛ս ուրեմն, դուք կարծում էք, որ... Հօրն. Ես կարծում եմ, որ պարոն Կաստիլյանը, իր կնոջ մահից յետոյ, ուրիշ բան չէ մտածել, եթէ ոչ արդելել Դիդիէի ամուսնութիւնը և իրեն վերապահել թէ ջահել աղջիկան և թէ նրա թանգագին օփիտը:

Մարքիզ. Հօրնիւս, Հօրնիւս: Հօրն. Այո, ասածս նրա ճակատի վրայ կարելի էր պարզապէս կարդալ... միայն Մադրէէնն է ինձ զարմացնում. մի՞թէ բան չէ ասում, չէ բողոքում:

Մարքիզ. Ամենեւին... Հօրն. Էլ ես բան չեմ հասկանում այստեղ... գիտե՞ նա դուրս չբախու պտոճաւը:

Մարքիզ. Ի հարկէ, գիտէ: Հէնց այն բանով են սարսափեցրել, որ կարող է նա ապագայում ինձ նման անբախտանալ, որ որդիքը կը ժառանգեն հօր խելագարութիւնը... կրկնում եմ դարձեալ, որ Մադրէէնը շատ պատուական ջահել աղջիկ է, կրթւած ինչպէս միւսները սուհասարակ: Ի՞նչ կուզէիք, որ նա անէր, կարող է լալ, այն էլ շատ կամաց, բողոքել միայն խօսքով, որովհետև

տակաւին անչափահաս է:

Հօրն. Բայց նա սիրում է... անդորր սէրը, այն, ես հասկանում եմ երբ ճանտիան հայելու պէս հարթ է. այն ինչ ես չուսողը ել էի աւելի խոչընդոտի վրայ, այս սատուածային ոյժին, որ ցանկութիւն, կրքեր է ծնեցնում... Ձեր զաւակի նման տղայի հետ զժար է: այն ինչ նայելով օրիորդի աչքերին, կարծես, վրդովմունք, զայրոյթ կայ նրանց մէջ... ինչպէս ազնիւ ցեղի ձիերին ձիագոտի մի հարւածն էլ բու է, որ նրանք թռչկոտան:

Մարքիզ. Այն, բայց ոչինչ չէ երեւում. մինչև անգամ ես չըկարողացայ նրան տեսնել:

Հօրն. Արեմն ինչ էք անելու. յարանեցէք Վիդիէին, որ...

Մարքիզ. Յայտնե՛մ. ո՞չ, ոչ երբէք... անկարող եմ... խեղճ զաւակս. կարելի՞ բան է, որ նա իր մօրից այդպիսի հարւած կրէ: Նրանց ասի. „ինքներդ կատարեցէք ձեր յանձնարարութիւնը“:

Հօրն. Կանէն նրանք այդ:

Մարքիզ. Այո, քոյրը. բայց ոչ նա:

Հօրն. (ինքն իրեն). Աւելի լու. (բարձր ձայնով). բայց էրբ:

Մարքիզ. Իսկոյն ե եթ... Օրիորդ Կատարեցին հետս եմ բերել կառքով:

Հօրն. Բայց ինչ տեղ է նա:

Մարքիզ. Կաթնատանը թողի, ուղում է սերով տրաքի. հանդիստ է բոլորովին... Ահա գայիս է... Չի կարող երևակայել թէ ինչ սարսափելի գործ է անելու:

ՏԵՍԻՒ 9.

Նրանք, շատ էլ քաղաքանում է սանտուզինով.

Իստել. (զաւրթ, բերանը սրբելով). Ասէք, խնդրեմ, սիրելի տիկին, ինչիցն է, որ չաղ մարդիկ շատ են սիրում

կաթնեղէնք: Ես չափազանց սիրում եմ կաթնեղէնք:
(Նկատելով Հօրնիւսին). Ա՛հ, ա. պարոն վարժապետ...

Հօրն. (ողջունելով). Օրհորդ... (բարձրանում է):

Խստէլ. (նայելով շուրջը). Դիզիէն ո՞րտեղ է:

Մարքիզ. Այնտեղ է, շուտով կը գայ:

Խստէլ. (նստելով թիկնաթոռի վրայ). Ո՛հ, ինչ լաւ

է այտեղ: Ծառ գեղեցիկ է այս փոքր դահլիճը: Մաղբ-
լէնի հետ այտեղ եղել եմ արդէն... շատ պիտի ցաւի
ամեն մի մտաբերելովք. Բայց ինչ կարելի է անել, պէտք
է համբերել:

Մարքիզ. (Հօրնիւսին). Դուք էք գնում, սիրելի Հօր-
նիւս:

Հօրն. Միամիտ եղէք, հեռու չեմ գնայ: (դուրս է
գնում վախ կողմից):

Մարքիզ. (դողալով). Խնդրեմ, ի սէր Աստուծոյ:

ՏԵՍԻՒ Է:

Մարքիզոսի, Խստէլ, յետոյ Դիզիւն.

Խստէլ. Ծառ պտուական մարդ է այս պարոնը,
որչափ համեստ, ծանրաբարոյ... Այ բոլորը բերել եմ...
այ տիֆիկը... նամակները (զգուշաբար դարձում է բոլորը
մօտիկ աթոռի վրայ): Ի՞նչ անեմ, սիրելի տիֆին, օգուտ
չունի... ինչից դուք վախում էք, այն մասին ոչ մի խօսք՝

Մարքիզ (աչքը գցած ձախ դուանը, վախելով).
Այո... Այո...

Դիզ. (ձախ դռնից ներս մտնելով ազադակում է
զարմացած). Ա՛հ, զարմուհի Խստէլ, այտե՞ղ էք. Բոլո-
րովին առողջ էք ուրեմն:

Խստէլ. Այո, ինչպէս տեսնում էք:

Դիզ. (մօրը). Ի՞նչի չափը ինձ. (Խստէլին). Մաղբ-
լէ՞նն էլ եկաւ:

Խստէլ. (փոքր ինչ շփոթւած). Ձէ, չեկաւ... գիտէք

հօ, խեղճ աղջիկը...

Դիդ. Ո՛հ, Տէր Աստուած. ի՞նչ է պատահել նրան:
Խստէլ. Ոչինչ, ի՞նչ պէտք է պատահէր... միայն այն
մասին պէտք է խօսէինք...

Դիդ. Ի՞նչի մասին:

Խստէլ. (ուրախ). Մի շատ կարեւոր բան ունիմ ձեզ
հաղորդելու, սիրելի Դիդիէ:

Դիդ. Ի՞նչ էք ուզում ասել:

Խստէլ. Տէր Աստուած, դժար է բացատրել, մանա-
ւանդ, որ ձեզ չեն յայտնել առաջուց, ինչպէս տեսնում
եմ... (ուզում է նայել Մարքիզուհուն, որ երեսը դարձ-
նում է) Թէև, ճշմարիտն ասած, շատ բնական է, որ...

Դիդ. Երկանք արիք, զարմուհի, դէ՛հ ասէք տեսնեմ...

Խստէլ. Ձեզ էլ յայտնի է, Թէ ինչպէս քմահաճներ
են ջահել աղջկները:

Դիդ. Քմահաճներ են, յետոյ...

Խստէլ. Դիտէք էլի, սկիւռի նման շարունակ շարժ-
ման մէջ են. ջահել աղջիկներին դժար է հասկանալ... Շատ
ժամանակ չէ, ինչ որ մեր աղջիկը, կարծես, անհանգիստ,
վրդոված լինի նստի իրան. «Ի՞նչի ես հալ ու մաշ լի-
նում... եթէ չես բախտաւորելու նրան... Դիդիէն խելօք
աղաչ է... խոհոյն կըհասկանայ բանի էութիւնը»:

Դիդ. (վրդոված). Բայց ընդհակառակն, ես ոչինչ
չեմ հասկանում, բոլորովին չեմ հասկանում:

Խստէլ. Հանգստացէք, բարեկամ, ի՞նչ կայ այդպէս
նեղանալու, որ ծառի տերևի նման դողում էք...

Մարքիդ. (ծանր ախ քաշելով, էտէլին). Աղաչում
եմ, վերջ տէք այդ խօսակցութեանը:

Դիդ. (բորբոքելով). Վերջացնել... բայց ի՞նչ, մի
ասէք տեսնեմ...

Մարքիդ. Դիդիէ, գաւակս, քո սիրած և քնարած ջա-
հել աղջիկը քեզնից ձեռք է վերցնում:

Իրդ. (դռնէլով). Ինչպէ՞ս. ո՞վ ասեց. անկարելի է. Ինձանից ձեռք է վերցնում... բայց ես ձեռք չեմ վերցնում և յետ չեմ դարձնի նրա տւած խոտամունքը:

Դատէլ. Սակայն դուք պտոււաւոր մարդ էք պարօն. Մարքիզ և այլապէս չըպէտք է վարուէք այսպիսի համաձայնքներում:

Իրդ. (որտաւաձայն). Ողորմած Աստուած, այս ի՞նչ է գալիս գլխիս:

Դատէլ. Ինչ որ շատ շատերին է եկել և ոչ ոք էէ ձեզ նման գլուխը մահու չէ տւել:

Իրդ. (կիսաձայն). Օ՜ՔՖ, օտրտափելի բան է... երազումն եմ, տեսիլք է այս: (մօրը կոպտաբար). Գու գիտէ՞իք այս. հա՛...:

Մարքիզ. Այո՛...:

Իրդ. Եւ բան չասիր ինձ... Ո՛հ վատ է արածդ:

Մարքիզ. Չէի կարծում... հաստատ յոյս ունէի, որ...

Իրդ. Աւրեմն Նիցցայից մեկնելը, այն հնարովի հիււանդանայր... այս ամենը պայմանաւորած բաներ են. հա՛:

Մարքիզ. Իրդիէ, գաւակիս...:

Իրդ. Ոչ, հաւատան, քեզ չեմ հասկանում... պէտք է նախագագուշացնէիք ինձ. այն ժամանակ ես կըհասկացնէի, կը սրաշտպանէի: (Ետտէլին). Վերջապէս, ստէք խնդրեմ, օրիորդ, ի՞նչ բանումն էք մեղադրում ինձ. այդ ի՞նչ ցած ամբաստանութիւն է, որին ես զոհ եմ եղել:

Դատէլ. (անմեղաբար) Ամենեւ ին, ամբաստանութեան նշույն անգամ չըկայ սրանում. կարելի բան է, մեղադրել ձեզ նման ...գծիւ ջահելին, կատարեալ ջէնտլմէնին, օիրելի Իրդիէ... Մօծպէլիէի աղնւականութիւնը ձեր մասին այս է ասում միմիայն „Հիանալի տղայ է“. հաւատացէք, բարեկամ, դուր տեղն էք մեծ նշանակութիւն տալիս այնպիսի մի թիւրիմացութեան, որը շատ սովորական է... Մասածեցէք մի փոքր և կը տեսնէք, որ հարսնախօսութիւնը մի տե-

սակ վորձնականութիւն է: Աշանւածները նախնայ են մի-
մեանց չեակ ից, հասկում են իրար վորտադարձարար և
հասկանալի է, որ եթէ բնոյթքը և ճարտիները չեն յար-
մարում... Լաւ է սաւազ քան թէ չեանոյ. հը՛, ինչ կատէք
սրան:

Իրդ. Սարսափելի է, սարսափելի:

Էստէլ. Ի վերջոյ, ինչ կապ կայ ձեր մէջ. ոչինչ—
խօսքեր և քանի մի նամակներ... Ի՞նչ կը դարձնէք ի-
րենները: (վերցնում է քոյր եղած առարկաները). Ահա ձեր
ընծաները... նրա մատանին... (կարծելով թէ նա չէ
հասկանում). այ՛, այն մատանիքը, որը դուք ընծայել էք
նրան...

Իրդ. (չարացած, համարեա երեխայի ձայնով). Ահ,
մատանին չետ են տալիս ինձ:

Էստէլ. (պահելով ձեռին շարունակ ավիկը դիմում է
մարքիզուհուն). Պարկուսի ինչպէս է չինում, չըզխտեմ,
միայն այստեղ այսպիսի իրերը պայմանով են գնում: Մեր
բոլոր գոհարավաճառները չետ են ընդունում, նրանք սո-
վոր են սրան: (Իրդիէին, յաղթանակելով). Այ, տեսնում
է՞ք:

Իրդ. (մօքը կիսաձայն). Լսիր, հեռացրու սրան, թէ
չէ կը սպանեմ:

Էստէլ. (սարսափած). Ի՞նչ ասեց:

Իրդ. (որոտաձայն). Ասում եմ, որ այդ ցոծութիւն,
գարշ անամութութիւն է և ձեր անածները, ոչ մէկը չեմ
հաւատում:

Էստէլ. (խեղտած ձայնով). Աչքս լուս. միթէ կար-
ծում էք, որ մենք, ես և խորհրդական եղբայրս ընդու-
նակ ենք...

Իրդ. Անկասկած. դուք, խեղճ միամիտ...

Մարքիզ. Բաւական է:

Իրդ. Ձեզ են ուղարկել, որովհետեւ իրենք չեն հա-

մարձակուում դալ:

Մարքիզ. Արդի, խնդրում եմ:

Գիդ. Ա՛հ, թող մի է՝ (ցուցնելով Էստէլի վրայ).
Տմարդու թիւն է դիմացս կինմարդ դնել: Նա լաւ գիտէր,
որ թոյլ չէի տայ վերջացնելու, որ մի խօսք ասածին պէս
խսկոյն նրա գլուխը կը ջախջախէի: (Գոչնամուրի վրայից
վերցնում է փայտիկը և շշշեցնում է. Էստէլին). Հեռա-
ցէք. դէ՛հ հեռացէք, չըգիտեմ թէ ինչ կանեմ...

Մարքիզ. Գիգէի, որդի:

Էստէլ. (շատպելով դէպի դուռը). Տէ՛ր Աստուած,
դուն ողորմես:

Գիդ. (նետելով փայտը վազում է Էստէլի ետևից).
Ոչ, ոչ, սիրելիս, մի՛ք գնայ, այդպէս մի՛ք թողնի ինձ.
(յետ բերելով): Գուք շատ բարի էք, ես ձեզ սիրում եմ,
յարգում եմ, ներեցէք ինձ: Նս բարկութեանս ժամանակն
ասի... մարդ չըգիտէ ոչ արածք և ոչ ասածը... խնդրեմ
չընեղանաք ինձանից: Այն աստիճանի սարսափելի է...
այնչափ անսպասելի... Մի լաւ միտք արէք, թէ ինչպէս
բախտաւորութեան մօտեցել էի, բոլորովին հաստատ հա-
մոզւած էի և յանկարծ, յանկարծ... (յուզմունքից չէ կա-
րողանում ձայն հանել, մարքիզուհին շրջում է երեսը և
լալիս):

Էստէլ. (նույնպէս յուզւած, արտասուքը սրբելով.)

Խեղձ տղայ, արտասուքով յետ էք դարձնում ինձ. քիչ է
մնում, որ ես էլ լամ: Գիտէք հօ, թէ ինչպէս եմ ցանկա-
նում, որ մարդիկ բախտաւոր, միասին լինեն: Հաւատա-
ցէք, չէի դալ եթէ կարծէի որ... ձեռքս խղճիս վրայ
դնելով կտսեմ, որ բոլորովին միտք չունէի ձեզ այդպէս
վշտացնելու:

Գիդ. (ցատկելով). Վշտանցնել: Հեռացնում են յոյս,
ուրախութիւնս, սիրտս, հոգիս, կեանքս... ամենը ինչ որ
ունեմ, ինչ որ իմս է, իմս. գողանում են ինձանից, խլում

էն և այս ամենը սրանց ասելով վշտացնել է նշանակուած ծիծաղում է յուզւած:

Էստէլ. Տէր Աստուած, ինչպէս վերաւորել է:

Դիդ. բռնելով Էստէլի (Թեւ կոպտաբար), Թշա-
ռական, մէկ շուրջներդ նայեցէք, է. այս տունը նրանն
է, մերն է... այս կարասիքը նրա համար է, մենք միա-
սին ենք ընտրել... բոլոր պատրաստ է, այս ամենը նը-
բան է սպասում... Եր դաշնամուրը... Եր գրքերը և այժմ
ինձ ասում էք թէ նա էլ չէ կամենում, չի դայ... բայց
անկարելի բան է այդ: Ո՛հ, աղաչում եմ, ասէք որ այդ-
պէս չէ, չի կարող լինել... մայրիկ... Մաղը՛ լինւ ընկնում
է թիկնաթուի վրայ, խեղտում է իր աղազակները և հե-
կեկանքը բարձրացնում:

Էստէլ. (ցած ձայնով, սարսափած). Այ. արդէն խե-
լագար է, կատարելապէս խելագարւեց: (բեմի խորքում,
սանդուղքի վրայ երևում է Հորնիւսի շւաքը:

Մարքիլ. (կտելով Էստէլին կամաց դէպի դուռ).
Գնացէք, գնացէք, թողէք նրան...

Էստէլ. Ո՛հ, Տէր Աստուած... երբ մտածում եմ, որ
խեղճ մեր Մաղըլէնը. (գնում է ձեռները դէպի երկինք
ամբարձած Հորնիւսի հետ խօսակցելով):

ՏԵՍԻ, Ը.

Մարքիզոսի, Դիդի.

(Ինզիկէն հեկեկում է գիւանի վրայ. մայրը մօտեցել է և
նայում նրան, քնքշաբար՝ Երկարատե լուռթիւն, որից
լետոյ նա նստում է ուղիղ, մնում է նստած, արտում է
աչքերը կարծես խորը քնից զարթնելով):

Դիդ. (նայելով իր շուրջը). Նա գնացել է արդէն:
Մարքիզ. Այո... չըհամարձակեցի այլ ևս պահել
նրան, դուն այն ստախճան վրդովւած էիր, որ...

Ինդ. Կաւ է, այդպէս արածի շատ լաւ է... թէ չէ մենք նրա ներկայութեամբ չէինք կարող ազատ խօսել... (տեղից վերկենալով՝ քայլում է գանազան կողմը, վերջը կանգնում մօր առաջ). Այժմ ասա ինձ պատճառը, այս մերժման իսկական պատճառը. քեզ լաւ յայտնի է անշուշտ, ուրեմն ինձ պէտք է յայտնես:

Մարքիզ. Ձեռն կարծում, որդի, թէ կարող է մի այս պատճառ լինել, բացի նրանից ինչ որ քեզ ասեն... ջահել աղջկայ մի քմահաճոյք: Այս այնպէս մութն է, այնպէս ծածկւած, այս վտարիկ արարածները:

Ինդ. (աւելի նշաններով քան թէ բերանով). Այ:

Մարքիզ. Կամ, կարելի է, շատ խոհեմութիւնից նրկատում է, որ իր սիրտը չի կարող քոնին համազգայ, կամ թէ վախում է, որ չէ սիրում քեզ բաւականաչափ:

Ինդ. Այնպէս այդպէս է, ուրեմն էլ ի՞նչ էր ուզում ինձանից, ի՞նչի ասեց, որ սիրում է ինձ. ի՞նչի գրեց նամակներ: Այստեղ պահած ունեւ նրա նամակները, նրա բուսանկարը, (բաց է անում թղթակիցը — portefeuille — և մէկ մէկ համում է դողդողալով): Ահա տես, սլափերի տակին ի՞նչ է ստորագրել իր ձեռքով...

Կարդան, բարձրաձայն կարդան, որ ես իմանամ...

Մարքիզ. (կարդալով). Ինքիէին, մինչի մահ:

Ինդ. Ես ինձ խաբում էր ուրեմն. (խլելով պատկերը). Այսպիսի վառ և շիտակ աչքերը... այսպիսի գեղեցիկ և թարմ բերանը... Մի՞թէ սրանք խաբող աչքեր են. թողէք ի սէր Աստուծոյ: (համբուրում է մոլեգնաբար պատկերը). Ճանաչում ես հօ Մադրլէնին, ինչպէս ես. հօ գիտես, որ նա անընդունակ է այնպիսի տմարդի և անգութ քմահաճոյք ունենալ, հետևապէս այստեղ ոչ մի քմահաճոյք չըկայ: Հապա աւելի ընտանեկան մի տխուր գաղտնիք, որ ինձանից ծածկել են միշտ և որը շուտով մանամ:

Մարքիզ. (դուրմանք կեղծելով). Գաղտնի

Դիդ. Գիտես, մայրիկ, հէնց այս րօպէիս, յուսահաս
գրութեանս մէջ... մի միտք ծնւեց գլխումս, որը թէ ար-
տասուքս ցամաքեցրեց և թէ ոտի կանգնեցրեց ինձ...

Մարքիզ. (դողալով). Ի՞նչ, ասն ատեննմ:

Դիդ. Այն, որ, կարելի է, մեր անունի վրա կայ մի
անպատուութիւն...

Մարքիզ. Ա՜հ, այդ ի՞նչեր ևս մտածում, դաւախ...

Դիդ. Կարող եմ շատ բան ենթադրել և դու չըպէտք
է նեղանաս ինձանկից. Գիտեցիր, որ այս բացառումը՝ բա-
ցի սիրտս խոցելուց, անպատուարեք է քեզ ինչպէս և ինձ,
մեր ընտանիքին, մեր անունին. անպատճառ պէտք է
իմանամ. Թող աս մեզ տառապեցնի, ոչնչացնի. (շատ
մտանցնելով դէպի իրեն մօրը, ցած ձայնով). Ասն, ինձ,
ասա...

Մարքիզ. Ի՞նչ ևս ուզում, որ ասնմ:

Դիդ. Այն, ինչ որ գիտեա... Հաւատացիր, որ ինչպէս
կուզէ թող դժնդակ լինի ասելու գաղտնիքդ, կրած ան-
բաղտութիւնիցս վերջը կարող եմ ամեն բան լսել:

Մարքիզ, Հաւատացիր...

Դիդ. Թէ որդուդ արեւը սիրում ես, պատասխանիր
ինձ, տղայում եմ, պատասխանիր ինձ...

Մարքիզ. (ցած ձայնով). Ի՛հ հ, խօսիր... կը պատաս-
խանեմ:

Դիդ. Հայրս, այն անբախտ արարածը, որին միայն
հեռւից եմ տեսել, պառկած, խորտակած...

Մարքիզ. Լաւ, յետոյ...

Դիդ. Նախ քան մահը կընկճէր նրան չէ՞ ունեցել
արդեօք մի տկարութիւն... մի...

Մարքիզ. (Թող չըտալով վերջացնել), Լա՛նր, Դիդիկ.
հայրդ ամենահաւատարիմ գինւորն է եղել. աւելի ազնիւ
և հպարտ ամենից. ամբողջ կեանքում ո՛չ մի սարտա-

զանցութիւն, այն, հաւատոն, երդում եմ քեզ:

Դիզ. Ահ, շնորհակալ եմ, մեծ բարեք արելը ինձ:
(հեռանալով ճակատը շփում է):

Մարքիզ. (մի կողմը). Իմ մասին բան չը հարցրեց...
ժողքը կասկած անգամ չըլայտնեց. Ահ, ազնիւ սրտանի:

Դիզ. (մտանալով մօրը). Արեմն նրանք մեզ պր-
պարտում են անիրաւութեամբ:

Մարքիզ. (վեհերոս). Զրպարում եմ:

Դիզ. Այն, ամենասարսափելի կերպով, ճշմարիտ չէ՞
միթէ:

Մարքիզ. Այ:

Դիզ. (ցատկելով). Ինչպէ՞ս այդ:

Մարքիզ. Այսինքն... չեմ կարծում թէ նրանք ու-
զեմային քեզ զրպարտել:

Դիզ. Աւրիշ ինչ կը կամենայիր, ուրեմն... Ահ, մայրեր, մայրեր, դուք բոլորդ էլ մէկպսէկի նման էք... Այժմս, հէնց այս բողբոս, վիշտերս քեզ չուզեցին, բայ ե-
ղար տեսներով իմ արտասուքներս. բայց հաստատ հա-
մօզում եմ, որ դու գոհ ես: Այն, այն, դուք դո-
եա... Ես չեմ գնալ այնտեղից, դու ինձ չես թողնում:

Մարքիզ. Ա՛րքան չարն ես:

Դիզ. Լաւ, մի թողնիր. բայց չես կարող ինձ ար-
գելել սարսափութիւնս կատարելու: (վերցնում է դրա-
կը և ձեռնափաշար):

Մարքիզ. Դիզիէ, ուր ես գնում, ինչ ես ուզում անել:

Դիզ. Մի վախել, շատ հասարակ և օրինաւոր բան
եմ ուզում անել. նրա խնամակալը, պատասխանատուն
այնտեղ է, հէնց նրա հետ եմ ուզում խօսել այն մասին:

ՏԵՍԻՒ, Թ.

Նրանք. Նորնիս (վերջին խօսքերին վրա է հասնում):

Նօր. (Դիզիէին), Պատասխանատուն կասի քեզ, բայ

քնի որ չմտես. ես նրա տեղ չէի վարանի միևնույն ասել:

Գիդ. (վազելով դէպի նա), Ա՛խ, Հօրնիւս, եկար. գիտես ի՞նչ է պատահել ինձ, ի՞նչ են անում նրանք ինձ:

Հօր. Այո. բայց գիտեմ և այն, որ դուն ուզում ես մի յիմարութիւն անել:

Գիդ. Մի՛թէ,

Հօր. Ուզում ես նրանից բացատրութիւն պահանջել... Նկատիր, որ այն դատարանի կատուն շատ համակրելի չէ ինձ... Բայց վերջապէս հօ չես կարող մարդու ականջները կտրատել, որովհետև նրա որդեգրուհին քեզ չէ սիրում:

Գիդ. Սուտ է այդ. նա ինձ սիրում է: Քեզ ասում եմ, նա ինձ սիրում է: (մօրը). Ինչ հօ գիտես, տեսել ես, նա երդւել է, գրել է այդ: Խնդրեմ, չսխալէք, մի կրքոտն է, որ... Թէ այնպէս հանդարտ է երևում. տեսէք, ի՞նչ հրաւից խօսքերով է դարդարել իր լուսանկարի լետին երեսը...

Հօր. Ուրեմն, հէնց այդ է, որ նա քեզ սիրում էր, իսկ հիմա էլ չէ սիրում:

Գիդ. Բայց ի՞նչ պատճառով:

Հօր. Ողորմելի. այդ էլ չգիտես... Ուզում ես գիտենալ թէ ի՞նչի կիմարդու սիրտը...

Գիդ. (աղաղակում է արտասուելով). Բայց ոչինչ չեմ արել:

Հօր. Օրիորդի գաղտնիքն է այդ... միմիայն նա կարող է քեզ պատասխանել:

Գիդ. Առաւել լաւ. Իէ՛հ գնանք, տեսնենք, ի՞նչ կը պատասխանի... (Մարքիզուհին սարսափում է, Հօրնիւսը հանգստացնում է նրան նշանացի անելով. Գիդիէն համբուրում է մօր ճակատը): Յտեսութիւն, մայրիկ:

Հօր. (բռնելով նրա թիկից). Ասի՛ր, տղայ, զգո՛յր

սպնիւ մարդու խօսքի չափ արժէք ունի:

Դիդ. Իսկ Մաղբլէնը, գեթէ արդեօք:

Հօրն. Ոչ տակաւին:

Դիդ. Ո՛հ, Աստուած իմ, եթէ նա չուզելու լինի:

Հօրն. Սնհոգ եղիր. մայրապետը ամեն բան հոգացել է: Միայն թէ յիշու՛մ ես ինչ խոստացար ինձ: Ես քեզ համար երաշխաւոր եմ եղել:

Դիդ. Ոչինչից մի վախի:

Հօրն. Աղմուկ չըհանես գարմուհու հետ. հանդարտ եղիր:

Դիդ. (Եր վրայ վտառհերով). Օ՛, այդ մասին միամիտ կաց:

Հօրն. Այս ասում եմ, որովհետեւ ես գիտեմ ինչ սատանայ ես. հէնց մի փոքր թողնեմ թէ չէ, չանկարծ...

Դիդ. Ոչ, ոչ, հաստատ խօսք եմ տալիս:

Հօրն. (Նայելով վանքին). Ո՛րքան գեղեցիկ են վարդերը այս հինաւուրց պատերում... Ինչ անդորրութիւն, ինչ մեղմութիւն:

Դիդ. Այո՛, այստեղ է աճել նա, այստեղ են նրան սովորեցրել խարել, սուտ խօսել: (Քռուցքը դէպի վեր բարձրացնելով, սպառնալից). Ո՛հ, անիծեալ տուն, տայ Աստուած քորը քարիդ վրայ չըմնայ:

Հօրն. Է՛հ այդ չեղաւ. եթէ այդպէս պէտք է սկսես:

Տօր. (վերնայարկի տակը, ձախ կողմից երևելով).

Պարոններ, Մայրապետը խնդրեց, որ մի բոպէ մտնէք իր սենեակը: (Հօրնիւս և Դիդիէն հետևում են կոյսին վերնայարկի դէպի ձախ կողմը):

ՏԵՍԻՒ, Գ.

Նօւ. Թ. յնտոյ Մաղբլէնը:

Նօւ. Թ. Վերջնապէս... կարծեմ այսքանն էլ բաւական

է աւագ խորանը ծաղկագարգելու: (Նստում է ծաղիկները մօտ մի նստարանի վրայ):

Մադր: (Երա չետեր կանգնած, կռան տակը մի գիրք, չըճանաչելով նրան). Կամենձում էք, քոյրիկս, օգնեմ ձեզ ծաղկափնջեր կապելու:

Նօէլի: Ծատ ուրախ կը լինեմ, օրիորդ:

Մադր: (սասանած). Ո՛հ, Աստուած իմ, այս ի՞նչ ձայն է: (Նօէլին չեա է նայում). Կարելի բան է, մի՞թէ:

Նօէլի: (շատ հանդարտ, տխուր ժպտելով). Բարև, Մադրլէն... Գիտէի, որ դուք շատ ժամանակ չէ ինչ այստեղ էք, Մայրապետը չայտնել էր ինձ, ամկայն ես հսկումն ունէի, ահա թէ ինչի մենք իրար չենք պատահել:

Մադր: Բայց ես չէի կարծում... Արքան ուրախ եմ... ոչ ոք բան չէ ասել ինձ...

Նօէլի: Ո՞վ կարող էր բան ասել իմ վերաբերութեամբ. այստեղ ոչ ոք չըգիտէ թէ ով է Նօէլին... Խեղճ Նօէլի, յիշում էք դարձեալ նրան... Կատարեալ երեխայ, շատ թեթև աղջիկ, բայց ոչ չարամիտ, ճշ, հաւատարմութեամ եմ, չարամիտ չէ... բայց ի՞նչ եղաւ, արդէն վերջացել է. այլ ևս չըկայ Նօէլին: Ամենքը գիտեն, որ այստեղ նորընծայ եմ և շուտով Մարի-Թերեզ կը կոչուի:

Մադր: Խեղճ բարեկամուհիս, բայց ի՞նչ է պատահել ձեզ, այն ինչ ես շատ բախտաւոր էի կարծում ձեզ:

Նօէլի: Ծատ բախտաւոր եմ, Մադրլէն: Ձեզ հետ տեսնեամ օրէս սրբան դառն օրեր եմ տեսել, մարդկային թշուառութեան վերջին մրուրը քամեցի. տմարդութիւն, դաւաճանութիւն, ստախոսութիւն... Ա՛խ եթէ գիտենաք, եթէ կարողանայի ձեզ ասել... Բայց դժբախտութիւնս այն աստիճան գարշելի է, որ չեմ կարողանում նոյն իսկ ձեզ պէս սրտակից բարեկամուհուս պատմել... Օ՛հ, շատ գարշելի է... Վերջապէս, թողնենք այս... Այժմ Աստուած քնդունեց ինձ, հիմա շատ լաւ եմ: Ազձում էք

փնջեր կապենք:

Մաղբլ. (Նստած նրա քովը բան է անում). Ես էլ դժբախտութիւն ունեցայ:

Նոէլի. Աւրեմն դուք էլ չէք պահպելի:

Մաղբլ. Ոչ, վերջին ըսպէին բանը դուրս չեկաւ:

Նոէլի. Զարմանալի չէ՞ արդեօք մեր երկուսիս նոյնա- նման դուրսթիւնը: (Յած ձայնով). Արքան այդ մարդիք ստախոս են, ասէք խնդրեմ, որ աստիճան տմարդի են... Նա թողել է ձեզ... այլ ևս չէ ուզում ձեզ նայել:

Մաղբլ. Ո՛հ, ոչ... իմ բանը ուրիշ է... խնամակալս դէմ կեցաւ, ես ինքս չուզեցի:

Նոէլի. Ճշմարի՞ր... Խեղճ պարոն Գիգիէ, որքան տանջւած կըլինի... Բայց ի՞նչպէս կարողացաք այդ անել, դուք որ շատ բարի էք...

Մաղբլ. Ես մեղաւոր չեմ, հաւատացէք... խոչնդոտ, մի անչաղթելի խոչնդոտ կայ... Գիգիէի հալը խելագար էր... մեզանից միշտ գաղտնի են պահել այս... և այն- պիսի մի խելագար, որ որդիքն անպատճառ...

Նոէլի. Ո՛հ, դժբախտ մարդ:

Մաղբլ. Շատ վշտագնեց ինձ այս բանը:

Նոէլի. Աւրեմն, ինչպէս յաճախ ասում էիք, եկել էք ապաստանել ձեր հին վանքում:

Մաղբլ. Ազաւինել, հանգստանալ քանի մի օրով: Բոլոր յուշերս (souvenir) այստեղ են, նորից եմ սկսում մանկութիւնս: Նամանաւանդ սիրում եմ այս փոքր խցիկը: ձաշից չետոնեբը՝ երգեցողութեան դասի միջոցին մի գիրք հետս առած գալիս եմ նստում այս նստարանի վրայ... Գեռ չէ՞ սիււել:

Նոէլի. Երգեցողութեան դասը... չէ դեռ. այնտեղ ես չեմ լինի... այն դասը ես եմ պարապում, այնտեղ և երգեցիկ խմբի վրայ ես եմ նշանակւած:

Մաղբլ. Ո՛հ, ձեզ եմ պարտական անցուցած գեղե-

ցիկ ժամերով: Փոքր ազգիկներն ձայնի թարմութիւնը հանդատացնում, սիրտում է ինձ: Այս մի օրհնած հանգրսութիւն է... Կարծես թէ այլ ես վիշտ չունեմ: (Արտութիւն, երկու ջահիլ ազգիկները շարունակում են վրնջեր կապել):

Նոէի. (խորը հոգոց հաններով). Ա՛հ, մենաստանի անդորրութիւն, չըկայ ուրիշ օթեան... մի այլ ապաստարան կեանքի դէմ, տխուր, դժնդակ կեանքի դէմ: Ճշմարիտ, շատ դժբախտ եղայ, խիստ հարւածներ կրեցի... Այ, հէնց այս բռնկիւ վարդեր քաղելու միջոցին մտածում էի թէ որքան հեռւոր, անորոշ է այս ամենը... Վիշտ միայն մի տեսակ թմբութիւն է թողել վրաս:

Մաղը. էլ ոչինչ մասին չէ քցւում աշխարհիս վրայ:

Նոէի. (եռանդով). Աչինչ:

Մաղը. Բախտաւոր էք կատարելապէս:

Նոէի. Աչ կատարելապէս. ես դեռ նորընծայ եմ միայն: Բախտաւորութիւնս կատարեալ կը լինի երբ ես կը ձեռնադրեմ:

Մաղը. Ե՛րբ կըլինի այդ:

Նոէի. Երբ մեր Մայրապետը կը կամենայ: Նա ասում է, որ ես դեռ ջահիլ եմ, աէտք է սպասել... Ե՛լե սպասեմ: (Կրքոտ). Ա՛հ ձեռնադրութեան օրս, այն օրը, այն, խկապէս բախտաւոր կըլինեմ:

Մաղը. Ա՛րքան կուզենայի կործութիւն ունենալ ձեզ պէս վարելու:

ՏԵՍԻԼ Գ.

Նրանք, Էստէ Խորհրդակա՛նը.

Էստէ. (դառնալով իբր թէ ուզում է մէկի հետ խօսել). Տեսնում եմ արդէն, շնորհակալ եմ: (Մօտենալով նստարանին, որտեղ երկու ջահիլ ազգիկներն աշխատում են). Մաղըլէն... Ե՛լ մնաս բարով, գեղեցկուհի:

Մագ. (ոտի կանգնելով, շատ զարմացած). Վհ, դուք այստեղ էք եղել: (Համբուրում են նրանք):

Խորհր. Բարե, փոքրիկ զարմուհիս:

Մաղը. (փոքր ինչ վախեցած). Դուք էլ էք եկել. ի՞նչ կա, ի՞նչ է պատահել:

Խորհր. Ես էի ուզում հարցնել այդ:

Էստէ. Մայրապետը մեզ խորհրդի է կանչել:

Մաղը. Չգիտեմ, բան ասած չէ ինձ... այնու ամենայնիւ, գնամ յայտնեմ նրան:

Խորհր. Արդէն յայտնել են, զարմուհիս:

Մաղը. Ուրեմն մի փոքր նստեցէք:

Էստէ. (զւարթագին). Ո՛հ, ինչ լաւ է այստեղ... գով է... անուշահոտութիւն է բուրում:

Մաղը. (կիսաձայն, որովհետև նորընծան մօտիկ փնջեր է կապում). Այն տեղից ի՞նչ համբաւ: Այ որ չէ՞ եկել:

Էստէ. Չէ, ոչ ոք:

Մաղը. Նստակ էլ չըկմ:

Էստէ. Այ:

Մաղը. Ո՛հ, առաւել լաւ:

Էստէ. Երէկ գնում էի ատեան Խորհրդական եղբորս բերելու, Մարքիզի լանդօն անցնում էր այն միջոցում... մենք միմեանց փոքր ինչ սառը կերպով բարևեցինք... բայց քաղաքավարութեամբ:

Խորհր. Կարծեմ այս բանը վերջացել է արդէն:

Էստէ. Պէտք չէ այլ ևս մտածել այն մասին, սիրուն աղաւնեակս:

Մաղը. Աւանգ, շատ կըցանկայի այդպէս. բայց քարի նման սրտիս վրայ է ծանրացած... այն հոգար, որ խեղճ տղան իմ պատճառով այն աստիճան յուսահատուել է:

Էստէ. (յուզւած). Ուզիդ որ ես էլ շատ մեղքացայ խեղճ տղային անցեալ որ իր տանը...

Խորհր. (ինքն իրեն, կատաղած). Տես լինչիւր է
ասում է:

Էստէլ. (նկատելով նրան, արած սխալը ուղղում է).
Միայն թէ պարիզեցի է էլի, դիտէք հօ, անհատուտ,
շուտ մոռացող:

Խորհր. (նորընծային, որ գնում է հետը ծաղկափրն-
ջեր տանելով). Խնդրեմ, քոյրիկ, մի՛ք գնայ... եթէ մեր
ներկայութիւնը...

Նօէլի. Այ, ոչ, արդէն փնջերս կապեցի, պէտք է
մատուռը տանեմ: (Անհետանում է խորքում):

ՏԵՍԻԼ Ե.

Նրանք ստանց Նօէլի:

Էստէլ. (ցած ձայնով եղբորը). ձանաչեցիր նրան:

Խորհր. Օրիորդ Մէրէսն էր:

Մաղբ. Այո... Գիտէ՞ք ինչի է մտել Կասարյա քոյրե-
րի մօտ:

Էստէլ. Մի չիմարութեան պատճառով... որովհետեւ
չըլաջողեց ամուսնանալ... այս էլ ձերի նման մի պատ-
մութիւն է, միայն այն գանազանութեամբ, որ այստեղ
տղան է մերժողը:

Մաղբ. Բայց մերժման պատճառը դիտէ՞ք դուք:

Էստէլ. (աչերը դարձնելով խորհրդաւոր կերպով).

Մի ժամանակ նրա մօրը խայտառակութիւն է պատա-
հել... ամբողջ քաղաքը դրանով էր զբաղւած... որից
չեսոյ հասկանալի է որ...

Մաղբ. Սակայն աղջիկը դրանում մեղաւոր չէ եղել...

Էստէլ. Այ, Տէր Աստուած, խեղճը մեղաւոր չէ:

Խորհր. Արե՛ ու այնպիսի մօր աղջկայ հետ սրակելի:

Մաղբ. Բայց մի՞թէ դուք իրաւացի էք դանում, որ
որդիքը իրենց ծնողների յանցանքի պատճառով տուժեն:

Էստէլ. Անպատճառ... երեւի բան կայ դրանում...

Խորհր. (ընդմիջելով). Իրաւ թէ անիրաւ, օրէնքը

հրամայում է, պէտք է հնազանդել: Նա շատ լաւ է հասկացել, խեղճ աղջիկը, որ նախադասել է փակել այստեղ քան թէ ենթարկել նոր նոր մերժումներին և անպատուութիւններին:

Մաղը. Ո՛հ, ասէք ինչ կամենաք, իմ ինամական, բայց մարդս այս բանի դէմ գլթուում է, վրդովւում է:

ՏԵՍԻՒ Զ.

Նրանք, Մայրապետը, Հօրնիւ գալիս է օտի վերնայարկի կողմից.

Մայր. Պարոն Խորհրդական, ձեր խոնարհ աղախինն էմ:

Էստ. (ոտի կանգնելով). Աա, այ մայրիկս: (աւշում է անձնելով Հօրնիւսին, որ սառնութեամբ է բարեւում):

Մայր. (Էստէլին). Նեղութիւն միք քաշի, օրիորդ. (յոյց տալով դէպի խորքը). Մեր թռչնակները իրանց երգեցողութեան դասի դաշլայիկը տակաւին չեն սկսել, այստեղ լաւ կարող ենք խօսակցել... Արդէն ճանաչում էք պարոն Հօրնիւսին, պէտք չըկայ նորից ծանօթացնելու (Մաղըլէնին): Իսկ դուն, փոքրիկս, թող մեզ քանի մի բոպէ, բայց շատ հեռու չըգնաս, մեզ կըհարկաւորւես շուտով... Ո՛հ, ի՛նչի ես վրդովւում: Գիտես հօ, որ մենք բոլորս սիրում ենք քեզ, քո բարտաւորութիւնն ենք ցանկանում... (համբուրում է ճակատը): Գնա, աղջիկս, գնա. ես քեզ կը կանչեմ: (Մաղըլէնը հեռանում է դէպի աջ կողմը):

ՏԵՍԻՒ Է.

Նրանք առանց Մաղըլէնի.

Մայր. (Հօրնիւսին): Նստեցէք այստեղ: Սիրելի Հօրնիւս, (Հօրնիւսը շնորհակալութիւն է յայտնում, նստում է և ինքը). և ուղղակի խօսենք գործի մասին, (Դիմում

է Խորհրդակահանին և նրա քրոջը). դ՛Աւէլն Մարքիզը, հակառակ ձեր ասածներին, խորին կերպով համոզւած է, որ Մադըլէնին ստիպուծ են խօսել և վարել հակառակ իր կամքին, (Էստէլը սրտմտած ծամածռութիւններ է անում). և կամենում է ունենալ նրա հետ...

Հօրն. Նրա հետ առանձին:

Մայր. Վերջնական խօսակցութիւն, որում Մադըլէնը կը յայտնէ նրան իր որոշումը: Այս պայմանով նա վճռել է ընդունել մերժումը և յետ դարձնել բոլոր այն սիրազգաց գրաւականները, որը նա իբր աւանդ է ստացել: Լ'ան է այսպէս, պարօն Հօրնիւս:

Հօրն. Հէնց այդպէս:

Մայր. Ինձ թւում է, թէ սա ամենալաւ միջոցն է բոլորիս համար, ծանր և դժւար կացութիւնից դուր գալու: Բայց նախ քան Մադըլէնին ասելս՝ ուզեցի և ձեր կարծիքն իմանալ:

Խորհրդ. Թոյլ տւէք, խնդրեմ, սրբուհի Մայրապետ, նկատել, որ ես շատ եմ ցաւում տեսնելով ձեր միջամբտութիւնը ընտանեկան այսպիսի տխուր վիճարանութիւնների մէջ:

Մայր. Եւ ի՞նչի այդպէս, պարօն Վաստելլան: Նկատեցէք, որ ես էլ լիօքք ի շատէ պատկանում եմ ձեր երկուսիդ ընտանիքներին: Պարօն Հօրնիւսի շատ հին բարեկամուհին եմ, որը լիտարինում է այս բոպէիս Մարքիզ դ՛Աւէլնին և օրիորդ Բէմօնդին տասը տարի ինձ մօտ է ապրել... Սո նրա խօսապէս մօր տեղն եմ եղել, ես եմ մեծացրել նրան... իմ կարծիքով ընտանեկան այս տեսակ տարաձայնութեան մէջ միջամտելս շատ բնական պէտք է համարել:

Խորհրդ. Աթէ ես ցաւում եմ տեսնելով ձեզ այս հարցում խառը, պատճառն այն է, սրբուհի Մայրապետ, չընայելով դէպի ձեզ տածած ակնածութեանս, որ ես

տախաւած եմ դէմ կենալ ձեր ցանկութեանը, Այն տեսակ-
ցութիւնը անկարելի է:

Խորհ. Ի՞նչ պատճառով:

Խորհ. Անցած օրւայ բնդունելութիւնը, որ քոջս
արել են:

Խորհ. Ձէք կարող երևակայել, մայրիկ... մի կա-
տաղութիւն... մի աղմուկ... Ատէք խնդրեմ, պարոն Հօր-
նիւս, դուք այնտեղ էիք հ'։ այն ինչ արած քայլը շատ
բնական էր խիստապէս:

Հօրն. (հեղձօրէն. դառնալով Մայրապետին), Ա՛հ
շատ բնական էր. խեղճ տղային յանկարծի են բերում
հէնց այն ժողովին, երբ նա լիովին բախտաւոր պէտք է
լինէր, յայտնելով ամուսնութեան գեղձման մասին ա-
ռանց մի պատճառի անգամ:

Խորհ. Գուք էիք խնդրել, որ պատճառը չըլայա-
նենք:

Հօրն. Լաւ գիտէք, որ ոչ մի պատճառ չունէիք:

Խորհ. Ասկայն եղելութիւնը անուրանալի է: Պա-
րոն մարքիզ դ'Ալէնը խելագար էր, վտանգաւոր խելա-
գար, շարունակ տասն և հինգ տարի մեկուսացրած:

Հօրն. Հէնց առաջին օրը, պարոն, վիճարանութիւ-
նը վերջացրինք այդ մասին: Այո, հիւանդութիւնը տեղի
է ունեցել, բայց առանց ժառանգականութեան կարե-
լիութեան, որովհետեւ երեխան...

Խորհ. (ընդմիջելով). Ի՞նչ ասիք, պարոն, որդին էլ
նոյնպէս խանգարւած է ինչպէս հայրը... Եթէ լաւ քն-
նելու լինենք նրա բոլոր արարմունքները...

Հօրն. Գրագ կը գամ, եթէ կարողանաք Գիլգիէի
ամբողջ կեանքում գտնել մի այլ բան բացի բարեսրտու-
թիւնէն և անվեհերութիւնից:

Խորհ. Համեցէք. մի այլիի որդի, միամօր դաւակ,
գինւորական պարտաւորիչ ծառայութեան միջոցին, գին-

տրութիւնը առանց սիրելու, մեկնում է զէպի թունիս
իր կամաւոր:

Էստ. Միթէ այս խելագարութեան նշան չէ:

Խորհ. Մասնակցում է պատերազմում, սպառի աս-
տիճան է ստանում և անմիջապէս հրաժարական է տա-
լիս:

Հորն. Քանի որ այն պարապմունքը չէր սիրում...

Խորհ. Էլ ի՞նչի համար զնայց:

Հորն. Որովհետև ամբողջ գունդը վախկոտ էր: Գի-
դիէն փառաւոր անուն կրելով ուզեց օրինակ դառնալ:
Գուք կարող էք գժութիւն անւանել, բայց ժամանակով
մենք հերոսութիւն ենք ասել այս բանին:

Էստ. Վերջապէս, պարոն, երկու տարի է ինչ մար-
քիզ գ'Ալէնը մեր երկրումն է ապրում, նրա արտակենտ-
րօն արարքը հռչակւած է: Չբզիտեմ թէ յայտնի է ձեզ
նրա անտառապահի պատմութիւնը:

Հորն. Սօտկեօրը, այո՛, գիտեմ:

Խորհ. (Մայրապետին). Երևակայեցէք, մայրիկա, մի
ուռազակային ընտանիք, բանտերում փթող, որսանենգ հօ-
բից սկսած միհչև որդին... Հէնց այս Սօտկեօրներիցն է,
որին մարքիզը իր անտառների վրա պահապան է նշա-
նակել: Այս էլ հերոսութիւն է, պարոն:

Հորն. Բայց խելագարութիւն էլ չէ... մի փորձ ա-
մօթք և թշառութիւնը ջնջելու, որ նրանք իբր ժառան-
գութիւն են ստացել... Յնորք անւանեցէք, իթէ կուզէք
բայց և այնպէս ես համաձայն չեմ:

Խորհ. Էլ չեմ խօսում նրա մենամարտների, արտա-
սովոր գրազների մասին:

Էստ. Նեցցայում, նշանածի պատշգամբի տակ տւած
գիմակահանգէսը, բազմութեան ներկայութեամբ հիւրա-
նոցի վրա յարձակելը:

Խորհ. Նա մի մոլի, մի լանդուզն է, ասում եմ ձեզ:

Հօրն Չէ, պարոն Խորհրդական... նա ջահել է, որ մեր օրերում շատ հազւագիւտ է դարձել:

Խորհ. Սպասեցէք մի վոքը էլ, վերջը կիմանանք նրա մասին:

Էստ. Հաւատացնում եմ ձեզ, պարոն Հօրնիւս, որ անցած օրը դիմացս գփի նման էր կանգնած, մի կատարեալ գիփ, որ սարսափեցնում էր:

Հօրն. Բայց այդ սէրն է, խեղճ օրիորդ, այդ կրքաբորբոք սիրտն է, որից իր սիրած առարկան խլել են:

Էստ. Այ բան. եթէ այդ է սէրը, շատ վախելու բան է: Բայց չեմ կարող հաւատալ. (դառնում է դէպի Մայրապետը):

Մայր. (ձեռները վար թողնելով, բարի ժպիտով). Ես չեմ կարող այդ մասին տեղեկութիւն տալ ձեզ:

Հօրն. (ուրախ). Բանն այն է, որ մենք ատեան ենք կազմել ամուսնական և սիրային հարցերի մասին դատելու: (Մայրապետին). Գուք միայն Աստուծոն էք նւիրւած, Մայրիկս... Ես մի ծեր ամուրի եմ, շատ ծեր... Օրիորդ Ասատրիւան էլ, [Թոււմ է ինձ, [Թէ անդիտանում է կեանքի ինչ լինելը:

Էստ. (վիրաւորւած). Բայց խորհրդական եղբայրս նշանւած է եղել, նա պսակւած է:

Հօրն. (ցած ձայն). Նոյն խկ այրի:

Էստ. Երբէք տեսած չեմ նրան այնպիսի դքութեան մէջ:

Հօրն. Ճշմարիտ, չէ կարելի երևակայել որ պարոն Խորհրդական...

Խորհ. Ամուսնութիւնն, ինձ համար, մի լուրջ պայմանադրութիւն է, որը պէտք չունի վիպական յուզմունքների: Վերջապէս, այստեղ հարցը ամուսնութեան մասին չէ այլ ևս: Օրիորդ Բէմօնդիի որոշումը վճռողական է այս մասին. հիմա մենք խօսում ենք միմիայն տեսակ-

ցութեան փոքր ի շատէ յարմարութեան վերաբերմամբ:
Հօրն. (եռանդուն). Եւ որ շատ իրաւացի կը լինէր,
էթէ մեզ այդ շնորհն անէին:

Խորհ. Ես այդպէս չեմ կարծում,

Հօրն. Ուրեմն դուք արդարացնում էք մեր կասկած-
ները, քանի որ վախում էք այս ջահելներին միմեանց
դիմացը կանգնեցնել:

Խորհ. Մենք ձեր կասկածներից շատ վեր ենք:

Կստ. (մեծապանծ). Հինգ հարիւր ոսնաչափ բարձր
ենք:

Մայր. Յամենայն դէպս կարելի է Մաղբլէնին հարց-
նել:

Խորհ. (վարանելով. շեթուեքը սեղմած). Մաղբլէնը
չափահաս չէ և չի կարող, առանց իր խնամակալի հա-
մաձայնութեան, վարվել. բայց վերջապէս, թող ձեր
կամօքը լինի, սրբուհի Մայրապետ:

Մաղ. (կանչում է). Մաղբլէն, Մաղբլէն:

ՏԵՍԻՒ, Ը.

Նրանք, Մաղբլէն յայտնում է աշահողմեան վերնայարկից

Մայր. Այստեղ արի, աղջիկս, և ասա մեզ օրաս-
բաց:

Մաղ. Ո՛հ, Աստուած իմ, ի՞նչ են ուզում էլի ինձա-
նից:

Հօրն. Շատ հասարակ բան, օրիորդ... Դիզիէն ցան-
կանում է ձեզ վերստին տեսնել:

Մաղ. (օտրտափած). Ո՛հ, ոչ...

Հօրն. Ոչ երկար ժամանակ... չէնց այնքան, որ
կարողանայ լսել ձեզանից, որ այլ ևս չէք սիրում իրան:

Մաղ. Ձէ, այդ ոչ... աղաչում եմ... երբէք... չեմ
կարող:

Հօրն. Բայց քանի որ էլ չէք ուզում նրան, խեղճ տղային, քանի որ նրանից յետ էք առնում ձեր սէրը...

Մաղ. Ես ասած չեմ... կամ թէ, հակառակ իմ ցանկութեան, ես շատ անբախտ էի այդ դէպքի պատճառով...

Հօրն. Աչինչ չէ պատահել առանց ձեր համաձայնութեան:

Մաղ. Այդ ճշմարիտ է:

Հօրն. Ուրեմն ապացուցէք նրան, այդ է միայն պահանջում:

Մաղ. Աւժիցս վեր է այդ:

Հօրն. Սակայն, օրիորդ, մարդս պատասխանատու է իր արարքների պատճառով: Ի՞նչ ունիք երկնչելու մի բարի և անխարդախ տղայից, որը ձեզ յարգում է և ամբողջ սրտով սիրում:

Մաղ. Ձեմ կարող մերժելուս պատճառը նրան ասել, պէտք է սուտ խօսել: (Մայրապետին). Այ, ոչ, մայրիկս, ազաչում եմ, խնդրում եմ:

Մայր. Դժբախտաբար այն երիտասարդը ունի քու լուսանկարը, նամակներդ և միայն քեզ է ուզում յետ տալ:

Մաղ. Թող իր մօտը պահի: Նրանից բան չեմ պահանջում. շատ բաղտաւոր կը լինեմ եթէ այն չուչը կը կարողանայ թեթեւացնել նրան ակամայիցս պատճառած վիշտը:

Հօրն. (մի կողմը). Ո՞վ դիմնայ քեզ... բայց կեցցես:

Դատ. (եռանդուն). Իրաւ, մեզանից ոչ ոքի մտքին չեկաւ, այ ինչպէս կարգի կընկնի գործը:

Խորհ. (վրդոված). Ի հարկ է... ամեն բան կարգի կընկնի... բայց կարող է պատահել մի ժամանակ, որ ձեր գարմուհին պիտի ամաչի մտաբերելով, որ իր լու-

անկարը այնպիսի ձօնագրով (dédicace) դարդարեամբ գր-
տրնուում է նախկին նշանաձևի ձեռքում:

Մաղ. Ի՞նչի համար:

Մայր. Ենթադրում եմ, աղջիկս, որ մի ուրիշը կա-
րող է քեզ կնութեան խնդրել:

Հորն. (նայում է խորհրդակցանին). Կարելի է, որ նոր
ուղեցողը շատ էլ հեռու չէ... և հէնց այս է. որ Գիդիէն
չի կարող ընդունել:

Խորհ. Այդ ի՞նչպէս:

Հորն. Քանի որ օրիորդ Բէմօնդին չէ յայտնել նրան
իր կամքը, Գիդիէն հաշուում է իրան խոստացած և ոչ
մէկին չի թողնի իր սեխականութեանը ձեռք տալու,
հաւատացնում եմ ձեզ:

Խորհ. Ի՞նչ չիմարութիւն:

Հոր. Սիրօյ չիմարութիւն, որը այնչափ հին է, որ-
չափ ինքը աշխարհը: Հէնց դրանով է դժւած խիտ և
անողորմարար:

Խորհ. Ուրեմն, որքան լաւ հասկանում եմ, ահա
մի ջահել աղջիկ՝ երկիւղ կրելով՝ աղմկից կամ խայտա-
ռակութիւնից չի կարող ամուսնանալ...

Մաղ. Ոչ մի խայտառակութիւն չի կարող պատա-
հել, իմ խնամակալ: Այս օրւանից ես վճռել եմ, նրբէք
չեմ գտակել:

Մայր. (ուրախ). Այ՛ն որ բան:

Մաղ. Նորից մտել եմ այս վանքը և որոշել եմ այլ
ևս չը դուրս գալ այստեղից:

Էստ. (վրդոված). Ո՛հ, ոչ, Աստուած չանէ:

Հորն. (մի կողմը). Սա դոճեա՛ անկեղծ է, այս աղ-
ջիկը:

Մայր. (էստէին). Հանդարտեցէք, օրիորդ, կոչման
ընդունելը այնպէս շուտով չէ վճռուում մեզանում. (Մա-
ղըիէնին). Լաւ հասկացիր, փոքրիկ սիրունիկս, որ այժմ

ասածներդ շատ նշանակութիւն չեմ կարող ընծայել
Մենք դեռ չենք նւիրւած Աստուծոն, որ մեզ ներութիւնից
ազատի: Միայն ժամանակ է վերջացնել այս գործը...
Ուրեմն, հաստատ որոշել ես մերժել այս ամուսնութիւնը,
այնպէս չէ:

Մաղ. (գրգռւած). Ձէ, մայրիկս, այդպէս պէտք չէ
ասել: Ընդհակառակն, թուում է ինձ, թէ այս միութիւ-
նը պատշաճում էր ինձ, որ կարող էինք միասին բաղ-
տաւոր լինել: Բայց ինձ ասին, ինձ հասկացրին. որ ան-
կարելի է այս նկարագրելով մի այնպիսի ախուր ապա-
գաչ, այնպիսի մի դարհուրելի...

Հորն. (խստաբար). Ձեզ խտրել են, հաւատացէք...
Ո՛հ թանգագին Մաղըլէնիկս. ասել պէտք է թէ որքան
բաղտաւոր էք եղել, որ Ասուած շնորհել է ձեզ ունենալ
այն, ինչ որ այժմեան ժամանակում շատ հազւագիւտ է,
ինչ որ, շատ կարելի է, այլ ևս չէք գտնի. ամուսնական
սէր, և իսկական հաստատ սէր. ջահել, սքանչելի, խան-
դոտ, հաւատարիմ... պարկեշտ կնոջ այս երազը, դուք
նրան բռնել էիք և թողնում էք որ փախչի:

Մայր. (ժպտելով). Ո՛հ, Ասուած իմ, ձեզ էլ չի
կարելի ճանաչել. սիրելի Հօրնիւս... Ա՛յդչափ էլ կորով,
այդչափ էլ ազդուութիւն:

Էստ. Սրա նման քանի մի քարոզիչներ եթէ լինեն,
վանքերը շուտով կը դատարկւին:

Խորհ. (Մաղըլէնին) Խօսքեր աղջիկս, դատարկ խօս-
քեր. և այս ամենի վերջը ինչ կը լինի մարքիզուհի գ. Ա-
լէնի կեանքը, տասնուհինգ տարի տանջանք և արտա-
սուք սարսափի և միայնութեան մէջ:

Մայրապ. Բանն այն է, որ այս էլ շատ դարհուրե-
լի է: (սեղմելով Մաղըլէնին իր կրծքին), Սիրելի աղջիկս:

Խորհ. Բայց ես ի՞նչ բանի խնամակալ էի, Մայրա-
պետ, եթէ գորովս չըբաւէր նրան հասկացնելու, ես հաս-

տաս որոշել էի գործ դնել այս ամուսնութեան դէմ ամբողջ իրաւունքս, որ օրէնքով կարող եմ ունենալ տակաււին մի որոշ ժամանակ:

Մայր. Եթէ այդպէս է, աղջիկս, քեզ մնում է միայն մի բան անել... Թոյլ տուր այն դժբաղտին, որովհետեւ շատ մեղքանալու բան է:

Հօրն. Ո՛հ, ուղիղ է, շատ մեղքանալու է:

Մայր. Թոյլ տուր նրան հինգ ըստէ, որ քեզանից խնդրում է, այսչափ կարողութիւն ունեցէք և դուք այլևս չէք լսի նրա մտտին ոչ մի բան:

Խորհ. Ճշմարիտ, որ միտք տնեւ, ամենահասարակ բանն է այդ:

Հօրն. (ծաղրելով). Այ տեսէք, պարոն Խորհրդականն էլ այս կարծիքի է այժմ:

Մադ. (լուռթիւնից յետոյ). Ես կընդունեմ այն երիտասարդին երբ դուք կը կամենաք, մայրիկ:

Մայր. Բայց ես այս ըստէիս եմ ուզում:

Մադ. (ապշած). Ի՞նչպէս:

Մայր. Այնտեղ է... ինձ մօտ... նա սպասում է:

Մադ. Թող այդպէս լինի, ես պտորատու եմ:

Մայր. (հնչեցնում է երկու անգամ կամարներից կախած մի զանգակ, յետոյ դառնալով Հօրնիսին և միւսներին). Մտնենք քովի խօսակցարանը, եթէ կամենում էք: (Վոյս պահարանապետուհուն, որ եկել է զանգակի ձայնը լսելով). Ասէք ինձ մօտ գտնուող պարոնին, թող գայ այս խուցը:

Էստ. (ցած ձայնով Խորհրդականին). Ես կարծում եմ, Մայրապետը շատ անխոհեմ է վարւում... Տեսէք թէ նրա խելագարութիւնը չը վերանորոգւի:

Հօրն. (խեղկատակելով նրան վախեցնելու համար). Պոսկալին այն է որ արդէն սկսել է յառաջանալ: (Պառաւ օրիորդը սարսափում է). Այո, օրիորդ... Եոյն խակ

հեռւից... (Գուրս են գնում նրանք)։

ՏԵՍԻՒ, Թ.

Մաղ. (միայնակ). Հէնց այս բոպէիս, ահա այսպէս... Աստուած իմ, ի՞նչ պէտք է ասեմ նրան: (Նրգեցողութեան դասի աշակերտուհիները լուռ ու մուռնջ խորքի կամարների տակով անցնում են զոյգ զոյգ, որոնց առաջնորդում է Նօէլին):

ՏԵՍԻՒ, Ժ.

Մաղուէս, Դեղիկ:

Մաղ. (ճայելով Դեղիկի գալստեան, որ ներս է գալիս ձախ կողմից). Ի՞նչպէս գուճատել է, որքան վախուել է... Քանի մի օրում... (Դեղիկն կանգ է առնում ներս առաջ.— Լուսթիւն,— յետոյ վախվախելով). Բարեւ, Դեղիկ:

Դեղ. (Գլուխ տալով). Սըիորդ, ես... ներեցէք ինձ... Նս... ես չեմ կարող... (լուս է շնչասպառութիւնից, կողորդը սեղմում. շրթունքը և ձեռները բոլորովին դողողում են). Վերջապէս, սարսափելի է այս... Սպասել անձրկութեամբ ժամադրութեանը, երբ արդէն այստեղ եմ ձեր դիմացը... Նրբ մաածում եմ, որ բազոս, կեանքս կախած են այս քանի մի բոպէներից, որ էլ երբէք... Տեսէք, այլ ևս խօսք չեմ կարողանում գտնել, այն ինչ այժմ ինձ հարկաւոր են ամենասաղուհները, ամենաճոխերը... Ո՛հ, շատ չէ քաշելու, կրտսնէք ինչպէս կրկարողանամ... Սպասէք, կացէք, շուտով կրկարողանամ...

Մաղ. Խնդրեմ, հանգստացէք, խաղաղեցէք: (Նրստեցնում է Դեղիկին հստարանի վրայ, ինքը մնում է կանգնած նրա առաջ). Էլ ի՞նչի եկաք, ի՞նչի էք ձեր գըլուխը չարչարում:

Դեղ. Ի՞նչի եմ եկել... Չբզխտեմ այլ ևս: Չեզ տե-

Տու՛մ եմ, ձեր ձայնն եմ լսում... Ահ, որքան լուռ եմ
այժմ:

Մաղ. (շփոթւած) Դիպէ՛ք:

Դիպ. (Գլուխը դէպի նա բարձրացրած). Հողիս:

Մաղ. (ընկրկելով). Էլ ինձ հողիս մի՛ք ասի: Ես ձեզ
չատ եմ վշտացրել: Այդ անունը ուրիշի համար պահեցէք:

Դիպ. Ճշմարիտ է, ես շատ տանջուեցի... Մեղաւի-
այեցէք, մեր փոքրիկ օջախը, այնտեղ, որը ձեզ սպասում
էր... Տունը բոլորովին պատրաստ, գարդարուն ձեզ ըն-
դունելու և յանկարծ ինձ ասում են. «Նա չէ գալիս, նա
գալու չէ երբէք». և ես միայնակ բնակուեցի մէջը... Ահ,
ուղիղ է, շատ վշտացրին ինձ: Բայց ոչ դուք. ես համոզ-
ւած եմ, որ դուք չէք այն անողը:

Մաղ. Այո՛, այո՛, ես եմ մեղաւորը: Ազում եմ, որ
բացի ինձանից ոչ ոքին չընդադրէք:

Դիպ. Ճշմարիտ, հաստատ է... Աւրեմն ես մի յան-
ցանք եմ գործել, որ անգիտանում եմ, որովհետև դուք
ճշմարտասէր էք, դուք բարի էք: Ինձ այսպէս խտորէն
պատժելու համար երևի ես արժանի եմ եղեր: Բայց ին-
չի. տասն ու հինգ օրից ի վեր ինքս ինձ հարցնում եմ,
պտրում եմ... Խնդրեմ, ասէք ինձ, որպէս զի կարողանամ
պաշտպանուել: Նրբ մէկին մահի են դատապարտում՝ ու-
րիշ ոչինչ չըլինի, գոնեա յայտնում են նրան իր յանցան-
քը:

Մաղ. Դուք ինձ բան արած չէք: Ձեզ կշտամբելու
բան չունիմ, հաւատացնում եմ ձեզ:

Դիպ. Սակայն, էլ ինձ չէք սիրում... Ես վայելում
էի ձեր սէրը, — ո՛հ մի՛ք ասի ոչ, — բաղտաւոր էի ձեր սէ-
րով և կորցրի այն: Դուք «մինչի մահ» նւիրուել էիք ինձ
և հեռացաք ինձանից... այս արիք առանց պատճառի:
Միթէ՛ կարելի է այդպէս:

Մաղ. Մի պատճառ կա՛յ ձեզանից կախում չունե-

ցող... ինձանից... ճակատագրական մի դէպք բաժանում է մեզ միմեանցից:

Դիդ. Այդ թնշ ճակատագիր է... Սիրուն էք մէկ ուրիշին... Ուրեմն ասէք ինձ ճշմարիտը... Ամեն բան տանելի է ինձ, բացի այս անորոշ կացութիւնից... Մադրէն, սիրուն էք մի ուրիշը. ո՞վ է նա: Ձեր զարմին է, այնպէս չէ:

Մադ. (ապշած). Պարոն Վաստիլլանը: Երբէք... Այդ թնշ ասել է:

Դիդ. Հէնց նա կամուսնանայ քեզ հետ ամենայն ուրախութեամբ... Նոյն իսկ իր սուգը չըվերջացրած տակաւին:

Մադ. (անվստահ). Նա, դուք կարծում էք:

Դիդ. Միթէ չէք նկատել, սակայն բաւական պարզ է այս:

Մադ. Ա՛հ, ոչ, ... ո՛չ. շատ վատ կը լինի նրա կողմից:

Դիդ. Շատ վատ, թնշի համար... Ա՛հ, հասկանում եմ, հասկանում այժմ: Շատ վաղուց պէտք է կասկածէի նրա վրայ: Հէնց նա է ինձ զրպարտել, հէնց այդ մարդն է ինձ ձեր սրտից դուրս հանողը: Եւ այս արել է, որ ինքը կարողանայ իմ տեղս բռնել, ահա թէ ինչն է ձեզ գայրացնում, դուք որ վեհանձն եւ անկեղծն էք:

Մադ. Այ, ոչ, Դիդիէ, այդպիսի բան չըկայ բոլորովին: Ձեզ ոչ ոք չէ զրպարտում... Բացի ձեզանից երբէք ուրիշին սիրած չեմ, այս դուք լաւ գիտէք...

Դիդ. (աղաղակելով). Այդպէս ուրեմն, դուք ինձ սիրուն էիք: Դուք այս ասում էք... Ինձ սիրուն էիք:

Մադ. (ուզելով խօսքը ուզղել). Դոնեա այդպէս էի կարծում, ինձ թւում էր որ...

Դիդ. Իսկ այժմ այլ եւս չէք սիրում ինձ: Միթէ կարելի է, Մադրէն: Եւ ուզում էի այդ լսել հէնց ձեր

քերանհից: Լսեցէք, հարցնում էիք թէ ես ի՞նչի համար
եկայ: Հիմա յիշում եմ, ես եկայ այդ բանի համար, խ-
կապէս այդ բանի համար... Բայց չէք կարող ասել, որ
ինձ այլ ևս չէք սիրում... դուք այդ չէք կարող:

Մադ. Սակայն այդ անհրաժեշտ է, Դիդիէ: Պէտք
է այդպէս: Ես պարտաւոր եմ այդ անելու... (Վաճառում
նւազում է եկեղեցական երաժշտութիւնը առաջին ար-
բարւածի այգերգը փոխադրւած երգեհոնի և փոքր աղ-
ջիկների համար)

Դիդ. Լսեցէք.

[Փոքր աղջիկները երգում են բնի խորքում]

Ով Կոյս Մարիամ,
Նուշան ձիւնափայլ,
Նրկնակամարն քեզմով
Առնէ լոյս և փայլ:

Դիդ. Լսեցէք... թէ ի՞նչ են երգում այն աղջիկները:
Մադ. Օրհներգ առ Կոյսն Մարիամ:

Դիդ. (խիստ յուզւած). Օրհներգ .. այն մեր այգեր-
գի եղանակն է, Նիցցայում... Մտաբերում էք:

Մադ. (ականջ դնելով). Ճշմարիտ:

Դիդ. (ցած ձայնով). Մեր նշանադրութեան երգը:

Մադ. Ո՛հ, Ատո՞ււած իմ (ընկնում է նստարանի
վրայ և մըմնջում է հետևելով երգեհոնի հեռււոր վերջին
տան կրկնութեան):

Սպանիական այգերգը

Թող երգւի սիրողաբար:

Դիդ. (թեքւած նրա վրայ, խօսում է ցած ձայնով
քանի որ երաժշտութիւնը շարունակւում է). Ասէ՛ք, Մա-
դրէ՛ն, թէ ի՞նչ է մեզ յիշեցնում այս այգերգը... Այնտեղ

գրօսաւայրը... սրագ երկինք, հանդարտ ծով, համասարած կապոյտ, ձեզ գրկիս մէջ սեղմած, որ կինս էի անլանու՛մ, սիրելի կինս, բարձրաձայն բողբոլ առաջ: (Գրքկում է մեղմաբար նրան). Ո՛հ, սքանչելի երագ, հրաշալի երագ... Սկսենք վերստին, ուզու՛մ ես... Դիր ձեռքդ, փոքրիկ ձեռքդ ամիս մէջ. գլուխդ ուսիս վրայ... ընք դարձեալ այն այգերգը, որ քեզ նւիրում է քո սրտիդ առարկան... Մաղբլէնիկս, փոքրիկ Մաղբլէնիկս

Մաղ. (գլուխը դնում է նրա ուսի վրայ). Դիրիէ. (Յանկարձ ոտի կանգնելով). Ի՞նչ է արածս... Աստուած իմ, ոչ, ոչ... Թողէ՛ք ինձ:

Դիր. (փորձելով նրան նորից գրկել), Մաղբլէն, Մաղբլէն:

Մաղ. Ո՛չ, խնդրում եմ ձեզ. այդ անկարելի է:

Դիր. Բայց ի՞նչ սրտաճառով: Ատէք, ի սէք Աստուծոյ: Ի՞նչիս կարող եմ խելագարել... Մաղբլէն, ատէք ինձ, սիրու՛մ էք, սիրու՛մ էք, սիրու՛մ ես ինձ: Ձեռքդ, թևդ, ամբողջ կազմուածքդ ասում է այդ... Դու ինձ սիրում ես...

Մաղ. Ո՛հ, ինչպէս անգուժն էք... Մեղքացէք ինձ այդպէս չարչարել:

Դիր. (ձայնը փոխած, հանդարտուելով միանգամայն). Ն՞ս անգուժ... Ներեցէք. Ձէի ցանկանում ես անգուժ լինել... վերջացաւ արդէն... ձեզ այլ ևս չեմ տանջի: (Գրպանից հանում է մի ծրար):

Մաղ. Այդ ի՞նչ էք անում:

Դիր. Ձեր լուսանկարը, ձեր նամակները, ամենը, ինչ որ ձեզանից ստացել եմ, ահա ատէք: (Դարսում է բողբոլը նստարանի վրայ): Այժմ ատէք, որ այլ ևս չէք սիրում ինձ: Այո, այն, պէտք է, ուզում եմ որ դուք ինձ ատէք այս:

Մաղ. (երեսը մի կողմը դարձնելով). Ես այլ ևս չեմ

սիրում ձեզ:

Դիդ. Մնաք բարով: (Երկու քայլ է անում, օրօր-
ւում է և ընկնում հստարանի վրայ):

ՏԵՍԻԼ ԺԱ.

Նրանք. Խորհրդական, Հօրնիւ, Սայրապետ:

Մադ. (Մայրապետի դրկում). Ո՛հ, բարեկամներս,
էնչ արի ես: Ասի, որ այլ ևս չեմ սիրում իրեն, և հէնց
այն բոպէից աւելի եմ սիրում քան երբ և իցէ:

Խորհ. Բաւ է, Ասաւած սիրէք, լաւ գիտէք, որ ան-
կարելի է: (Մայրապետին). Տարէք դրան, մայրիկս, հե-
ռացրէք:

Մայր. (Տանում է նրան). Արի... արի...

Հօրն. (Մօտենալով Դիդիէին ձեռքը դնում է նրա
ուսի վրայ). Արիացիր, որդիս: Շատ լաւ վարեցիր. բազ-
ար կը վարձատրէ քեզ... դէհ, գնանք...

Դիդ. Սպասիր. (վեր է կենում և ուղղակի մօտե-
նում խորհրդականին). Մի լսօք, պարոն Կաստիլլան:
(մատը բարձրացրած դէպի նա: Լաւ իմացէք, դուք:
(Մադըլէնը կ'անդ է առնում խորքում և ականջ դնում).
Նա ազատ է ամենի համար, բայց ոչ ձեզ համար... Եթէ
երբէք ծուռը աչքով նայել էք նրան... (Մադըլէնը շարժ-
ւում է, մայրապետը չէ թողնում):

Խորհ. (Շատ հպարտ) Օ՛ո, պարոն, ձեզ նմաններից
չատ չենք վախում. այդպիսիներին քանի մի հատ սառը
լողարան և խեւնոց:

Դիդ. Ի՞նչ ասիք:

Խորհ. Ես ասում եմ, պարոն մարքիզ դ'Ալէն, որ
դուք, ահա, ձեր հօր պէս գիժ էք և որ խելագարների
հետ չեն մեռնամարտում:

Հօրն. (ուզում է յարձակել). Պարոն.

Դիդ. (բռնում է նրան). Թ՛ող, Հօրնիւ, թող...
Վերջապէս, ես հիմա հասկանում եմ:

վարագոյր

ԱՐԱՐԻԱԾ Գ.

Միևնոյն զարդարանքը, կնշուէս Բ. արարւածինը.

Բեմը ներկայացնում է Կօլօմբիէրում „սեփական օջախը“ մի կոկիկ ճերմակ դահլիճ: Ոչինչ փոխւած չէ: Կարասիքը միևնոյն տեղն են. խորքում կիսաբաց է դէպի սանդուղքը տանող բարձր, մեծ դուռ-պատուհանը:

ՏԵՍԻՒ Ա.

Գիղէ. (Նստած դիւանի վրայ, քովը քանի մի բժշկականութեան մեծ գրքեր, մի ուրիշը ձեռքին կարդում է բարձրաձայն).— „Հեռեւապէս խելագարի դաւակը ենթակայ է խելագարութեան... Մարդ կրում է իր մէջ, աւանդ ստացած իր ծնողներից, իր հիւանդութիւնների անխօս ցոցակը... Աւ ակտաւորների կեանքը վերջանում է մահով:“ — (Գոցում է գիրքը և գցում դիւանի վրայ). Ո՛րքան աղետալի է, այժմեան գիտութիւնը, իր ժառանգականութեամբ: Մարդիք այլ ևս չեն ընդունում գահի ժառանգութիւնը, այն ինչ այս բանը բերում, մտցնում են ընտանիքում, մեր օջախներում իբրև սպառնալիք, իբրև մի թախիժ յաւիտենական (Կանգնում է և քայլում). Բայց հարց է թէ, գիտեն արդեօք ապագան. կարող են գուշակել մի հիւանդութեան փոփոխութիւնները. երբ կեանքի ամեն մի բուլէն, իւրաքանչիւր մի կիրք, ամեն մի շարժումնք նրան այլակերպում, բաղադրեալ է դարձնում... Աս, փոքր ժամանակս,—երևում է կատարրալ հօրս տիպարն եմ եղել... Նրկու տարուց յետոյ յանկարծ մօրս եմ նմանել, քայլածքս, նայածքս, մազերըս... Հիմա, ո՞ւմն եմ նմանում արդեօք: (Կանգնում է հայելու առաջ և նայում անձկութեամբ:)

ՏԵՍԻՒ Բ.

Հօրնիւս, Դիդիէ.

Հօր. (Գուրջը սանդուղքի վրայ). Գի՛ղէ:

Դիդ. (ցնցւելով). Ա՛խ, այդ դձուն ես:

Հօր. Դէ՛հ. մի շրջան կատարենք խաղողի այգում...

Պարզ և կենդանացուցիչ եղանակ է... սօսի կեղևը տըրաքտրաքում է... զւարճալի է գրօնել:

Դիդ. Ոչ, շնորհակալ եմ:

Հօր. Դէ՛հ գնանք, Վիրգիլիոսը հետս ունիմ, մեղուների հետ լատիներէն կըխօսենք ինչպէս փոքր ժամանակը:

Դիդ. Չէ. ոչ այս առաւօտ:

Հօր. Իարձեալ չաջողեց, երբէք քո ոչ այս առաւօտը չէ վերջանում: Իոնէ մօրդ համար արա: Այն օրից իվեր, երբ մայրդ իմացաւ այն թշաւաւականի հետ ունեցած անբաւականութիւնը, տխրում է տեսնելով քեզ միայնակ, յետ քաշած. չբախտեմ, նա ի՛նչ է եմթաղըում... Դէ՛, արհ գնանք... Չե՛ս կամենում:

Դիդ. Ոչ այսօր, խնդրում եմ քեզ... Վաղը... Խօսք եմ տալիս, որ վաղը մի լու գրօսանք կըկատարենք:

Հօր. Թող այդպէս լինի, վաղը ուրեմն:

Դիդ. Լաւ գրօսիր, իմ ծեր վարժապետ: (Հօրնիւսը գնում է):

ՏԵՍԻԼ Գ.

Դիդիէ. յետոյ Մարքիզուհի.

Դիդ. (Մենակ). Խեղճ մայր, իրաւ է, որ այն օրից իվեր հսկում է վրաս, տանջում է նա... (նայում է գրքերի վրայ). Պէտք չէ թողնել այս հաստ գրքերը այսպէս թաւիած. Աստուած չանի եթէ մայրս տեսնելու լինի. (Հաւաքում է գրքերը և պահում իր գրասեղանի գլորոցում). Վերջապէս, ճակատագիրս որոշ է, գրքերի այս կոյտը չի փոխի ոչինչ... (Մըմնջում է):

Ծաղկափնջեր գեղեցկուհուս

Հաստատ սէրիս տամ ի նշան.

Այն, սէրս է, որ փնջել է,

Մարքիզ. (խորքից մտնելով). Ուրեմն չե՞ս գնացել
Հօրճիւսի հետ:

Գիդ. Ոչ, մայրիկ:

Մարքիզ. Ինչի՞ համար:

Գիդ. Ես չէի կարող այս առաւօտ... „Յոյս ունե՞մ“
ինչպէս այստեղացիքն են ասում. ես յոյս ունիմ, որ նը-
շանակում է: „Սպասում եմ“:

Մարքիզ. Ի՞նչ ես սպասում:

Գիդ. Բախտ, սիրելի մայրիկս...: Ուշանում է, բայց
համողած եմ որ կըգայ, հէնց այս պատճառով, տես-
նում ես, սպասում եմ:

Մարքիզ. Բայց դուն ունես արդէն այդ բախտը, բա-
րեկամ, եթէ կեանքից շատ պահանջելու չըլինես... Վեր-
ջասէս, ահա նայիր, հարստութիւն, առողջութիւն, ջա-
հիլ ես, աշխարքս բաց է առաջդ... (Մի փոքր լռութիւն).
Ի՞նչի չես կամենում մի երկար ճամփորդութիւն կատա-
րել Հօրճիւսի հետ:

Գիդ. Ճամփորդութիւն:

Մարքիզ. խեղճ մարդը այնքան սիրում է քեզ. Կը-
տանես նրան, ուր որ կամենաս... Երբ մտածում եմ, որ
հինգ ամիս շարունակ, Նիցայից եկած օրէն խլեր, մի օր
չէ թողել մեզ մենակ:

Գիդ. Շատ լաւ, իսկ դուն ի՞նչ կանես, եթէ ես
ճամփորդեմ:

Մարքիզ. (անուշ ժպտելով). Ես կանեմ այն ինչ որ
դուն այս առաւօտն ես անում. կսպասեմ:

Գիդ. (Քնքշաբար). Չեմ կամենում, շատ յուզիչ է
այս... Ոչ, ոչ, ճամփորդութեան մասին բան մի ասի ինձ:

Մարքիզ. Ուրեմն ինչի՞ չես շարժում, գնա որսի, ձի
հեծիր, գնա խաղողի այգիներդ տես... Վերանորոգիր ա-
ռաջւայ կիենցողդ... Եթէ իմանայիր, թէ ինչպէս ինձ
յուսահատեցնում ես քո ամեն օր փակելովդ այստեղ,

մենմէնակ, կարգում ես, չըգիտեմ, ինչ-ինչ մուայլ դըր-
ւածքներ... (Նայում է շուրջը, յետոյ ցած ձայնով)։ Մի
օր ես կայրեմ գրքերդ։

Գիդ. (Փառելով . Քեզ ի՞նչ են արել նրանք։ (Նա-
յում է դրադարանին)։

Մարքիզ. Ինձ ի՞նչ են արել... Նրանք քեզ վնասում
են։

Գիդ. Գրքե՞րս։ Նրանք այդ անկարող են. մի նայիր,
միայն բանաստեղծութիւններ և երաժշտական գրւածք-
ներ են այս...

Մարքիզ. Սրանց մասին չեմ ասում։

Գիդ. Ուրիշ գրքեր չունիմ...

Մարքիզ. Սթէ գտնե՛մ։

Գիդ. Կըգտնես քանի մի հին փիլիսոփաների ան-
մարսելի գրւածքներ... Նեղութիւն մի տայ քեզ, մայրիկ։

Մարքիզ. (բռնելով նրա ձեռքերը). Բայց դու՛ն ես,
դժբախտ երեխայ, որ տանջւում ես, հիւանդանում։

Գիդ. Հիւանդ... (Վառւիւռն). Սա հիւանդ չեմ և
ցանկութիւն էլ չունիմ հիւանդանալու, երդւում եմ քեզ։

Մարքիզ. Սակայն, դու գնացել ես Մօնպէլլէ, ութ
օր չըկայ, մի բժշկի մօտ։

Գիդ. (Խնդալով). Ա՛խ, այս մայրերը, ի՞նչ լաւ տե-
ղեկատու դորձակալներ են... Այո, ճիշտ է, գնացել եմ
Մօնպէլլէ ձեր Գիմարին հարցնելու նեարդացաւիս մա-
սին, որ ինձ արգելում է քնել։

Մարքիզ. Նա բժշկե՞ց քեզ։

Գիդ. Նեարդացանս, արմատապէս... (Փառելով).
Բայց և այնպէս չեմ քնում։

Մարքիզ. Նա ծովային բժիշկ է եղել, այն Գիմարը։

Գիդ. (Զարմացած ձևով). Ահա՛, ես չըգիտէի։

Մարքիզ. Նա հօրդ հետ ծովի վրայ ճամփօրդել է...
այդ մասին բան չասե՛ց քեզ։

Գիդ. Այ:

Մարքիդ. Ինչ և է. նա միայն քեզ ասածներս կա-
րող էր հաստատել, այն բանի վերաբերմամբ ինչ որ քեզ
չայտնեց այն մտադր: Այսինքն դու արդէն երկու տարե-
կան էիր, երբ հայրդ...

Գիդ. Այդ ես շատ լաւ գիտեմ, ասում եմ... Հօր-
նիւսն և դուն շատ անգամ էք ասել և կրկնել... Թող
այդ անցած բաները, խիստ տխուր, խիստ անազորոյն
են:

Մարքիդ. Ուրեմն, էլ ինչք համար...

Գիդ. (Ընդամիջելով նրան). Սուս, լսիր...

Մարքիդ. Ի՞նչ կայ:

Գիդ. Աջակողմեան պատուհանից դուրս նայելով
կանչում է). է՛յ, ո՞վ կայ այդտեղ: Գնացէ՛ք, դուռը տե-
սէ՛ք, կարծես մտրդ կայ:

Ժառ. (Դրսից). Դուռը բաց է, պարոն Մարքիդ:

Գիդ. (ուրախ). Նամակաբերը պէտք է լինի: (Նետ-
ւում է դէպի խորքը):

ՏԵՍԻԼ Գ.

Նրանք, Սօսկեօր.

Սօս. (Տխուր կերպով). Այ, պարոն Գիդիէ, ես եմ,
պահապանը:

Գիդ. (Նեղացած). Ա՛մ, բարև:

Սօսկ. (Ողջունելով). Պարոն, տիկին, առհասարակ:

Մարքիդ. Բարև, Սօսկեօր:

Գիդ. Գէ՛հ, ասա տեսնեմ, գործը ի՞նչպէս է գնում
այնտեղ... Շնե՛րը, անտառը, ճահիճը:

Սօսկ. Փառք Աստու, կենդանիները վատ չեն,
նրանք վաղաքշանքներ են ուղարկում պարոնին և տիկ-
նոջը... Միայն Միրակիչտն է, որ նւազում է, նւազում է:
Այն էլ ճշմարիտ է, որ պարոն Մարքիդը, աչսպէս երկար
միժոցում չեկաւ մի անգամ հրացան արձակելու:

Մարքիդ. Այնպէս չէ՞, Սօսկետօր... Մի իրեն ասէք, է՛ր Սօսկ. Ա՛խ, տիկին, բաւական է միայն, որ նա իր տիրոջ հետ մի փոքր շրջան անի ճահճում, ես համոզւած եմ խեղճ կենդանին ոտի կրկանգնի... Կամ թո՛ղ պարօն Մարքիդը թոյլ տայ ինձ նրան բերել երբեմն երբեմն իր տիրոջը տեսնելու: Այս քրիստոնէական մի գըթածութիւն կըլինի խիստպէս:

Գիդ. Ոչ, ոչ, շներ հարկաւոր չեն այստեղ, մանաւանդ այս միջոցում:

Մարքիդ. Շատ անգութն ես:

Գիդ. (Խօստապէս պահապանին). Էլ բան չունե՞ս ասելու, ծերուկ:

Սօսկ. (անհամարձակ գլուխը քորում է). Մի բան էլ կայ:

Գիդ. Ի՞նչ կայ:

Սօսկ. Կռիւններ է լինում:

Գիդ. Գաղտնի որսո՞ւմ են, փայտերդ գողանո՞ւմ են:

Սօսկ. Ի՞նչ ասել կուզէ, սրարապ չեն նստում:

Գիդ. (ուրախ). Իհարկէ, դուն էլ արձանագրում ես հօ, հաւատացած եմ:

Սօսկ. Ա՛խ, սրարոն Մարքիդ, հիւսնդ եմ այդ բաներից, ամեն անգամ, երբ գանգատ եմ տալիս, ուզում եմ հրացանովս ինձ սպանել:

Գիդ. Ինչի՞ համար:

Սօսկ. Որովհետեւ... (չէ համարձակում, չետոյ կատաղութեամբ). Որովհետեւ ժանդարմի պաշտօնը ինձ ձանձրացնում է, մանաւանդ որ որսանենգութիւնը արիւնխ մէջն ունիմ, և այս նշանակը, այստեղ, կրճ. քիցս որ կախել էք և որի վրայ գրւած է „Օրէնք“ կարմրած երկաթից աւելի սաստիկ է այրում կաշիս:

Գիդ. Բայց, թշւառական, դու ուզում ես ուրեմն բանսը գնալ, ինչպէս հայրդ, քո եղբայրները... Անտու-

ան հօրեղբորդ պէս ուզում ես մի ճահճում սասկիել գըլ-
խիդ մի գնդակ ստանալով:

Սօսկ. Այո, իրաւունք ունէք, այդ ամենը ես էլ
միտք արի, ասի, բայց ի՞նչ էք ուզում: Ես փորձեցի...
Չեմ կարող, չեմ կարող:

Մարքիզ. Բայց վերջապէս, խեղճ' իմ Սօսկեօր, ի՞նչ
գւարձու թիւն կարելի է գտնել այդ թախառական, թըր-
ւառ կեանք վարելում:

Սօսկ. Ա՛խ, տիկին, դուք այնպիսի բանի մասին էք
խօսում, որ չբխտէք.

Մարքիզ. (Փափտելով). Ճշմարիտ որ:

Սօսկ. Եթէ գիտենայիք ի՞նչ բան է անտառում
գիշերային արշաւանքը, տեսնել ցոլացող հրացանը, որ
մեզ որոնում է, գետնատարած պառկել, դարսնել, գի-
տել ականջները տնկման և յետին թաթերի վրայ նըս-
տած նապաստակի պէս: (Իր ձեռներով կատարում է նա-
պաստակի ձևերը): Աղաչում եմ, պարոն Մարքիզ, գտէք
ձեզ համար մի ուրիշ պահապան, ես էլ չեմ կարող, շատ
եմ նւագում, մեռնում եմ: Մերակէտի պէս եմ եղել:

Դիդ. Հապա կ'ի՞նդ: Նա ի՞նչ է ասում այդ մասին:

Սօսկ. Կ'ի՛նս... Նա էլ մի Սօսկեօր է, դուք գիտէք,
Անտառան հօրեղբոր աղջիկը... Բան ասեմ, անցեալ գի-
շեր վրայ հասայ, նա իր երկու տղերանց հետ նապաս-
տականոցում որդայթ էր լարում... Պահապանի կինը և
երկու որդիքը... որ նրանց արիւնի մէջ կայ այդ:

Դիդ. Ուրեմն, կարծում ես չէ՞ կարելի մի այն տե-
սակ անել... Ասա ճշմարտաբար, ձեռքդ խղճիդ վրայ
դրած... այդ նշանակի վրայ, որ տակաւին կրում ես:

Սօսկ. Ճշմարիտ... ոչինչ:

Դիդ. (բարեկամաբար), 'Ի՛հ հ կորիւր, անասուն... Յետ
տուր նշանակը, նենգիւր որսը... բայց չըձեռքակալես:

Սօսկ. (Յուզւած). Ա՛խ, շնորհակալ եմ... (Համբու-

բում է նրա ձեռքը, յետոյ ողջունելով, բուրբովին ուրախ)։
Պարոն, տիկին անհասարակ... (Դուրս է գնում)։

Դիզ. (Չափն տալով նրան). Սպասիր, միասին գնանք...
Պէտք է հաշիւդ վերջացնել տամ... (Մարքիզուհուն). Ահա այս էլ քեզ մի ժառանգական... Եւ առանց պաշտպանողական միջոցի, նւիրւած է, իբրև վայրենի կենդանի, լը ցեղին յատուկ բոլոր բնազգներին... Կարծում ես թէ խանգարւած է, նա էլ։ (Դուրս է գնում խորքից, հետևելով պահապանին)։

ՏԵՍԻԼ Ե.

Մարքիզ ու ՚յին միայնակ.

Մարքիզ. Իսկ դուն, խեղճ երեխայ, դուն էլ բաւականին խանգարւած ես... Շարունակ միւսնոյն գաղափարը գլխի մէջ... Ժառանգականութիւն և ինչ որ քեզ սպառնում է... Ոչ... ոչ... անկարելի է, պէտք է հեռացնել որդուս այն բանից... Սակայն, եթէ Հօրնիւսը կամենար... Մենք երկուսս կարելի է կրկարողանայինք... բայց միջոցն այն սատիճան սարսափելի է, երբէք նա չի համաձայնի... Նա բաւականաչափ չէ հաւատում վտանգը, չէ տեսնում, ինչպէս ես, թէ ցնորքը ինչպէս է սաստկանում դժբախտ որդուս աչքերում... Ի՞նչպէս համոզել նրան։ Ի՞նչ կերպով ապացոյցներ տալ նրան։ (Նայում է շուրջը). Միայն գիտենայի թէ իրտեղ է պահում Դիզիէն իր գարշելի գրքերը... Իր փիլիսոփաները, ինչպէս ինքն ասում է... եթէ մի ձեռքս կրնկներ... (Նայելով գրադարանում). Այն ժամանակ Հօրնիւսը ինձ կըհաւատար... և կարելի է կրկամենայ էլ... (փակում է գրադարանը). Չէ, այստեղ չըկայ... (բացում է մի այլ տեղ, վրդովւած). Այստեղ էլ չըկայ... (Փակում է նորից)։ Ահա, գտայ սեղանի մէջ... (Մտանում է սեղանին, փորձում է բանալ, չէ կարողանում, քաշում է ուժով, երկու ձեռքով, կռացած, գողունի կերպով, համարեա չօքած)։

ՏԵՍԻՒ, 2.

Մարքիզուհի, Հօրնիւս:

Հօրն. (Բանուժ է ուժգին խորքի դուռը և տեսնում Մարքիզուհուն սեղանի յետևը). Ա՛խ, տիկին... ներեցէք:

Մարքիզ. Հօրնիւս:

Հօրն. Կարծուժ էի թէ Գիդիէն այտուդ է:

Մարքիզ. (Տեղից ելնելով, փոքր ինչ ամաչած). Ձէ, ես եմ, բարեկամ, Գիդիէն շուտով կը գայ:

Հօրն. Հրաշք է այս օրուայ եղանակը, մարդու երակները լցուժ է գլարձութեամբ... Բան էք որոնում:

Մարքիզ. Ձէ... ոչինչ... Ա՛խ, սիրելի Հօրնիւս, ի՞նչ կը վնէք եթէ ձեր լու տրամագրութիւնից ինձ մասն հանէիք:

Հօրն. Բայց, տիկին, ձեզ կատեժ ինչ որ այս րուպէիս Գիդիէին ասի, դուրս եկէք, մտէք արձակ օդում: Զւարձութիւնը դուրան է, բաւական է մարդս ուզէ վայելել: Ձեր նշենիներն տակը ամբողջովին ճերմակել է, ուրցն ու նարգոսը բուրում են: Եւ ի՞նչ հրաշալի լոյս...

Մարքիզ. Որդիս չէ տեսնում այդ լոյսը, նա չէ տեսնում ծաղկաթիթ նշենիները... Աւրեմն ի՞նչիս է պէտք այդ փառահեղութիւնը...

Հօրն. Նա կոյր է ուրեմն այժմ, մեր Գիդիէն:

Մարքիզ. Կոյր և խուլ... կորաքամակ, հմաչւած, ընկել է մի չմար գաղափարի ետևից, որի մէջ մաքառում է այն թխկատարի նման, որ տեսայ մի անգամ գրօսարանի մեծ եղևներից մէկի ճիւղերի վրա թռչկատելիս, խելակորոյս, թեատարած, դաչւաչուժ էր կամացուկ վշտալից երգ, որ վերջ ի վերջոյ ճիւղերի փոխարկեց...

Հօրն. Երևի, ծառի տակը մի օձ կար:

Մարքիզ. Յո՛ր... Հմաչւած թռչնակը, վերջին ճիւղն

անելուց յետոյ, թողեց յանկարծ իր փոքր ոտիկները, ծալեց անօգուտ թևերը և թաւալեց ցած և ուղիղ ինչպէս ծանր քար... Ահա, այսպէս է պատահելու որդուս

Հօրն. Ինչպէ՞ս. կարծում է՞ք թէ իր սիրոյ յուշը անհանգստացնում է, այդ աստիճանի պաշարում է նրան:

Մարքիզ. (Գեղեցիկ ժպիտ արհամարական). Մէր... թողէք ի սէր Աստուծոյ: Շատ ժամանակ է, ինչ նա այն մասին այլ ևս չէ մտածում:

Հօրն. Ի՞նչ ուրեմն:

Մարքիզ. Երբ ձեզ ասում էի այդ... Պէտք չէ, որ երեխան իմանայ, սէտք չէ որ նա կասկածի երբէք... Այն օրից ի վեր, երբ այն չարահոգին յայտնել է նրան իր հօր հիւանդութիւնը:

Հօրն. Ի՞նչ կարծում է՞ք թէ հէնց այդ է:

Մարքիզ. Այն օրից սխա՞՛մ՝ որդիս այլ ևս այն չէ: Լաւ նայեցէք թէ ինչպիսի կեանք է վարում... Ի՞նչ չէ գնում երբէք, չէ զւարճանում: Թաքչում է, ամեն ինչ ձանձրացնում է նրան, մի խօսք ասելը նրան ծանրութիւն է պատճառում: Նրա սիրտը, որ այնպէս քնքոյշ էր, կտրում է ամեն բանից, իր շներից ինչպէս որ իր մօրից... Հա՛պա, այն իր մօրից, ձեզանից նոյնպէս, և ամեն բանից:

Հօրն. Բայց ի՞նչի չէք ենթադրում, որ նրա այդպիսի կեանք վարելու պատճառը Մադըլէնի յուշը լինի:

Մարքիզ. (Համբերութիւնը հատած). Մադըլէնը չըկայ այլ ևս: Ձեզ ասում եմ, որ արդէն վերջացել է այդ բանը:

Հօրն. Վերջացել է. վերջացել է: Ահա թէ ի՞նչ ասել է մայրական նախանձ: Սո, ընդհակառակն եմ տեսնում ձեր յայտնած մտքերի մէջ. յարատև կրքի նշան, առողջ բոյսի տոկունութիւն, որը կտրող է բուսնել այս հողի վրա... Մտախոհ է, համաձայն եմ... մեզանից հե-

ուացած է... Արովհետեւ նրա վրայ է մտածում միայն... Ամբողջ ժամանակ այտեղ փակւած է մնում... Բայց չըկայ այտեղ մի կարտիք, մի աւարկայ, որը յիշեցնելիս չըլինի նրա մասին...

Մարքիզ. Այ, ոչ: Գիւղիէն չափազանց հպարտ է: Այն օրից ի վեր, երբ իմացաւ, որ նա էլ չէ ուզում իրեն...

Հօրն. Ի հարկէ, նա հպարտ է. հէնց այդ պատճառով էլ նա մերժում է, նա տանջում է... և նա կը բժշկուի: (Գիտաւորութեամբ). կը բժշկուի:

Մարքիզ. Այո, եթէ ձեր ասած հիւանդութիւնը լինի... Եթէ սէրը լինի, բայց աւանդ, այն աստիճան համոզած եմ... (Մօտենալով սեղանին). Այտեղ եկէք, դուք ուժեղ էք, բացէք այս գզրոցը, բացէք այդ, ես չը կարողացայ:

Հօրն. (բանալով գզրոցը). Որքան դժւար է:

Մարքիզ. (Գզրոցից հանելով բժշկականութեան գրքեր, որոնց վերնագիրները կարդում է կարգով). «Նրեխաների խելագարութիւն» — (Բացում է մի այլ գիրք. Ահա, առէք. ահա մի գիրք, որ նշան դրած տեղը բացի: (Կարդում է). «Հետևապէս խելագարի որդին ենթարկւած է խելագարութեան...» (Գցում է գիրքը մի կողմը), Խելագարութիւն, խելագարութիւն, շարունակ խելագարութիւն: Կասկածում էք դարձեալ: Եւ եթէ գիտենայիք թէ սրբան ուրիշ ապացոյցներ կան, այն հարցմունքները, որ իր հօր մասին անում է, բժիշկներին այցելածները:

Հօրն. Լաւ, ամենը ինչ որ դուք նրան ասում էք, այն բոլորը, ինչ որ նա իմանում է բժիշկներից, այդ բոլորը նրան հանգստացնելու համար է:

Մարքիզ. Գուք լաւ էք տեսնում, որ չէ. նա միայն մտածում է իր հօր վրայ և սարսափելի ցաւի ժառանգականութեան մասին:

Հօրն. Լաւ, ընդունենք որ... Թնչից էք վախում դուք:

Մարքիզ. Ինչից միշտ վախել եմ, ամբողջ կեանքումքս, հակառակ ձեր ցանկութեան: Նւ ինչից դուք վախում էք, դուք ինքներդ, խելա... (խօսքը չէ արտասանում):

Հօր. Մհ, միք ասի այդ, տիկին:

Մարքիզ. Բայց պէտք է, անստաճառ, որ ասեմ, քանի որ այդ խկն է: (Չայնը ցածացնելով). Աւանդ, խեղճ բարեկամս, ես լաւ եմ ճանաչում այն լուծիւնը, այն մթնումն... այն թմբածուծիւնը, այն անտարբերութիւնը դէպի ամեն բան: (Աւելի ցած ձայնով). Հայրն էլ հէնց այսպէս սխեց... Նւ երկու օր է, որ ցաւը աւելանում է: Նկասե՛լ էք, երէկ երեկոյին, այս առաւօտ, նրա վրդովմունքը, կոպտութիւնները, նրա անկապ խօսքերը...

Հօրն. (Խօսք չըզտնելով). Տիկին, սակայն նա երգում էր այս առաւօտ, ես լսեցի նրան:

Մարքիզ. Այո, ինչպէս թխկատարը, վերջին ճչից առաջ:

Հօր. Վերջապէս... Թնչ անել:

Մարքիզ. Հեռացնել նրա մտքից այն գաղափարը, ինչպէս որ լինի:

Հօրն. Ի՞նչ միջոցով:

Մարքիզ. Մի միջոց կայ. գլխումս մէկ միտք ծնւեց, բաւական ժամանակ է, ի շնորհս նրա, խեղճ երեխայ, որ ինքն էլ չի կասկածում:

Հօրն. Ի շնորհս նրա:

Մարքիզ. (Լուծիւնից յետոյ նայում է երկար շուրջը վախով). Ննթադրենք, որ նա իմանում է յանկարծ... Թէ ինքը իր հօր գաւակը չէ:

Հօր. Ի՞նչպէս:

Մարքիզ. Այն ժամանակ էլ ոչ ժառանգականութիւն, էլ ոչ այն—սարսափելի գաղափարը:

Հօրն. Սակայն, տիկին...

Մարքիզ. Ար նա խելագարի ծնունդ չէ...

—(Լուռութիւն).—

Հօրն. (Մարսափած, համարեա կակազելով). Բայց որպէս զի Գիդիէն մարքիզ դ'Ալէնի գաւաիը չըլինի...

Մարքիզ. Այո, ի՞նչ կայ որ: Ես ջահիլ էի, ես գեղեցիկ էի, խեղճ մարդս չըկար այլ ևս...

Հօրն. Ո՛հ.

Մարքիզ. Վէպը այնչափ էլ անհաւատալի չի լինի, իրաւ.

Հօրն. Վէ՛յ այն մարդուն, տիկին, ով այդ կասի ձեր որդուն... Նախ որ, նա չի հաւատայ այդ:

Մարքիզ. Ընդհակառակն, ես մէկին ճանաչում եմ մէկին, որ կարող է ամեն բան ստել նրան, մի մարդ, որին բոլորովին կըհաւատայ.

Հօրն. Ո՞վ արդեօք:

Մարքիզ. Գուք:

Հօրն. Երբէք... Երբէք, այդպիսի դարշելի սուս...

Մարքիզ. Այո, Հօրնիւս, պէտք է, պէտք է այդ... Միակ միջոցն է այս, որով կարելի է նրան հանգըստանցնել.

Հօրն. Հանգստանցնել... Բայց այս մի նոր տանջանք կը սրտոճառէ նրան. Գուք յախշտակում էք նրանից իր մօր հպարտութիւնը և այդ դուք էք:

Մարքիզ. Այո, ես եմ, նրան խելագարութիւնից փրկելու, նոյն իսկ մահից, կարելի է: (Լուռութիւն. Հօրնիւսը քանի մի քայլ է անում. վերջը դիմում է Մարքիզուհուն).

Հօրն. (Յած ձայնով; դողդոջուն և խուլ կատաղութեամբ). Եւ ո՞վ է այն անձը, որին պատուել էք այդ երեւակաջակիան յանցագործութեամբ: Ի՞նչ անուն տամ, եթէ

ձեր գաւակը հարցնելու լինի այդ... Ի՞նչ ասացոյց կարող եմ տալ:

Մարքիզ. Ասացո՞յց, ոչ մէկը չըկայ:

Հօրն. Կենդան է նա, մեռած է:

Մարքիզ. Կենդան է, կենդան... Որովհետև ասացոյցներ չըկան և դժար է երեխային համոզել, պէտք է, որ հայրը երևի և խոստովանուի:

Հօրն. Սակայն ո՞վ կըհամաձայնի երբէք... Գտնել էք դուք մէկին:

Մարքիզ. (Յած ձայնով). Այո: (Նայում է նրան այնպիսի խոսուն աչքերով, որ ծերունին քանի մի քայլ չես է ընկրկում):

Հօրն. (Լալու շտի յուզւած). Ո՛հ, արիւն... (Մածկում է իր դէմքը գողգոջ ձեռքերով):

Մարքիզ. Բաւ է, Հօրնիւս... այս արդէն համարեա սուտ չէ:

Հօրն. (Գլուխը բարձրացնելով). Ի՞նչպէս:

Մարքիզ. Իբր թէ դուք չէք սիրել ինձ միշտ:

Հօրն. (Հպարտաբար). Բայց ձեզ երբէք ասած չեմ այդ, ոչ ձեզ և ոչ մի ուրիշին աշխարհիս երեսին:

Մարքիզ. Գուք պէտք չունէիք այդ ինձ ասելու, ես այն լու էի տեսնում... Եւ հէնց այդ սէրն էր հաստատ և ազնիւ, որին հաւատալով յանձնեցի որդուս ձեզ այնպիսի հաստատ վտահուլթեամբ, որ ձեր տածած անյոյս սէրը մի առաքինի կնոջ վերաբերմամբ, որպիսին ես էի, կըփոխարկէք քնքուլթեան դէպի երեխաս... Եւ չեմ սխալուել, Հօրնիւս:

Հօրն. Ուրեմն, ի՞նչի էք կամենում, որ ես խորտակեմ, արատաւորեմ կեանքիս մէջ ունեցած գեղեցիկը, մաքուրը, որ ինձ փառաւորում է, հպարտացնում է:

Մարքիզ. Այս որդուս կեանքն է, մեր որդու կեանքը, որ ձեզ խնդրում եմ... Հաւատացնում եմ ձեզ, որ

այս միայն կարող է նրան փրկել... Հօրնիւս... Իմ բարեկամ:

Հօրն. (Խեղդւած ձայնով), Ոչ, տիկին, չեմ կարող այդ... Այդ սարսափելի խօսքերը կոկորդիս մէջ կը մնան: Չէ, չէ, ոչ այդ: Ուժեցս վեր է:

Մարքիզ. Լաւ, եթէ այդ շատ դժւար է ձեզ, ես ինքս կ'ստեմ:

Դիդ. (Գուրբ աղաղակելով). Գնուը, դուռը բացէ՛ք բոլորովին:

Մարքիզ. Ա՛խ, նա եկաւ: (Հաւաքում է դիւանի վրայ թափած գրքերը և պահում դզրոցում). Միայն խնդրում եմ ձեզ, որ ինձ սուտ չըհանէք:

Հօրն. (Դժւարութեամբ). Ես կը փորձեմ, տիկին:

ՏԵՍԻԼ է.

Նրանք, Դիդի:

Դիդ. (Ներս է մտնում անգղակ, հերարձակ, տարօրինակ կերպով վրդոված, առանց ուշադրութիւն դարձնելու մօրը և Հօրնիւսին, փնտրում է իր շուրջը դահլիճում, բացում է դաշնամուրը, գրասեղանի մի մասը, գրքարարանից վերցնում է քանի մի ճերմակ կազմով գեղեցիկ գրքեր և դնում փոքրիկ սեղանի վրայ. այս ամենը անում է տենդային և յուզւած կերպով):

Հօրն. Ա՛խ, Տէր Աստուած, ի՞նչ է պատահել քեզ:

Դիդ. (Անկարծի եկած, բայց շարունակելով). Գնն ես, Հօրնիւս... Քեզ չըտեսայ:

Մարքիզ. Բայց, ի՞նչ ունես, որդի. ի՞նչ ես անում:

Դիդ. Թ՛ող... Թ՛ող... ես պատրաստում եմ... Յետոյ... ես քեզ կ'ստեմ: (Մայրը և Հօրնիւսը սարսափած նայում են):

Հօրն. (Մի կողմը). Ճշմարիտ որ, զարմանալի կացութեան մէջ է:

Մարքիզ. (Գաղարեցնում է նրան ձեռքից բռնելով).
Գիզի՛հ, Գիզի՛հ, լսիր...

Գիզ. (Սնուշադիր). Մայրիկ...

Մարքիզ. Լսիր ինձ... Մի լաւ նայիր երեսիս: (Գրք-
կում է ամուր):

Գիզ. Փառելով). Դեհ, նայում եմ քեզ:

Մարքիզ. Ինչ որ ուզում եմ քեզ ասել, այնպէս ծա-
նըր է, այն աստիճան սարսափելի է մօրդ համար և
խիստ կարևոր քեզ համար. (Հօրնիւսը ընկրկում է). Այն-
պէս չէ՞, սիրելի Հօրնիւս:

Հօրն. (Շատ ցած ձայնով). Այո, այո...

Մարքիզ. (Գիզիէին). Յիշում ես, մի անգամ խիստ
վշտագնած բոպէիդ, կասկածելով ընտանիքիդ անւան
պատուաւորութեան և անարատութեան վրա, դուն ինձ
հարցրիր հօրդ կեանքի մասին...

Գիզ. Յիշում եմ, իրաւ է:

Մարքիզ. Այն օրից ի վեր, որդի, սրտիս վրա քարի
նման ծանրացել է խղճի մի խաչթ, որից անպատճառ
պէտք է ազատւեմ... Հօրդ մասին բան չունէի ասելու:
Անբիծ կեանք, անարատ պատուաւորութիւն... Բայց ի՞նչի
հարց ու փորձդ այսօրիդ դաղարեցրիր: Մօրդ, պէտք էր
մօրդ հարցնէիր... Այն արատը, որ դու փնտրում էիր,
կարելի է այնտեղ էր... (Յածացնելով ձայնը). մայրդ
կըխօստովանւէր իր մեղապարտութիւնը:

Գիզ. (Գոչելով և սրտագին ծիծաղով). Մեղմալարտ
ես, դուն... Եւ ի՞նչ է յանցանքդ, խեղ՛ սիրելի մայրիկս:
Այդ այնպիսի մի բան է, որ ոչ ոք չէ կարող հաւատա-
ցնել ինձ երբէք:

Հօրն. (Յաղթանակելով). Ո՛հ, ես հաստատ համոզ-
ւած էի, որ նա ձեզ չի հաւատալ... Նրան դուք չէ՞ք
ճանաչում ուրեմն, ձեր Գիզիէին:

Գիզ. (Ափի բերան է անում մօրը, որ ուզում է

խօսել). Սուս եղիւ... Սուս եղիր: (Հօրնիւսին). Բայց վեր-
ջապէս, ի՞նչ է նշանակում...

Հօրն. Մի սուտ, որդի, հերոսական մի ստակօտութիւն,
որով մայրդ փորձում է հեռացնել գլխիցդ այն սարսա-
փելի գաղափարը, որը քեզ անհանգստացնում է, ցաւի
ժառանգականութեան երկիւղից...

Դիդ. (Ուրախ). Բայց, փնռք Աստծուն, ես այդ եր-
կիւղը չեմ ունեցել երբէք... Առաջին, այն պատճառով,
որ խելքս բան է կտրում լաւ և աչքերս էլ լաւ են տես-
նում: Ես թալուկ ասած բանը չբռնեմ: Երկրորդ, որ
ես չեմ ընդունում կուրօրէն ներկայ գիտութեան նոր
դաւանանքը:

Հօրն. Լաւ ես անում փոքրիկս:

Դիդ. Ես համաձայն եմ քեզ հետ, իմ ծեր վարժա-
պետ, որ արիւնի վատ յատկութիւնների, ժառանգակա-
նութեան դէմ մաքաւելու համար, մարդս կրում է իր
Ֆէջ բարոյական և ներքին ոյժեր, որով եթէ հա կամենում
է, կարող է ազատ կացուցանել այն ճակատագրական
օրէնքները:

Հօրն. Ի հարկ է: Եւ հէնց այդ է մեզ անբան ա-
նասունից զանազանողը:

Մարքիդ. Ի՞նչի ես ուրեմն, որդիս, այդպիսի կեանք
վարում, ի՞նչի համար է այդ աղետալի ընթերցանութիւ-
նը, որով քեզ ոչնչացնում ես, գաղտնի այցերդ այն մար-
դոց, որոնք հօրդ ճանաչել են:

Դիդ. Ամենահասարակ սլառճառով: Այն հարց ու
փորձը, որով մեզ սպառնացել էին, ես ինքս կատարեցի
և լրջօրէն:

Մարքիդ. Տեսնում ես:

Դիդ. Ես ստիպւած էի այն հարց ու փորձն անել,
մայրիկ... Ինձ անհրաժեշտ էր ապացոյց, որ ես ունեմ
այժմս և օրինապէս վաւերացրած, որ ոչ մի վտանգ

չըկայ, ոչ թէ ինձ համար—ես չատ հանգիստ էի, ասում եմ դարձեալ—այլ այն անձի համար, որը մի օր կը համաձայնի ամուսինս լինել, և որը հէնց այս ժամիս... (Ձայնը բարձրացնելով). Մայրիկ, այս առաւօտ ասում էի քեզ որ բաղտս մօտ է, որ ես սպասում էի... Ահաւասիկ... նայէր:

ՏԵՍԻԼ Ը.

Նրանք, Մաղըլէնը խորքում, բարձրանում է սանդուղքներով:

Մարքիզ. Մաղըլէնը:

Դիզ. (Նետում է դէպի ջահիլ աղջիկը), Եկէք, եկէք, թանգագինս... Տունը սպասում է, ամեն բան տեղն է... Մեր օջախում... Արդէն մեզ մօտ էք:

Սաղըլ. (Խիստ յուզւած դիմելով դէպի Մարքիզուհին), Թոյլ տւէք, ձեզ դարձեալ մայր անւանելու:

Դիզ. (Իր մօրը). Դէհ, համբուրիւր դրանս Ն[թէ գիտենայիր թէ ի՞նչպէս վեհանձն էր, (Մարքիզուհին ընդգրկում է ջահիլ աղջկան):

Մարքիզ. (Ուրախ), Այո, կը համբուրեմ... գոնեա ասէք ինձ թէ ինչ է պատահել:

Մաղըլ. Այն է պատահել, թանգագին մայրիկ, որ նրան ասելուց յետոյ, թէ իրեն այլ ևս չեմ սիրում, ամբողջ գիշեր լաց եղայ նրան սրտաճառած վշտի աւրթով: Տեսնում էի նրան շարունակ դիմացս, ինչպէս վաճառք մտնելու միջոցին, այնպէս գունատ, դողող շրթունքներով, Խեղճ բարեկամ. (Սեղմւելով տիկին դ'Ալէնին). Ո՛հ, աղաչում եմ, մայրիկ, պահեցէք ինձ ձեր սրտի վրայ սեղմած). Այսպէս աւելի լաւ կարող ե'ի նրան ասել, և որը դուք էլ պէտք է լաւ լէք ամենը: (Յուզւած բայց շատ հաստատ ձայնով). Դիզիէ, իմ անգին Դիզիէ, կեանքս բաւելու չէ յայտնել, ցոյց տալ ձեզ անձնւիրութիւնս,

խանդս, այն բոլոր դաժան վշտերի փոխարէն, որ ես ձեզ պատճառեցի, և ինչպէս դուք այնտեղ՝ Նիցցայի արևին տակ, ես էլ այտեղ կուզենայի տեսել բարձրաձայն ամբողջ աշխարհին, որ դուք իմ ամուսինս էք, իմ անգին մարդս, որին սիրում եմ ցնորւածի պէս, հոգուս ամբողջ կարողութեամբ... (Թագչում է Մարքիզուհու գրկում, այն ինչ Դիդիէն յարձակելով նրա ձեռքի վրայ համբուրում է բազում անգամ):

Մարքիզ. Բայց այդ բոլորից ես չեմ հասկանում թէ ինչի՞ էք ինձանից գաղտնի պահել... Չարաճճիներ, այսպէս երկար ժամանակ ծածկել ձեր մօրից:

Մաղը. Կս կամեցայ այդպէս: Մեր բազտը դրանից էր կախուած: Սրևակայեցէք, որ ես ընկել էի մի չարահոգի և վարպետ մտրդու ձեռք, որը շատ էր ցանկանում օժիտս. օրէնքի գորութեամբ նա կարող էր հանել ինձ վանքից տանել, Աստուած գիտէ, սւր և որոգայթ լարել մեր Դիդիէին... Ահա թէ ինչ պատճառով դիտաւորութիւնս գաղտնի եմ պահել: Եւ միայն այսօր առաւօտը, օրիորդ Բէմօնդին, դառնալով չափահաս և պատասխանատու իր արարքների, յայտնել է պարոն Խորհրդականին, որ չէր սպասում, իր մօտալուտ ամուսնութիւնը մարքիզ Դիդիէ գ'Ալէնի հետ: Կրներէք ինձ, մայրիկ:

Մարքիզ. Ո՛հ, անգին աղջիկս:

Դիդ. Սրան ի՞նչ կասես, ծերունի Հօրնիւս:

Հօրն. Խոչնդոտ, ի հարկ է, Աստուածային խոչնդոտ: Զահէլ աղջիկը կատարեալ կ'ին է դառել...

Մարքիզ. Այո, բայց մինչ պսակադրութիւնը, ի՞նչ պէտք է անենք այս մեր փոքրիկ հարսին:

Դիդ. Ի՞նչպէս:

Մարքիզ. Տէր Աստուած, նրան հճ չեմ կարող պահել այստեղ...

Մաղլ. (Ժպտելով). Օ՛, ես արդէն այդ մասին մը-
տածել եմ:

ՏԵՍԻԼ Թ.

Նրանք, հոյս պահարմնապետունին:

հոյս պահար. (Ուղիղ կանգնած սանդուղքի վրայ,
կապույտ դէշրայով և ճերմակ գլխնոցով. ձեռքերը կրօ-
նաւորի ձեռով միմեանց վրա դրած) Օրիորդ Մաղլէն...
գնանք:

Մաղլ. Այո՛, քոյրիկս... (Մարքիզուհուն). Այ, տես-
նում էք, ես մինչև պսակադրութիւնս դարձեալ վան-
քումն եմ մնում:

Մարքիդ. (Խնդալով՝ Գիգիէին). Մի վհատի՛ր, որդիս...
կը գնաս նրան տեսելու:

Հօրն. Շատ էլ երկար չենք թողնի նրան այնտեղ:

վ ար ա գ ո յ ր ւ



